

Բ Ա Յ Ա Տ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

«Հայաստանի Հանրապետության 2005 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է ՀՀ 2005 թվականի պետական բյուջեն հաստատել՝ եկամուտների գծով (ներառյալ պաշտոնական տրանսֆերտների տեսքով ստացվող մուտքերը)՝ 327.9 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 375.4 մլրդ դրամ, իսկ դեֆիցիտը՝ 47,5 մլրդ դրամ:

Հարկ է նշել, որ ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի գումարը՝ 47.5 մլրդ դրամ, ՀՀ 2004 թվականի պետական բյուջեով հաստատված և ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքներով փաստացի ձևավորված համադրելի ցուցանիշների նկատմամբ նախատեսված է համապատասխանաբար 3.7 մլրդ դրամ նվազեցումով և 27.2 մլրդ դրամ ավելացումով: ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի և 2005 թվականի ծրագրավորվող համախառն ներքին արդյունքի (այսուհետև՝ ՀՆԱ) տոկոսային հարաբերակցությունը կանխատեսվում է ՀՆԱ-ի 2.34 %-ի չափով, 2004 թվականի համար ծրագրավորված և 2003թվականի փաստացի ցուցանիշների՝ համապատասխանաբար 2.8%-ի և 1.3 %-ի դիմաց: ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի ֆինանսավորման համար նախատեսվում է ներգրավել շուրջ 93.6 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով վարկեր, որոնց զգալի մասը կտրամադրվի Համաշխարհային բանկի կողմից (ներգրավվող վարկերի տրամադրման ժամկետների և տոկոսադրույքների մասին տվյալները ներկայացված են սույն բացատրագրի N 1 հավելվածում և N 18 աղյուսակում):

Մ Ա Ս I

Ե Կ Ա Մ ՈՒ Տ Ն Ե Ր Ի Կ Ա Ն Խ Ա Տ Ե Ս ՈՒ Մ

Հայաստանի Հանրապետության 2005 թվականի պետական բյուջեի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ) եկամուտների (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները) ընդհանուր գումարը ծրագրվել է 327.9 մլրդ դրամի չափով կամ 2004 թվականի համար հաստատված 280.6 մլրդ դրամ¹, սպաստ-դական 295.3 մլրդ դրամ և 2003 թվականին փաստացի ստացված 241.7 մլրդ դրամ² մուտքերի համեմատությամբ համապատասխանաբար 16.9%-ով, 11.0%-ով և 35.7%-ով ավելի: Ակնկալվում է, որ 2005 թվականին բյուջետային մուտքեր/ՀՆԱ հարաբերությունը կկազմի 2004 թվականի սպասողա-կանի մակարդակին հավասար՝ 16.2%, 2004 թվականի ծրագրային 15.4%-ի³ և 2003 թվականի փաս-տացի 14.9%-ի դիմաց: 2005 թվականի բյուջետային մուտքերի կազմում մեծ տեսակարար կշիռ կունե-նան հարկերն ու պետական տուրքերը՝ 93.6%, ոչ հարկային եկամուտները կապահովեն տարեկան բյուջետային մուտքերի 1.6%-ը, իսկ կապիտալի գործառնություններից ստացվող եկամուտներն ու տրանսֆերտները՝ համապատասխանաբար 1.7%-ը և 3.1%-ը:

ՀՀ 2003-2005թթ պետական բյուջեների կառուցվածքն ըստ եկամուտների հիմնական խմբերի ներկայացվում է հետևյալ գծապատկերով.


¹ Այստեղ և այսուհետ որպես 2004 թվականի հաստատված ցուցանիշներ ներկայացվում են «Հայաստանի Հանրապետության 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված և նույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով ՀՀ կառավարությանը վերապահված իրավասությունների շրջանակներում ավելացված գու-մարների հանրագումարը:

² Համեմատվող ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով այստեղ և այսուհետ ՀՀ 2003 թվա-կանի պետական բյուջեի փաստացի մուտքերի կազմում ներառված չէ փաստացի ստացված 50.3 մլրդ դրամ մուտքերը, այդ թվում՝

2. 2. • ՀՀ պետական եկամուտների նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նյութական խրախուսման և սոցիալական զարգացման ֆոնդի փաստացի գումարը՝ 2.6 մլրդ դրամ,
3. 3. • «ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ, 12-րդ մասերով նախատեսված՝ ՀՀ 2003 թվականի պետական բյուջեից կատարված ծախսերի գծով ստացված պետական տուրքը՝ 1.0 մլրդ դրամ,
4. 4. • «Լինսի» հիմնադրամի գծով ստացված 39.8 մլրդ դրամ մուտքերը,
5. 5. • «ՀՀ 2003թ.պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներով չնախատեսված պարտավորությունների դիմաց նույն օրենքի 11-րդ հոդվածի 20-րդ մասի համաձայն պետական բյուջեից ֆինանսավորված հարկային պարտավորությունների մարումները՝ 5.2 մլրդ դրամը,
6. 6. • նախորդ կետում նշված գործարքի մասով վճարած տուգանքները՝ 1.0 մլրդ դրամը,
7. 7. • «ՀՀ 2003թ.պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 18-րդ մասով սահմանված մարդասիրական և բարեգործական ծրագրերի շրջանակներում՝ ազատ շրջանառության մաքսային ռեժիմով ներմուծվող ապրանքների դիմաց գանձված ավելացված արժեքի հարկը՝ 0.7 մլրդ դրամը:

³ Այսուհետ ՀՆԱ-ի նկատմամբ 2004 թվականի համար հաստատված ցուցանիշների հարաբերության հաշվարկ-ներում օգտագործվել է 2004 թվականի ՀՆԱ-ի կանխատեսվող մեծությունը:

Գծապատկեր 3.1. ՀՀ 2003-2005թթ պետական բյուջեների կառուցվածքը



ՀՀ 2005-2007թթ պետական միջնաժամկետ ծախսային ծրագրով (այսուհետև՝ ՄԺԾԾ) 2005 թվականի համար պետական բյուջեի եկամուտները (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները) նախատեսվել են 311.8 մլրդ դրամի չափով:

ՄԺԾԾ-ով հաստատված և Նախագծով առաջարկվող եկամուտների տարբերությունների հիմնավորումները կներկայացվեն ստորև՝ եկամուտների հիմնական խմբերի նկարագրությանը վերաբերվող սույն բացատրագրի առանձին բաժիններում:

Աղյուսակ 3. 1 ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի եկամուտների՝ ՄԺԾԾ-ով հաստատված և Նախագծով առաջարկվող գումարները

Եկամտատեսակը	մլրդ դրամ		
	ՄԺԾԾ-ով հաստատված	Նախագծով առաջարկվող	
Ընդամենը եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ, այդ թվում՝	311.8	327.9	16.1
Հարկային եկամուտներ և պետական տուրք	297.4	307.0	9.6
Ոչ հարկային եկամուտներ	5.2	5.3	0.1
Կապիտալի գործառնություններից ստացվող եկամուտներ	0.3	5.5	5.2
Պաշտոնական տրանսֆերտներ	8.9	10.1	1.2

Ի - Ա . Ը Ն Թ Ա Ց Ի Կ Ե Կ Ա Մ Ո Ւ Տ Ն Ե Ր

Նախագծով ընթացիկ եկամուտները (հարկային եկամուտներ, պետական տուրքեր և ոչ հարկային եկամուտներ) ծրագրվել են 312.3 մլրդ դրամի չափով, որը 2004 թվականի համար հաս-

տատված, սպասողական և 2003 թվականի փաստացի⁴ համապատասխան մակարդակները գերազանցում է 47.0 մլրդ դրամով, 38.8 մլրդ դրամով, 84.5 մլրդ դրամով:

2005 թվականի ընթացիկ եկամուտների ծրագրային գումարը կազմում է տվյալ տարվա համար կանխատեսված ՀՆԱ-ի 15.4%-ը՝ 2004 թվականի հաստատված 14.5%-ի, սպասողական 15.0%-ի և 2003 թվականի փաստացի 14.0%-ի դիմաց:

Ընթացիկ եկամուտների գերակշիռ մասը՝ 98.3%-ը կամ 307.0 մլրդ դրամը կազմում են հարկային եկամուտները և պետական տուրքերը, իսկ մնացած 1.7%-ը կամ 5.3 մլրդ դրամը՝ ոչ հարկային եկամուտները:

2003 թվականի տարեկան փաստացի, 2004 թվականի սպասողական, 2005 թվականի ծրագրված ընթացիկ եկամուտների համեմատական վերլուծականն՝ ըստ առանձին եկամտատեսակների ներկայացված է սույն բացատրագրի N 1 աղյուսակում:

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

Հարկային եկամուտները և պետական տուրքերը Նախագծում ծրագրվել են 307.0 մլրդ դրամի կամ ընթացիկ տարվա հաստատված մուտքերի 118.7%-ի, սպասողականի 115.9%-ի և 2003 թվականի փաստացի⁵ 138.9%-ի չափով:

ՄԺԾԾ-ով հարկային եկամուտները և պետական տուրքերը նախատեսվել են 297.4 մլրդ դրամի չափով: Հարկ է նշել, որ այս ցուցանիշի և Նախագծով առաջարկվող 307.0 մլրդ դրամի գումարային տարբերությունը, կանխատեսման կիրառված մեթոդաբանության անփոփոխության պայմաններում, պայմանավորված է օգտագործված մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների նորացմամբ, որն իր հերթին արդյունք է փաստացի տվյալների բազայի թարմացման:

2005 թվականին տնտեսության զարգացման կանխատեսվող սցենարը բնութագրող մակրոտնտեսական առանձին ցուցանիշներ էական ազդեցություն կունենան հարկային եկամուտների հավաքագրման վրա: Հարկային եկամուտների աճի վրա որոշակի ազդեցություն կունենա առաջիկա տարվա համար իրական ՀՆԱ-ի 8.0% տարեկան աճը և անվանական ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքում ակնկալվող փոփոխությունները. վերջինիս մեծամասամբ հարկազատված մասի՝ գյուղատնտեսության, ավելի քան 70% արտաքին ֆինանսավորման և բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ոլորտներում ստեղծված ավելացված արժեքների և զուտ անուղղակի հարկերի ընդհանուր տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ 2005 թվականին կկազմի 45.8%, 2004 թվականին սպասվելիք և

⁴ Առանց ՀՀ 2003 թվականի պետական բյուջեից կատարված՝ սույն մասի տողատակի 2-րդ ծանոթության մեջ նշված ծախսերի գծով ստացված այն եկամուտների, որոնք հաշվառվում են ընթացիկ եկամուտների կազմում:

⁵ Առանց ՀՀ 2003 թվականի պետական բյուջեից կատարված սույն մասի տողատակի 2-րդ ծանոթության մեջ նշված ծախսերի գծով ստացված այն եկամուտների, որոնք հաշվառվում են հարկային եկամուտների և պետական տուրքերի կազմում: Բացի այդ, տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով, 2003 թվականի փաստացի մուտքերի կազմում ընդգրկվել են նաև ճանապարհային վճարների գծով մուտքերը, քանի որ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի փոփոխության արդյունքում 2004 թվականի հունվարի 1-ից դրանք հաշվառվում են հարկային եկամուտների կազմում:

2003 թվականին արձանագրված 46.0%-ի դիմաց: ՀՆԱ-ի կառուցվածքային փոփոխության նման միտումը կարող է նպաստել նրա հարկունակ մասի աճին:

Հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 2005 թվականի մուտքերի աճի տեմպը առաջանցիկ կլինի ՀՆԱ-ի անվանական աճի տեմպի նկատմամբ (հարկային սահունության գործակիցը⁶ գերազանցում է 1-ը): Հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 2005 թվականի մուտքերը կկազմեն ՀՆԱ-ի 15.1%-ը՝ 2004 թվականի սպասողական 14.5%-ի, 2003 թվականի փաստացի 14.0%-ի⁷ դիմաց:

2005 թվականի հարկային եկամուտները ծրագրելիս օգտագործվել են այն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին հարկատեսակների հարկման բազայի ձևավորման վրա: Մասնավորապես կիրառվել են հետևյալ մակրոտնտեսական ցուցանիշները.

Աղյուսակ 3. 2. 2005 թվականի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները

Ցուցանիշներ	2005 թվական
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	2,028.2
ՀՆԱ-ի իրական աճ	8.0%
ՀՆԱ-ի դեֆլյատոր	3.0%
1 ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը դրամով	535.0
Ապրանքների ներմուծում (մլն ԱՄՆ դոլար)	1,310.0

Ներկայացված մակրոտնտեսական շրջանակում տնտեսության զարգացման կանխատեսվող միտումներից, ինչպես նաև իրականացվող հարկային քաղաքականության առանցքային ուղղվածությունից (պետական եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացում համապատասխան մեխանիզմների կատարելագործման հաշվին) ելնելով՝ առավել կարևորվում է հարկային վարչարարության բարելավումը: Այդ պատճառով, որպես ծրագրային նպատակ, այս գործոնի ազդեցության հաշվին առանձին հարկատեսակների գծով 2005 թվականի համար սահմանվել է հավաքագրումների 6.3% աճ: ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների հավաքագրումն ապահովող հիմնական միջոցառումների ծրագիրն ըստ առանձին տարիների և իրականացնող մարմինների ներկայացված է ՄԺԾԾ-ում:

Այսպիսով, հարկային եկամուտների գծով 2005 թվականի բյուջետային մուտքերը ծրագրվել են՝ հաշվի առնելով երկու հիմնական գործոնների ազդեցություն: Դրանցից առաջինը նախորդ տարիների հավաքագրման ու մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումներն են, երկրորդը՝ 2005 թվականին հարկային վարչարարության բարելավումը և հարկային օրենսդրության հնարավոր փոփոխությունը:

⁶ Հաշվարկվում է որպես հարկային եկամուտների և ՀՆԱ-ի տոկոսային աճերի հարաբերություն:
⁷ Առանց ՀՀ 2003 թվականի պետական բյուջեից կատարված՝ սույն մասի տողատակի 2-րդ ծանոթության մեջ նշված ծախսերի գծով ստացված հարկային եկամուտների այս ցուցանիշը կազմում է 13.6%:

Սույն բացատրագրի առանձին հարկատեսակների վերաբերյալ բաժիններում ներկայացված կանխատեսումների մեթոդաբանությունն ու համապատասխան ծրագրային ցուցանիշները վերաբերվում են 2005 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով մուտքերի՝ ըստ նախորդ տարիների հավաքագրման միտումների և համապատասխան մակրոտնտեսական ցուցանիշների կատարված գնահատականներին:

1. ԱՎԵԼԱՅՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ

Ավելացված արժեքի հարկի (այսուհետև՝ ԱԱՀ) գծով 2005 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 128.9 մլրդ դրամի չափով, որը համապատասխանաբար 24.7 մլրդ դրամով և 11.2 մլրդ դրամով գերազանցում է 2003 թվականի փաստացի⁸ և 2004 թվականի սպասողական մուտքերի մակարդակները:

ԱԱՀ-ի գծով ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նշված մուտքերը ներառում են հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող գումարները, ինչպես նաև բենզինի, դիզելային և ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարներում ներառված ԱԱՀ-ի հաշվարկային գումարները: Բենզինի, դիզելային և ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարները ծրագրվել և ներկայացվում են առանձին:

ԱԱՀ-ի գծով հարկման ընդհանուր ռեժիմով 2005 թվականին հավաքագրման ենթակա բյուջետային մուտքերը գնահատելու համար դիտարկվել է ազգային հաշիվների համակարգի տնօրինվող եկամտի օգտագործման հաշվի «Վերջնական սպառման ծախսեր» հոդվածի փաստացի և մակրոտնտեսական զարգացումների շրջանակում կանխատեսված ցուցանիշները: Վերջնական սպառման ծախսերը նվազեցվել են՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության որոշ ճյուղերում (գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ, առևտուր և հանրային սնունդ) ստեղծված ավելացված արժեքը ոչ լրիվ ծավալով է ենթակա ԱԱՀ-ով հարկման: Հաջորդ նվազեցումը կատարվել է բենզինի, դիզելային և ծխախոտի սպառման հաշվարկային գումարի չափով, քանի որ նշված սարանքատեսակների համար սահմանված է հաստատագրված վճար:

ԱԱՀ-ից ստացվող հաշվարկային մուտքերը հաշվարկվել են՝ գնահատված փաստացի բազայի⁹ նկատմամբ կիրառելով նախորդ տարվա փաստացի դրույքաչափը¹⁰:

Ներմուծումից հարկման ընդհանուր ռեժիմով ԱԱՀ-ի գծով 2005 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսելիս դիտարկվել է ներմուծումը, որի հիման վրա գնահատվել է հարկի փաստացի բազան: Դրա համար 2005 թվականի ներմուծման ծավալը նվազեցվել է թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերի¹¹, հանքահումքային մթերքների¹², ներմուծվող ծխախոտի¹³ կանխատեսումային

⁸ Առանց ՀՀ 2003 թվականի պետական բյուջեից կատարված՝ սույն մասի տողատակի 2-րդ ծանոթության մեջ նշված ծախսերի գծով ստացված ԱԱՀ-ի:

⁹ Այսուհետ՝ «փաստացի բազա» հասկացությունն իրենից ներկայացնում է ՀՆԱ-ի (ներմուծման) տվյալ հարկատեսակի համար հարկունակ մասը:

¹⁰ Փաստացի կամ հաշվարկային մուտքերի հարաբերությունը փաստացի բազային:

¹¹ Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերի ապրանքախմբում մեծ տեսակարար կշիռ է կազմում վերամշակման և հետագայում արտահանման նպատակով ադամանդե քարերի ներմուծումը, որը ԱԱՀ-ով չի հարկվում:

մաքսային արժեքների հանրագումարի չափով: Դրա հետ մեկտեղ հարկման բազան մեծացվել է ապրանքների ներմուծումից գանձվող մաքսատուրքի և ակցիզային հարկի կանխատեսումային գումարների չափով, քանի որ վերջիններս, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի, ներառվում են ԱԱՀ-ի հարկման բազայում:

Ներքին շրջանառությունից հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող ԱԱՀ-ի գծով 2005 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են մնացորդային եղանակով, որպես սպառումից և ներմուծումից գանձման ենթակա ԱԱՀ-ի՝ վերը ներկայացված կանխատեսումային գումարների տարբերություն:

2. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ՝ Ժխախոտի արտադրանքի, ՀՀ ներմուծվող բենզինի և դիզվառելիքի համար

2005 թվականին ժխախոտի արտադրանքի համար գանձվելիք հաստատագրված վճարների հաշվարկի համար նախապես գնահատվել են ՀՀ-ում արտադրվող/իրացվող ու ՀՀ ներմուծվող ժխախոտի միջին ամսական ծավալները: 2005 թվականի համար թե՛ ՀՀ ներմուծվող, թե՛ տեղական արտադրության ժխախոտի արտադրանքի ֆիզիկական ծավալները գնահատվել են միևնույն մոտեցման կիրառմամբ.

3. հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում արտադրվող/իրացվող և ՀՀ ներմուծվող ժխախոտի ծավալները համեմատաբար կայուն միտումներ դրսևորում են վերջին 3 տարիներին, որպես բազային ժամանակաշրջան ընտրվել է 2001-2003թթ,
4. ըստ 2004 թվականի առաջին 8 ամիսների փաստացի տվյալների գնահատվել է ընթացիկ տարվա սպասողական մակարդակները՝ ժխախոտի արտադրանքի յուրաքանչյուր տեսակի համար առանձին:
5. ֆիզիկական ծավալների համապատասխան սպասողական ցուցանիշների նկատմամբ կիրառելով 17 և ավելի տարիք ունեցող բնակչության թվաքանակի՝ վիճակագրական վերջին տվյալների հիման վրա (2002, 2003թթ տարեսկզբի ցուցանիշներ) հաշվարկված միջին տարեկան աճը՝ 1.3%-ը, գնահատվել են 2005 թվականի համապատասխան ցուցանիշները:

ՀՀ ներմուծվող բենզինի և դիզվառելիքի համար հաստատագրված վճարներն, ինչպես և նախորդ դեպքում, գնահատվել են ըստ ներմուծման միջին ամսական ծավալների կանխատեսումների, որն իր հերթին կատարվել է որոշակի ենթադրությունների հիման վրա:

Առաջին ենթադրությունը վերաբերվում է 2005 թվականին ՀՀ-ում գրանցված, շահագործվող, բենզին կամ դիզվառելիք օգտագործող տրանսպորտային միջոցների քանակին:

Կատարված հաջորդ ենթադրությունը վերաբերվում է 2005 թվականին 1 տրանսպորտային միջոցի հաշվով վառելիքի տարեկան ծախսի գնահատականին, որն ընդունվել է 2004 թվականի համար ակնկալվող համապատասխան ցուցանիշին հավասար:

¹² Հանքահումքային մթերքների հիմնական մասը կամ հարկվում է հաստատագրված վճարներով (բենզին, դիզվառելիք), կամ ԱԱՀ-ով չի հարկվում:

¹³ Հարկվում է հաստատագրված վճարով:

Հարկ է նշել, որ ինչպես երևում է առաջին 9 ամիսների փաստացի տվյալներից, ընթացիկ տարում շարունակվում է նախորդ տարվանից սկսված վառելիքի ներմուծման ծավալների աճը: Այն կարելի է բացատրել 3 հիմնական գործոնների ազդեցությամբ՝

6. Բնակչության եկամուտների աճով (ըստ վիճակագրական տվյալների 2004 թվականի առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտներն աճել են 10.6%-ով),
7. ՀՀ-ում գրանցված, շահագործվող՝ բենզին, դիզելային օգտագործող տրանսպորտային միջոցների թվաքանակի ավելացմամբ (ի հաշիվ թե ներմուծման և թե վերաշահագործվողների),
8. մաքսային վարչարարության բարելավմամբ:

Վերը նկարագրված մեթոդներով գնահատված բենզինի, դիզելային վառելիքի և ծխախոտի արտադրանքի ֆիզիկական ծավալների՝ 2005 թվականի համար կանխատեսված ծավալների և համապատասխան դրույքաչափերի հիման վրա հաշվարկվել են 2005 թվականի բյուջետային մուտքերը, որոնք ՀՀ օրենսդրությամբ սահմանված համամասնություններով բաշխվել են ըստ առանձին հարկատեսակների՝ ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և մաքսատուրքի:

1. ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ

Ակցիզային հարկի գծով 2005 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են 44.4 մլրդ դրամի չափով, որը համապատասխանաբար 5.3 մլրդ դրամով և 1.4 մլրդ դրամով ավելի է 2003 թվականի փաստացի և 2004 թվականի սպասողական մուտքերի մակարդակներից:

Ինչպես և ԱԱՀ-ի դեպքում, հաշվարկները կատարվել են ըստ հարկման ընդհանուր ռեժիմով և հաստատագրված վճարների տեսքով գանձվող գումարների: Հարկման ընդհանուր ռեժիմով 2005 թվականին գանձվելիք գումարները կանխատեսվել են ներքին շրջանառությունից և ներմուծումից գանձվող հարկի համար առանձին:

Ներքին շրջանառությունից հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող 2005 թվականի տարեկան մուտքերը կանխատեսվել են ըստ ենթակցիզային ապրանքների հիմնական խմբերի՝ հաշվի առնելով 2004 թվականին ենթակցիզային ապրանքների իրացման ֆիզիկական ծավալների կանխատեսումները և սպառման աճի տեմպերը:

2004 թվականին ենթակցիզային ապրանքների իրացման ֆիզիկական ծավալների կանխատեսումները կատարվել են՝ հաշվի առնելով վիճակագրական տվյալները 2003 թվականին ենթակցիզային ապրանքների արտադրության, արտահանման ֆիզիկական փաստացի ծավալների և դրանց՝ 2004/2003 կիսամյակային աճի տեմպերի վերաբերյալ: Ալկոհոլային խմիչքների իրացման ծավալների գնահատականների և օրենքով սահմանված ակցիզային հարկի դրույքաչափերի հիման վրա հաշվարկվել է տեղական արտադրության ակցիզային հարկի 2005 թվականին ակնկալվող գումարը:

Ներմուծումից հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող 2005 թվականի տարեկան մուտքերի կանխատեսումներում հաշվի են առնել 2002, 2003 թվականների տարեկան և 9 ամիսների, ինչպես նաև ընթացիկ տարվա առաջին 9 ամիսների համապատասխան բյուջետային մուտքերի վերաբերյալ

փաստացի տվյալները, 2005 թվականի ապրանքների ներմուծման կանխատեսվող ծավալների աճը 2004 թվականի նկատմամբ:

2. ՇԱՀՈՒՔԱՀԱՐԿ

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի մուտքերը շահութահարկի գծով կանխատեսվել են 30.9 մլրդ դրամի չափով, որը համապատասխանաբար 14.5 մլրդ դրամով և 2.9 մլրդ դրամով գերազանցում է 2003 թվականի փաստացի¹⁴ և 2004 թվականի սպասողական մուտքերի մակարդակները:

Շահութահարկից եկամուտների կանխատեսման նպատակով դիտարկվել են ազգային հաշիվների համակարգի եկամուտների ձևավորման հաշվի «Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ» (ըստ ճյուղերի) հոդվածի փաստացի և մակրոտնտեսական զարգացումների շրջանակում կանխատեսված ցուցանիշները, որոնց հիման վրա գնահատվել է շահութահարկի փաստացի բազան: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության որոշ ճյուղերում (գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ, առևտուր և հանրային սնունդ) ստեղծված շահույթը ոչ լրիվ ծավալով է ենթակա շահութահարկով հարկման, տնտեսության զուտ շահույթը ճշգրտվել (նվազեցվել) է այդ առանձին ճյուղերի՝ շահութահարկով չհարկվող զուտ շահույթի հաշվարկային գումարի չափով: Ենթադրվել է, որ առաջիկա տարում ևս կպահպանվեն ընթացիկ տարում արձանագրված շահութահարկի գծով բյուջետային մուտքերի աճի տեմպը և 2004 թվականի փաստացի դրույքաչափի, ինչպես նաև վերը նկարագրված մեթոդով կանխատեսված 2005 թվականի փաստացի բազայի հիման վրա գնահատվել է 2005 թվականին հավաքագրման ենթակա շահութահարկը:

3. ԵԿԱՄՏԱՀԱՐԿ

Եկամտահարկի գծով 2005 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 24.2 մլրդ դրամի չափով, որը համապատասխանաբար 7.5 մլրդ դրամով և 2.5 մլրդ դրամով կգերազանցի 2003 թվականի փաստացի¹⁵ և 2004 թվականի սպասողական մուտքերը: Հաշվարկները կատարվել են ըստ եկամտի ստացման հիմնական աղբյուրների:

Աշխատանքի վարձատրությունից և դրան հավասարեցված այլ վճարումներից եկամտահարկի կանխատեսումների մեթոդն, ըստ էության, նույնն է, ինչ շահութահարկինը. մակրոտնտեսական ցուցանիշների հիման վրա գնահատվել է եկամտահարկի փաստացի բազան: Փաստացի բազայի որոշման նպատակով դիտարկվել է ՀՆԱ-ի կառուցվածքը, մասնավորապես՝ եկամուտների ձևավորման հաշվի «Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն» հոդվածը: Հետագա հաշվարկներում այս ցուցանիշը նվազեցվել է տնտեսության մեջ զբաղվածների թվաքանակին համապատասխան չհարկվող նվազագույն աշխատավարձի (20000 դրամ) և վարձու աշխատողների կողմից վճարվող պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների (աշխատավարձի 3%-ը) հանրա-

¹⁴ Առանց ՀՀ 2003 թվականի պետական բյուջեից կատարված՝ սույն մասի տողատակի 2-րդ ծանոթության մեջ նշված ծախսերի գծով ստացված շահութահարկի:

¹⁵ Առանց ՀՀ 2003 թվականի պետական բյուջեից կատարված՝ սույն մասի տողատակի 2-րդ ծանոթության մեջ նշված ծախսերի գծով ստացված եկամտահարկի:

գումարի չափով: Ենթադրվել է, որ առաջիկա տարում ևս կպահպանվեն ընթացիկ տարում արձանագրված եկամտահարկի գծով բյուջետային մուտքերի աճի տեմպը և 2004 թվականի փաստացի դրույքաչափի, ինչպես նաև վերը նկարագրված մեթոդով կանխատեսված 2005 թվականի փաստացի բազայի հիման վրա գնահատվել են 2005 թվականի բյուջետային մուտքերը եկամտահարկից:

Ֆիզիկական անձանց եկամտի այլ աղբյուրներից գանձվող (ձեռնարկատիրական գործունեություն, ավանդներ և այլն) եկամտահարկի 2005 թվականի կանխատեսվող գումարը գնահատված են փաստացի դրույքաչափի մեթոդի կիրառմամբ՝ հիմնված ֆինանսական համակարգից, ձեռնարկատիրական գործունեությունից և այլ աղբյուրներից բնակչության դրամական եկամուտների վերաբերյալ վիճակագրական ցուցանիշի վրա:

4. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ՝ օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակների համար

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակների համար գանձվող հաստատագրված վճարների գծով 2005 թվականին գանձվելիք գումարները ծրագրվել են 14.4 մլրդ դրամի չափով, որը 6.4 մլրդ դրամով և 2.3 մլրդ դրամով գերազանցում է համապատասխանաբար 2003 թվականի փաստացի և 2004 թվականի սպասողական մակարդակները:

2005 թվականի մուտքերի կանխատեսումներում հաշվի է առնվել այդ եկամտատեսակի գծով մուտքերի 2004 թվականի սպասողական մակարդակը և 2005 թվականին առևտրի և հանրային սննդի (6.5%), ինչպես նաև ծառայությունների ոլորտներում (8.3%) ակնկալվող տնտեսական աճի ցուցանիշները, ինչպես նաև տվյալ հարկատեսակի գծով մուտքերի սահունության գործակցի¹⁶ կանխատեսումային մեծությունը:

Աղյուսակ 3. 3. Հաստատագրված վճարներից 2005 թվականի մուտքերի գնահատականը (մլն դրամ)

Ցուցանիշը	2001		2002		2003		2004		2005
	հունվ-սեպտ	տարի	հունվ-սեպտ	տարի	հունվ-սեպտ	տարի	հունվ-սեպտ	տարի (սպասող)	տարի (կանխ.)
Առևտրական գործունեությունից, այդ թվում՝	1,324.3	1,893.2	1,635.0	2,117.8	1,721.9	2,350.6	2,389.3	3,203.6	3,443.0
Խճանորների, կրպակների միջոցով իրականացվող առևտրական գործունեություն	267.4	364.5	334.1	430.2	280.1	376.7	297.3	397.2	427.0
Առևտրի իրականացման վայրի կազմակերպում	972.7	1,408.4	1,185.3	1,528.8	1,305.9	1,780.9	1,523.8	2,020.3	2,171.0
Արտարժույթի փոխանակման կետի միջոցով արտարժույթի առք ու վաճառք	66.7	96.6	92.9	127.5	110.6	157.4	145.3	203.1	218.0
Բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառք	17.4	23.7	22.8	31.2	25.3	35.5	422.8	583.0	627.0

¹⁶ ՀՆԱ-ի տվյալ ճյուղի մեկ տոկոս աճին համապատասխանող հարկի տոկոսային աճը:

Ցուցանիշը	2001		2002		2003		2004		2005
	հունվ-սեպտ	տարի	հունվ-սեպտ	տարի	հունվ-սեպտ	տարի	հունվ-սեպտ	տարի (սպասող)	տարի (կանխ.)
Սպասարկման ոլորտից, այդ թվում՝	1,873.7	2,533.9	2,505.5	3,375.6	3,073.0	4,387.5	5,164.4	7,239.4	9,175.0
Ավտոտրանսպորտային գործունեություն	442.0	615.7	736.6	1,044.3	1,074.8	1,422.1	1,173.3	1,615.4	2,047.0
Արժույթային դիլերների գործունեություն	0.7	0.7	1.1	1.4	0.4	0.9	1.4	3.1	4.0
Խաղատների գործունեություն	295.9	422.3	361.3	503.3	408.5	661.9	1,195.6	1,773.3	2,247.0
Դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործում	668.2	804.0	425.8	568.4	246.6	291.2	451.1	565.4	717.0
Համակարգչային խաղերի կազմակերպում	12.1	16.0	12.9	18.5	21.9	30.1	21.2	29.8	38.0
Տեսաժապավենների և տեսա-մագնիստոֆոնների վարձույթ	0.2	0.1	0.0	0.1	0.4	0.4	0.4	0.4	1.0
Լուսնկարչական լաբորատորիաների միջոցով գործունեություն	13.8	17.9	15.3	20.6	20.3	27.8	26.8	36.0	46.0
Ավտոտեխնոսպասարկման կայանների գործունեություն	66.3	95.1	92.7	132.0	120.6	171.3	208.1	297.5	377.0
Վարսավիրական ծառայությունների մատուցում	65.8	93.0	97.2	133.8	123.9	176.7	207.5	290.5	368.0
Ավտոկանգառների գործունեություն	14.7	22.4	19.6	25.1	29.0	39.1	30.1	41.1	52.0
Արդյունագործական ձկնորսություն	3.2	3.5	2.1	2.4	0.5	0.7	1.2	1.6	2.0
Վիճակախաղերի կազմակերպում	290.8	443.2	447.0	520.7	325.0	536.4	419.6	554.0	702.0
Ավտոտրանսպորտային միջոցների գազալցում	-	-	262.3	361.9	661.7	974.0	1,374.0	1,956.9	2,480.0
Բաղնիքների և ցնցուղարանի կազմակերպում	-	-	31.5	43.1	37.7	51.9	47.5	65.2	83.0
Բիլիարդի խաղի կազմակերպում	-	-	-	-	1.9	3.0	6.7	9.2	12.0
Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից	4.8	5.9	625.1	872.0	914.2	1,270.7	1,163.6	1,620.3	1,741.2
Ընդամենը	3,202.7	4,433.0	4,765.6	6,365.4	5,709.1	8,008.8	8,717.3	12,063.4	14,358.3

1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ, ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԳԻՐ ՎՃԱՐՆԵՐ

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի մուտքերը բնապահպանական և բնօգտագործման, ճանապարհային վճարների և կարգավորման պարտադիր վճարների գծով կանխատեսվել են 6.0 մլրդ

դրամի չափով՝ 2004 թվականի սպասողական և 2003 թվականի փաստացի¹⁷ տարեկան ցուցանիշներից համապատասխանաբար 0.7 մլրդ դրամով և 1.0 մլրդ դրամով ավելի:

2005 թվականի մուտքերը գնահատելիս հաշվի են առնվել 2001-2004 թվականների փաստացի մուտքերը, ինչպես նաև 2005 թվականին ակնկալվող տնտեսական աճի (հարկային մարմինների կողմից հավաքագրվող վճարների դեպքում) կամ ապրանքների ներմուծման աճի (մաքսային մարմինների կողմից գանձվող վճարների դեպքում) ցուցանիշները:

2005 թվականին նախատեսվում է նաև 0.4 մլրդ դրամի չափով բյուջետային մուտքերի ստացում կարգավորման պարտադիր վճարներից՝ պայմանավորված ներկայումս ՀՀ Ազգային ժողով ներկայացված «Կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ:

2. ԱՅԼ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ¹⁸

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակների համար գանձվող հաստատագրված վճարների գծով 2005 թվականին գանձվելիք գումարները ծրագրվել են 23.8 մլրդ դրամի չափով, որը 6.5 մլրդ դրամով և 2.3 մլրդ դրամով գերազանցում է համապատասխանաբար 2003 թվականի փաստացի և 2004 թվականի սպասողական մակարդակները: Կանխատեսումները կատարված են ըստ առանձին եկամտատեսակների:

2. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

Պետական տուրքերից 2005 թվականի բյուջետային մուտքերը Նախագծով ծրագրվել են 16.3 մլրդ դրամի չափով՝ 2004 թվականի համար հաստատված 15.0 մլրդ դրամի¹⁹, 2004 թվականի սպասողական 15.7 մլրդ դրամի և 2003 թվականին փաստացի ստացված 14.3 մլրդ դրամի²⁰ դիմաց կամ համապատասխանաբար 1.3 մլրդ դրամով, 0.6 մլրդ դրամով և 2.1 մլրդ դրամով ավելի:

¹⁷ Առանց ՀՀ 2003 թվականի պետական բյուջեից կատարված՝ սույն մասի տողատակի 2-րդ ծանոթության մեջ նշված ծախսերի գծով ստացված բնապահպանական և բնօգտագործման վճարներ:

¹⁸ Այլ եկամուտների կազմում ներառված է մաքսատուրքի, պարզեցված հարկի, գույքահարկի, հողի հարկի և այլ հարկային եկամուտների գծով ծրագրված մուտքերը:

¹⁹ «Հայաստանի Հանրապետության 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված մուտքերից բացի, ներառում է նաև նույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով ՀՀ կառավարությանը վերապահված իրավասությունների շրջանակներում կատարված ավելացումները:

²⁰ Տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով 2003 թվականի փաստացիում ներառված չեն ՀՀ 2004 թվականի պետական բյուջեից ֆինանսավորված հետևյալ բյուջետային մուտքերը՝ ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս վճարվող պետական տուրք՝ 937.6 մլն դրամ («Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն):

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքին համապատասխան ոչ կառավարչական բնույթի գործունեություն իրականացնող պետական հիմնարկների պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպման նպատակով՝ ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրում գրանցման և կնիքների պատրաստման թույլտվության համար համար վճարվող պետական տուրքեր՝ 19.5 մլն դրամ («Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն):

Պետական տուրքերի գծով 2004 թվականի մուտքերի կանխատեսումները կատարվել են ըստ 1998-2004 թվականների փաստացի հավաքագրումների միտումների՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության մեջ կատարված առանձին փոփոխություններն ու լրացումներն, ինչպես նաև պետական տուրքի յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները: Պետական տուրքի առանձին տեսակների գծով 2005 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները, հաշվարկման մեթոդների համառոտ նկարագրությունը, ինչպես նաև ծրագրային և փաստացի ցուցանիշների համեմատականները ներկայացվում են ստորև:

1. Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանների կողմից փաստաթղթերի պատճեններ տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2005 թվականի մուտքերը գնահատվել են 511.5 մլն դրամի չափով, որը 17.5 մլն դրամով և 2.1 մլն դրամով պակաս է համապատասխանաբար 2004 թվականի համար հաստատված²¹ և 2003 թվականի փաստացի մակարդակներից, իսկ 2004 թվականի սպասողական մակարդակը գերազանցում է 22.9 մլն դրամով:

2005 թվականի մուտքերը գնահատվել են ըստ 2004 թվականի առաջին ինը ամիսների փաստացի մուտքերի, 1998-2003 թվականների առաջին 9 ամիսների մուտքերի՝ տարեկան համապատասխան գումարում ունեցած տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշի և 2003/2002, 2004/2003 տարեկան աճի տեմպերի միջինացված ցուցանիշի:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար գանձվող պետական տուրքի գծով 2005 թվականի մուտքերը 2004 թվականի համար հաստատված 6.3 մլն դրամի, 2004 թվականի սպասողական 13.7 մլն դրամի և 2003 թվականին փաստացի ստացված 2.0 մլն դրամի դիմաց կանխատեսվել են 22.1 մլն դրամի չափով՝ ելնելով պետական տուրքի այս տեսակի գծով ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության և ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրված տեղեկություններից:

3. Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2005 թվականի մուտքերը կանխատեսվել են 1,693.5 մլն դրամի չափով, որը 2004 թվականի համար հաստատված 1,624.2 մլն դրամը և 2004 թվականի 2004 թվականի սպասողական 1,604.4 մլն դրամը գերազանցում է համապատասխանաբար 69.3 մլն դրամով և 89.1 մլն դրամով, իսկ 2003 թվականին փաստացի ստացված 2,118.0 մլն դրամից պակաս է 424.4 մլն դրամով: 2003 թվականի փաստացի ցուցանիշի հետ 2005 թվականի ծրագրային ցուցանիշը համեմատելիս հարկ է

2004 թվականի սպասողականը ևս չի պարունակում պետական տուրքի վերը նշված տեսակների գծով ընթացիկ տարում պետական բյուջեից ֆինասավորված բյուջետային մուտքերը («Հայաստանի Հանրապետության 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն):

²¹ Այստեղ և այսուհետև պետական տուրքի որևէ տեսակի գծով որպես հաստատված ցուցանիշ ներկայացվել է ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության 2004 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 216-Ն որոշմամբ հաստատված համապատասխան ցուցանիշը:

հաշվի առնել այն փաստը, որ 2003 թվականի մուտքերում 600 մլն դրամը ստուգման ակտի արդյունքներով միանվագ ստացված գումար է, առանց որի 2005 թվականի ծրագրային մուտքերի աճը 2003 թվականի նկատմամբ կկազմի 175.6 մլն դրամ:

Պետական տուրքերի այս խմբի գծով 2005 թվականի տարեկան մուտքերը կանխատեսվել են, հաշվի առնելով 2004 թվականի առաջին 9 ամիսների փաստացի մուտքերը, 2002-2003 թվականների առաջին 9 ամիսների մուտքերի՝ տարեկան համապատասխան գումարում ունեցած տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը և 2003/2002, 2004/2003 տարեկան աճի տեմպերի միջինացված ցուցանիշը: Հարկ է նշել, որ հաշվարկներում կիրառվել է 2003 թվականի՝ 600 մլն դրամով ճշգրտված (նվազեցված) ցուցանիշը:

4. Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գծով 2005 թվականի մուտքերը 2004 թվականի համար հաստատված 2,807.0 մլն դրամի, 2004 թվականի սպասողական 3,137.8 մլն դրամի և 2003 թվականին փաստացի ստացված 2,706.6 մլն դրամի դիմաց կանխատեսվել են 3,357.2 մլն դրամի չափով կամ համապատասխանաբար 550.2 մլն դրամով, 219.3 մլն դրամով և 650.6 մլն դրամով ավելի:

Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գերակշռող մասը՝ 3,328.1 մլն դրամը կամ 99.1%-ը 2005 թվականին ապահովվելու է պետական տուրքի հետևյալ 6 խմբերի հաշվին՝

2. տրանսպորտային միջոցների, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների տարեկան տեխնիկական զննությունն անցնելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2005 թվականի մուտքերը 2004 թվականի համար հաստատված 1,174.1 մլն դրամի, 2004 թվականի սպասողական 1,290.1 մլն դրամի և 2003 թվականին փաստացի ստացված 1,143.7 մլն դրամի դիմաց կանխատեսվել են 1,320.3 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2005 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 39.3 %-ը) կամ համապատասխանաբար 146.2 մլն դրամով, 30.1 մլն դրամով և 176.6 մլն դրամով ավելի: 2004 թվականի սպասողական մուտքերը գնահատվել են ըստ տեխնիկական զննության 2003 թվականի տարեկան, 2004 թվականի առաջին 9 ամիսների փաստացի տվյալների: Ելնելով ՀՀ-ում գրանցված և շահագործվող, ինչպես նաև ներմուծվող մեքենաների քանակի՝ 2003, 2004 թվականներին արձանագրված աճի միտումներից՝ 2005 թվականի մուտքերի հաշվարկներում 2004 թվականի սպասողականն ավելացվել է 5000 տրանսպորտային միջոցին համապատասխանող պետական տուրքի գումարով:
3. ավտոմեքենայի պետական համարանիշ տալու և կորցրածը վերականգնելու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցման և պետական համարանիշ տալու և կորցրածը վերականգնելու համար, ինչպես նաև ջրային փոխադրամիջոցները գրանցելու համար գանձվող պետական տուրքերի գծով 2005 թվականի մուտքերը ծրագրվել են 485.6 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2005 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 14.5 %-ը), որը 2004 թվականի հաստատված 445.4 մլն դրամը և 2003

թվականին փաստացի ստացված 444.4 մլն դրամը գերազանցում է համապատասխանաբար 40.2 մլն դրամով և 41.3 մլն դրամով, իսկ 2004 թվականի սպասողական 538.6 մլն դրամից պակաս է 53.0 մլն դրամով: Ընթացիկ տարվա բարձր ցուցանիշը պայմանավորված է ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակին ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը խստացնելու նպատակով 5800 զույգ դեղին հիմնագույնի համարանիշերի հատկացման արդյունքում պետական բյուջե մուտքագրված մոտ 69.6 մլն դրամով: Առանց այս գումարի 2005 թվականի ծրագրային ցուցանիշը 2004 թվականի սպասողական մակարդակը կգերազանցի 16.2 մլն դրամով:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2005 թվականի մուտքերը ծրագրվել է, ելնելով 2003 թվականի տարեկան, 2004 թվականի առաջին 9 ամիսների փաստացի տվյալներից, ինչպես նաև նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա աճի տեմպից (առանց վերը նշված դեղին հիմնագույնի համարանիշերի հատկացման արդյունքում 2004 թվականին ստացված 69.6 մլն դրամի):

Ստորև ներկայացվող, տրանսպորտային միջոցներին առնչվող պետական տուրքերը ևս գնահատվել են նկարագրված մեթոդով:

2. ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) և կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար գանձվող պետական տուրքի գծով 2005 թվականի մուտքերը ծրագրվել են 264.0 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2005 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 7.9 %-ը)՝ 2004 թվականի հաստատված և 2003 թվականի փաստացի ստացված 199.8 մլն դրամի, 2004 թվականի սպասողական 214.1 մլն դրամի դիմաց կամ համապատասխանաբար 64.2 մլն դրամով, 49.9 մլն դրամով ավելի:
3. ավտոմեքենաները, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաները, ջրային փոխադրամիջոցները վերագրանցելու (ավտոմեքենաների դեպքում՝ նաև գրանցելու), հաշվառումից հանելու, ինչպես նաև դրանց գրանցման տվյալների փոփոխության հետ կապված որևէ գործողություն կատարելու համար գանձվող պետական տուրքերի գծով 2005 թվականի մուտքերը 2004 թվականի համար հաստատված 100.5 մլն դրամի, 2004 թվականի սպասողական 104.0 մլն դրամի և 2003 թվականին փաստացի ստացված 86.6 մլն դրամի դիմաց կանխատեսվել են 108.6 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2005 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 3.2%-ը) կամ համապատասխանաբար 8.1 մլն դրամով, 4.5 մլն դրամով և 22.0 մլն դրամով ավելի:
4. գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար գանձվող պետական տուրքերի գծով 2005 թվականի մուտքերը 2004 թվականի համար հաստատված 742.8 մլն դրամի, 2004 թվականի սպասողական 846.4 մլն դրամի և 2003 թվականին փաստացի ստացված 694.2 մլն դրամի դիմաց կանխատեսվել են 1,026.4 մլն դրամի չափով (պե-

տական գրանցումից 2005 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 30.6%-ը) կամ համապատասխանաբար 283.6 մլն դրամով, 180.0 մլն դրամով և 332.2 մլն դրամով ավելի: Պետական տուրքի այս տեսակի գծով 2005 թվականի մուտքերը գնահատվել են հաշվի առնելով 2004 թվականի առաջին 9 ամիսների փաստացի մուտքերը, 1998-2003 թվականների տարեկան մուտքերում առաջին 9 ամիսների մուտքերի տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը, ինչպես նաև 2003/2002 և 2004/2003 տարեկան աճի տեմպերի միջինացված ցուցանիշը:

5. ՀՀ պետական ռեզիստրում գրանցման ենթակա տնտեսավարող սուբյեկտներից գանձվող պետական տուրքերի գծով 2005 թվականի մուտքերը ծրագրավորվել են 123.1 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2005 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 3.7 %-ը): 2004 թվականի հաստատված 111.3 մլն դրամի, 2004 թվականի սպասողական 115.5 մլն դրամի և 2003 թվականի փաստացի 107.6 մլն դրամի դիմաց կամ համապատասխանաբար 11.9 մլն դրամով, 7.6 մլն դրամով, 15.5 մլն դրամով ավելի: Հաշվի են առնվել 2004 թվականի առաջին 9 ամիսների փաստացի մուտքերը, 2003 թվականի առաջին 9 ամիսների մուտքերի՝ տարեկան համապատասխան գումարում ունեցած տեսակարար կշռի ցուցանիշը և 2002/2001, 2003/2002 և 2004/2003 տարեկան աճի տեմպերի միջինացված ցուցանիշը:

5. Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2005 թվականի մուտքերը 2004 թվականի համար հաստատված 32.0 մլն դրամի, 2004 թվականի սպասողական 22.9 մլն դրամի և 2003 թվականին փաստացի ստացված 33.7 մլն դրամի դիմաց ծրագրվել են ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության փորձագիտական գնահատականի՝ 3.0 մլն դրամի չափով կամ համապատասխանաբար 29.0 մլն դրամով, 19.9 մլն դրամով և 30.7 մլն դրամով պակաս: Պետական տուրքի նշված տեսակի գծով 2005 թվականի պետական բյուջեի ծրագրվող մուտքերի կտրուկ փոփոխությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված օրենսդրական փոփոխությամբ, համաձայն որի էականորեն նվազում է մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու համար գանձվող պետական տուրքերի դրույքաչափը:

6. Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, սպրանքային և սպասարկման նշանների, սպրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2005 թվականի մուտքերը կանխատեսվել են 195.9 մլն դրամի չափով, որը համապատասխանաբար 64.0 մլն դրամով, 4.1 մլն և 54.1 մլն դրամով գերազանցում է 2004 թվականի հաստատված 131.9 մլն դրամի, 2004 թվականի սպասողական 191.8 մլն դրամի և 2003 թվականի փաստացի 141.8 մլն դրամի մակարդակը: Պետական տուրքերի այս խմբից 2005 թվականի մուտքերը գնահատվել են՝ հաշվի առնելով 2004

թվականի առաջին 9 ամիսների փաստացի մուտքերը, 2001-2003 թվականների առաջին 9 ամիսների մուտքերի՝ տարեկան համապատասխան գումարում ունեցած տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը և 1998-2004 թվականների տարեկան աճի տեմպերի միջինացված ցուցանիշը:

7. Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2005 թվականի մուտքերը 2004 թվականի համար հաստատված 1,840.5 մլն դրամի, 2004 թվականի սպասողական 1,990.5 մլն դրամի և 2003 թվականին փաստացի ստացված 1,720.1 մլն դրամի դիմաց կանխատեսվել են 2,202.0 մլն դրամի չափով կամ համապատասխանաբար 361.5 մլն դրամով, 211.5 մլն դրամով և 481.9 մլն դրամով ավելի: Կանխատեսումներն իրականացվել են, հաշվի առնելով 2004 թվականի առաջին 9 ամիսների փաստացի մուտքերը, 2002, 2003 թվականների տարեկան փաստացի մուտքերում համապատասխան առաջին 9 ամիսների տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը, 2004/2003 տարեկան աճի տեմպը, ինչպես նաև 2004 թվականի նկատմամբ 2005 թվականին ակնկալվելիք տնտեսական աճի տեմպը:

8. Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար գանձվող պետական տուրքերի գծով 2005 թվականի մուտքերը կանխատեսվել են 2,600.9 մլն դրամի չափով, որը 2004 թվականի համար հաստատված 2,859.3 մլն դրամից պակաս է 258.4 մլն դրամով, իսկ 2004 թվականի սպասողական 2,536.6 մլն դրամը և 2003 թվականին փաստացի ստացված 2,409.6 մլն դրամը գերազանցում է համապատասխանաբար 64.3 մլն դրամով և 191.3 մլն դրամով: Պետական տուրքերի այս խմբի համար 2004 թվականի հաստատված և 2005 թվականի ծրագրված մակարդակների միջև տարբերությունը հիմնականում պայմանավորված է վիճակախաղերի կազմակերպման համար տրվող լիցենզիաների նվազման միտումով՝ կապված նշված լիցենզիայի տրման համար պետական տուրքի դրույքաչափի կտրուկ աճի հետ (25 մլն դրամից՝ 100 մլն դրամ): Պետական տուրքերի այս խմբից 2005 թվականի մուտքերի գերակշիռ մասը՝ 2,226.4 մլն դրամը կամ 85.6%-ը նախատեսվում է ապահովել էներգետիկայի, շահումով խաղերի և վիճակախաղերի, առողջապահության, պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և բնական ռեսուրսների օգտագործման, քաղաքաշինության, ինչպես նաև «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության այլ բնագավառներում տնտեսավարող սուբյեկտների կողմից լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար վճարվելիք պետական տուրքերի գումարների հաշվին: Կանխատեսումներն իրականացվել են, ելնելով օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից տրամադրված անհրաժեշտ քանակական տվյալներից և 2003, 2004 թվականների փաստացի մուտքերի վերաբերյալ գանձապետական հաշվետվություններից:

9. Այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2005 թվականի մուտքերը 2004 թվականի համար հաստատված 5,138.8 մլն դրամի, սպասողական 5,728.8 մլն դրամի և 2003 թվականին փաստացի ստացված 4,616.8 մլն դրամի դիմաց կանխատեսվել

են 5,751.1 մլն դրամի չափով կամ համապատասխանաբար 612.3 մլն դրամով, 22.3 մլն դրամով և 1,134.3 մլն դրամով ավելի:

Նշված պետական տուրքերից 2005 թվականի բյուջետային մուտքերի գերակշռող մասը՝ 5,439.2 մլն դրամը (94.6%), ապահովվելու է պետական տուրքի հետևյալ 3 տեսակների հաշվին՝

2. Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար գանձվող պետական տուրքի գծով 2005 թվականի մուտքերը 2004 թվականի հաստատված 4,300.0 մլն դրամի²² և 2003 թվականին փաստացի ստացված 3,900.9 մլն դրամի դիմաց կանխատեսվել են 2004 թվականի սպասողական 4,838.5 մլն դրամի չափով (այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2005 թվականի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 84.1%-ը) կամ համապատասխանաբար 538.5 մլն դրամով և 938.0 մլն դրամով ավելի:
3. վարորդական իրավունքի, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների, օդային և ջրային փոխադրամիջոցների վարման իրավունքի վկայական և կորցրած վկայականի կրկնօրինակը տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2005 թվականի մուտքերը 2004 թվականի հաստատված 351.8 մլն դրամի և 2003 թվականին փաստացի ստացված 299.2 մլն դրամի դիմաց կանխատեսվել են 2004 թվականի սպասողական 384.3 մլն դրամին հավասար (այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2005 թվականի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 6.7 %-ը)՝ կամ համապատասխանաբար 32.5 մլն դրամով և 85.2 մլն դրամով ավելի:
4. պետական մենաշնորհային բնույթի ծառայությունների (գործողությունների) մատուցումը հաստատող փաստաթղթի (վկայականի) տրամադրման համար յուրաքանչյուր քննությունն ընդունելու համար (բացառությամբ բժշկական և դեղագործական և արտոնագրային հավատարմատարների որակավորման համար քննությունների) գանձվող պետական տուրքի գծով 2005 թվականի մուտքերը 2004 թվականի համար հաստատված 202.3 մլն դրամի, 2003 թվականին փաստացի ստացված 158.1 մլն դրամի դիմաց կանխատեսվել են 2004 թվականի սպասողական 216.4 մլն դրամի չափով (այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2005 թվականի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 3.8 %-ը) կամ համապատասխանաբար 14.1 մլն դրամով և 58.3 մլն դրամով ավելի:

²² «Հայաստանի Հանրապետության 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված մուտքերից բացի, ներառում է նաև նույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով ՀՀ կառավարությանը վերապահված իրավասությունների շրջանակներում կատարված ավելացումները:

3. ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ

Նախագծով ոչ հարկային եկամուտների գծով մուտքերը ծրագրվել են 5.3 մլրդ դրամի չափով՝ 2004 թվականի հաստատված 6.6 մլրդ դրամի²³, սպասողական 8.5 մլրդ դրամի և 2003 թվականին փաստացի ստացված 6.8 մլրդ դրամի²⁴ դիմաց:

ՄԺԾԾ-ով ոչ հարկային եկամուտների գծով 2005 թվականի համար նախատեսվել է 5.1 մլրդ դրամ, որը Նախագծով առաջարկվող գումարներից պակաս է 0.2 մլրդ դրամով: Այս տարբերությունը կանխատեսման մեթոդաբանության անփոփոխության պայմաններում, պայմանավորված է առանձին եկամտատեսակների գծով 2004 թվականին արձանագրված եկամուտների հավաքագրման միտումների, ինչպես նաև բյուջետային մուտքերի ստացման կանխատեսված սցենարի փոփոխմամբ: Մասնավորապես, ՀՀ կենտրոնական բանկի 2004 թվականի ծախսերի և մասհանումների նկատմամբ եկամուտների գերազանցումից պետական բյուջե փոխանցման ենթակա 2005 թվականի մուտքերը ՄԺԾԾ-ով նախատեսվել են 1.0 մլրդ դրամի չափով: Ֆինանսական շուկայի ընթացիկ տարվա զարգացումները ցույց են տալիս, որ 2004 թվականի գործունեության արդյունքներով կենտրոնական բանկի շահույթ չի ձևավորվի և Նախագծում այս եկամտատեսակի գծով 2005 թվականի համար մուտքեր չեն ծրագրվել: Բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների գծով ՄԺԾԾ-ով նախատեսվել է 350 մլն դրամ: Նախագծով այս եկամտատեսակի գծով ծրագրվել է 947.5 մլն դրամ: Լրացուցիչ մուտքերն ակնկալվում է ստանալ գանձապետական միասնական հաշվի օրական մնացորդի մի մասը ՀՀ ԿԲ-ում որպես ժամկետային ավանդ ներդնելու արդյունքում:

2005 թվականին առանձին ոչ հարկային եկամտատեսակների գծով վճարման ենթակա գումարները ծրագրվել են՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները, ինչպես նաև նախորդ տարիների մուտքերի հավաքագրման միտումները: Ստորև ներկայացվում են 2005 թվականի կանխատեսվող բյուջետային մուտքերի՝ ընթացիկ տարվա հաստատված և սպասողական, նախորդ տարվա փաստացի մուտքերի նկատմամբ համեմատականը, ինչպես նաև կատարված հաշվարկներում կիրառված մեթոդաբանության համառոտ նկարագրությունը:

²³ «Հայաստանի Հանրապետության 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ոչ հարկային եկամուտների գծով հաստատված մուտքերից բացի ներառված է նաև նույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով ՀՀ կառավարությանը վերապահված իրավասությունների շրջանակներում կատարված ավելացումները:

²⁴ Տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով ՀՀ 2003 թվականի փաստացի մուտքերում ներառված չեն:

ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության և ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նյութական խրախուսման և սոցիալական զարգացման ֆոնդերի գումարները՝ համապատասխանաբար 0.8 մլրդ դրամ և 1,8 մլրդ դրամ, ընդամենը 2,6 մլրդ դրամ:

ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի մուտքերի կազմում չնախատեսված, պետական բյուջեից ֆինանսավորված 1,0 մլրդ դրամի չափով մուտքերը՝ իրավախախտումների համար կիրառված պատժամիջոցների գծով: ճանապարհային վճարների գծով մուտքերը՝ 0.5 մլրդ դրամի չափով, քանի որ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի փոփոխության արդյունքում 2004 թվականի հունվարի 1-ից դրանք հաշվառվում են հարկային եկամուտների կազմում:

1. ՀՀ կենտրոնական բանկի 2004 թվականի ծախսերի և մասհանումների նկատմամբ եկամուտների գերազանցումից 2005 թվականին, ինչպես արդեն նշվեց, բյուջետային մուտքեր չեն նախատեսվել՝ 2004 թվականի հաստատված²⁵ 1.0 մլրդ դրամի, 2004, 2003 թթ փաստացի ստացված համապատասխանաբար 2.1 մլրդ դրամի և 1.1 մլրդ դրամի դիմաց:

2. Այս տարի առաջին անգամ մուտքեր են ծրագրվել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2004 թվականի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից՝ 242 մլն դրամի չափով: Նշված մուտքերի գումարը հաշվարկվել է ելնելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցված ծառայությունների դիմաց (հաշվի առնելով նախորդ տարվա 4-րդ եռամսյակի և ընթացիկ տարվա առաջին 9 ամիսների փաստացի մուտքերը) 2004 թվականի համար ակնկալվող եկամուտների (1447 մլն դրամի) և կոմիտեի գծով ՀՀ 2004 թվականի պետական բյուջեով հաստատված տարեկան ծախսերի (1205 մլն դրամի) կանխատեսվող ցուցանիշներից:

3. Պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի, համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները կանխատեսվում են շուրջ 352.6 մլն դրամի չափով, որից՝

3.1 պետական ձեռնարկությունների և գույքի (բացառությամբ հողի) վարձակալության վարձավճարների գծով՝ 272.1 մլն դրամ, 2004 թվականի հաստատված 260.8 մլն դրամի, սպասողական 284.6 մլն դրամի և 2003 թվականին փաստացի ստացված 298.8 մլն դրամի դիմաց: Կանխատեսումներում հիմք է ընդունվել հանրապետական գործադիր մարմինների կողմից ներկայացված տեղեկությունները 2004, 2005 թվականներին վարձակալության տրված (տրվելիք) տարածքների մակերեսների, վարձակալական պայմանագրերի համաձայն վճարվելիք վարձավճարների վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան գանձապետական տվյալները:

3.2 համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող պետական պահուստի ֆոնդի հողերի վարձակալության և օգտագործման դիմաց վճարվող վարձավճարները ծրագրվել են 80.4 մլն դրամի չափով՝ 2004 թվականի հաստատված 58.3 մլն դրամի, սպասողական 64.7 մլն դրամի և 2003 թվականին փաստացի ստացված 41.0 մլն դրամի դիմաց: Կանխատեսումներում հաշվի է առնվել 2003-2005 թվականներին վարձակալության տրված (տրվելիք) հողատարածքների մակերեսների, վճարված վարձավճարների վերաբերյալ (ըստ առանձին հողատեսքերի՝ վարելահող, արոտավայր, խոտհարք և այլ հողատեսքեր) ՀՀ մարզպետարանների կողմից ներկայացված տեղեկությունները, ինչպես նաև համապատասխան գանձապետական տվյալները:

4. Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, իրավա-

²⁵ Այստեղ և այսուհետև ոչ հարկային եկամուտների որևէ տեսակի գծով որպես հաստատված ցուցանիշ ներկայացվել է ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության 2004 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 216-Ն որոշմամբ հաստատված համապատասխան ցուցանիշները:

բանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինների գծով 2005 թվականին ակնկալվում է ստանալ 1343.8 մլն դրամի չափով մուտքեր, որից՝

4.1 Բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարներից 947.5 մլն դրամ, 2004 թվականի հաստատված ու սպասողական և 2003 թվականին փաստացի ստացված համապատասխանաբար 720.0 մլն դրամի, 813.5 մլն դրամի և 687.9 մլն դրամի դիմաց: Կանխատեսումներում ենթադրվել է, որ տարեկան 1% տոկոսադրույքի դեպքում 2005 թվականին գանձապետական միասնական հաշվի օրական մնացորդի դիմաց վճարվող տոկոսավճարը կկազմի շուրջ 197.5 մլն դրամ: Բյուջետային միջոցներից ՀՀ կենտրոնական բանկում ներդրվող ժամկետային ավանդի դիմաց վճարվող տոկոսավճարը տարեկան 4% տոկոսադրույքի (ռեպո տոկոսադրույք) պայմաններում կկազմի 750.0 մլն դրամ:

4.2 Իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինների տեսքով ՀՀ 2005 թվականի պետական բյուջե կատարվելիք մասհանումները կանխատեսվում են շուրջ 396.3 մլն դրամ՝ 2004 թվականի համար ծրագրված 372.0 մլն դրամի և 2003 թվականին փաստացի ստացված 399.4 մլն դրամի դիմաց: Շահաբաժինների գծով 2005 թվականի կանխատեսվող մուտքերը ծրագրավորելիս հաշվի են առնվել հետևյալ գործոնները.

ա) ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում շահաբաժինների Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման գործընթացում պետական բաժնեմասը տնօրինող մարմինների աշխատանքը կազմակերպելու մասին» N 1194 որոշմամբ պետական մասնակցության դիմաց պետական բյուջե կատարվելիք մասհանումները շահույթի 20%-ի չափով սահմանումը և մինչև 3 մլն դրամ գուտ շահույթ ապահովված 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների ազատումը ՀՀ պետական բյուջե շահաբաժին վճարելուց,

բ) ՀՀ կառավարության որոշումներով առողջացման ծրագրերում գտնվող ընկերությունների կողմից շահաբաժինների չվճարումները,

գ) մասնավորեցված ընկերությունների կողմից ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով ամրագրված շահաբաժինների գծով առկա պարտավորությունների մարման հնարավորությունը:

5. Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարները 2005 թվականին կանխատեսվում են 547.4 մլն դրամի չափով: Մասնավորապես.

5.1 ՀՀ ռեզիդենտին տրամադրված վարկերի օգտագործումից ակնկալվում է ստանալ 356.6 մլն դրամ: Ծրագրային մուտքերի բաշխվածքն ըստ առանձին վարկային ծրագրերի հետևյալն է.

ա) Համաշխարհային Բանկի օժանդակությամբ իրականացվող Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագրով ՀՀ բանկերին (Արդշինինվեստբանկ, Հայգյուղփոխբանկ, Կոնվերս բանկ) առ 01.01.2004թ. տրամադրվել է 3,650.0 հազ ԱՄՆ դոլարի չափով վարկ, (տարեկան 6.5%, LIBOR և LIBOR+1 տոկոսադրույքներով), որի օգտագործման դիմաց 2005 թվականի պետական

բյուջե կմուտքագրվի շուրջ 189.7 հազար ԱՄՆ դոլար կամ 101.5 մլն դրամ (1 ԱՄՆ դոլար= 535.0 դրամ) տոկոսավճար:

բ) «Հյուսիս-արևմտյան շրջանների գյուղատնտեսական ծառայությունների զարգացում» վարկային ծրագրի շրջանակներում (համաձայն 1998թ. հունվարի 13-ին ՀՀ կառավարության և Հայգյուղփոխբանկի միջև կնքված «Սուբսիդավորմամբ ֆինանսավորման պայմանագրի» Հոդված 2.02 -ի) Հայգյուղփոխբանկին առ 01.01.2004 թվականը տրամադրվել է 1,508.8 հազար ԱՄՆ դոլարի չափով նպատակային վարկ: Դրա դիմաց տարեկան 5.99% տոկոսադրույքով հաշվարկվել է 89.1 հազար ԱՄՆ դոլարի կամ շուրջ 47.7 մլն դրամի չափով տոկոսավճար:

գ) Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղատնտեսական ծառայությունների վարկային ծրագրի շրջանակներում (համաձայն 2002թ. հունվարի 11-ին ՀՀ կառավարության և Հայգյուղփոխբանկի, «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության «Անիվ» հիմնադրամի միջև կնքված «Սուբսիդավորմամբ ֆինանսավորման պայմանագրի») առ 01.01.2004 թվականը Հայգյուղփոխբանկին տրամադրվել է 2,828.0 հազար ԱՄՆ դոլար վարկ՝ տարեկան 5.99% տոկոսադրույքով և «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության «Անիվ» հիմնադրամին՝ 1,000.0 հազար ԱՄՆ դոլար, տարեկան 1% տոկոսադրույքով: Նշված վարկերի գումարներով և տոկոսադրույքներով հաշվարկվել է 177.1 հազար ԱՄՆ դոլարի կամ շուրջ 94.7 մլն դրամի չափով տոկոսավճար:

դ) Ձեռնարկությունների զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ բանկերին (Հայազորբանկ, Հայներարտբանկ, Անելիք բանկ, Կոմվերս բանկ, Հայէկոնոմբանկ, Ինեկոբանկ, Գլաժորբանկ) տրամադրված նպատակային վարկերի ընդհանուր գումարը կազմում է շուրջ 7.7 մլն ԱՄՆ դոլար (LIBOR+2 տոկոսադրույքով), որի օգտագործման դիմաց 2005 թվականի պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 210.7 հազար ԱՄՆ դոլար կամ շուրջ 112.7 մլն դրամ (առանց Հայազորբանկի):

5.2 ՀՀ ոչ ռեզիդենտին տրամադրված վարկերի գծով 2005 թվականի մուտքերը կզույսանան Վրաստանի Հանրապետությանը տրամադրված վարկի սպասարկման տոկոսավճարներից, որոնք կկազմեն մոտ 190.8 մլն դրամ:

6. Տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ Հանրապետության համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցներից, հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի եկամուտները գնահատվել են 2004 թվականի համար հաստատված ցուցանիշի չափով՝ 40.0 մլն դրամ, 2004 թվականի սպասողական 1.3 մլրդ դրամի և 2003 թվականի փաստացի 1.4 մլրդ դրամի դիմաց: Նշված ցուցանիշները համեմատելիս հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ 2004 թվականի սպասողական և 2003 թվականի փաստացի մուտքերը ներառում են ««Զվարթնոց» բեռնային համալիր» վարկային ծրագրի սպասարկման նպատակով ««Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի կողմից պետությանը հատկացված նվի-

րատվության գումարներն, առանց որոնց նշված եկամտատեսակի գծով այդ տարիների մուտքերը հավասարվում են 2005 թվականի կանխատեսվող մակարդակին:

7. Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը ծրագրվել են 1192.3 մլն դրամի չափով, որը 517.2 մլն դրամով, 296.9 մլն դրամով և 87.4 մլն դրամով գերազանցում է համապատասխանաբար 2003 թվականի փաստացի, 2004 թվականի հաստատված և սպասողական մուտքերի մակարդակները: Կանխատեսումներում հաշվի են առնվել տվյալ եկամտատեսակի գծով ընթացիկ տարվա առաջին 9 ամիսների փաստացի մուտքերը, 2002, 2003 թվականների նույն ժամանակահատվածի մուտքերի՝ համապատասխան տարեկան գումարում ունեցած միջին տեսակարար կշռի և 2005 թվականին ակնկալվող տնտեսական աճի ցուցանիշները:

8. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտների գծով 2005 թվականի պետական բյուջեի մուտքերը գնահատվել են 1.6 մլրդ դրամի չափով: Եկամուտների այս խմբի խոշոր բաղադրիչներից է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից 2005 թվականին մատուցվելիք ծառայություններից ստացվելիք եկամուտները, որոնք ծրագրվել են 1.4 մլրդ դրամի չափով:

Ի - Բ Կ Ա Պ Ի Տ Ա Լ Ի Գ Ո Ր Ծ Ա Ռ Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր Ի Յ Ե Կ Ա Մ Ո Ի Տ Ն Ե Ր

Կապիտալի գործառնություններից եկամուտների գծով ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի եկամուտները ծրագրվել են 5.5 մլրդ դրամի չափով, որը համապատասխանաբար 4.8 մլրդ դրամով, 4.0 մլրդ դրամով և 2.3 մլրդ դրամով ավելի է 2004 թվականի հաստատված և սպասողական, 2003 թվականի փաստացի մուտքերից:

Կապիտալի գործառնություններից եկամուտների մասով Նախագծով առաջարկվող և ՄԺԾԾ-ով նախատեսված գումարները տարբերվում են 5.2 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է պետական սեփականություն համարվող հողերի օտարումից Երևան քաղաքի մասով ՄԺԾԾ-ով նախատեսված 0.3 մլրդ դրամի դիմաց Նախագծում լրացուցիչ 4.9 մլրդ դրամի չափով մուտքեր ներառելու հանգամանքով: Բացի այդ, Նախագծով ՄԺԾԾ-ով նախատեսվածից ավելի գումարներ են ծրագրված նաև բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող շենքերի և շինությունների 2005 թվականին օտարումից մուտքերի մասով՝ 291.8 մլն դրամի չափով: Այս գումարից 98.4 մլն դրամը պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների առուվաճառքի պայմանագրերից բխող տարածամկետ վճարումների մասով պայմանագրային պարտավորությունների կատարման արդյունքում ՀՀ 2005 թվականի պետական բյուջե մուտքագրվելիք գումարն է, իսկ մնացած 193,4 մլն դրամն ակնկալվում է ստանալ 2005 թվականին այլ շենքերի և շինությունների օտարումից: Հաշվարկ-

ները կատարված են շենքերի, շինությունների աճուրդի նախատեսվող, նախնական մեկնարկային գների, ինչպես նաև նախորդ տարիներին կնքված առուվաճառքի պայմանագրերից բխող՝ տարաժամկետ վճարումների ժամանակացույցի հիման վրա:

II. Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Բ Ա Ն Ս Ֆ Ե Բ Տ Ն Ե Բ

Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից 2005 թվականին ակնկալվում է ստանալ 10.1 մլրդ դրամի չափով պաշտոնական տրանսֆերտներ:

ՀՀ 2005-2007թթ ՄԺԾԾ-ով պաշտոնական տրանսֆերտների գծով նախատեսված 8.9 մլրդ դրամի դիմաց Նախագծով առաջարկվող 10.1 մլրդ դրամի միջև 1.2 մլրդ դրամ տարբերությունը պայմանավորված է ինչպես ստացվելիք պաշտոնական տրանսֆերտների կազմում տեղի ունեցած որոշ փոփոխություններով, այնպես էլ գումարների հաշվարկման հիմքում դրված 1 ԱՄՆ դոլարի և 1 եվրոյի փոխարժեքների փոփոխությամբ (նշված ցուցանիշների ՄԺԾԾ-ում կիրառված համապատասխանաբար 568.6 դրամի և 653.9 դրամի փոխարեն Նախագծում օգտագործվել է 535.0 դրամը և 615.25 դրամը):

2005 թվականին նախատեսվում է պաշտոնական տրանսֆերտների ստացում մասնավորապես՝

- ա) Հոլանդիայի թագավորությունից՝ 1.0 մլրդ դրամ,
- բ) Եվրոհանձնաժողովից՝ 11.5 մլն եվրո կամ 7.1 մլրդ դրամ, այդ թվում՝ Պարենային ապահովության ծրագրի շրջանակներում՝ 10.0 մլն եվրո և Եվրոհանձնաժողովից նախկինում ստացված վարկերի մարման համար՝ 1,5 մլն եվրո,
- գ) «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում Ճապոնիայի կառավարության կողմից տրամադրված ապրանքանյութական արժեքների դրամայնացումից՝ 0.5 մլրդ դրամ:

Միաժամանակ նախատեսվում է 1.5 մլրդ դրամի չափով դրամաշնորհների ստացում Ճապոնիայի կառավարությունից, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորությունից և Համաշխարհային Բանկից՝ նշված դոնորների աջակցությամբ հանրապետությունում իրականացվելիք մի շարք ծրագրերի գծով ծախսերի ֆինանսավորման նպատակով:

Մ Ա Ս Ի Ի .

Ծ Ա Խ Ս Ե Ր Ի Կ Ա Ն Խ Ա Տ Ե Ս Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության 2005թվականի պետական բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրավորվել է 375.4 մլրդ դրամի չափով: Ծախսերի (առանց վարկավորում՝ հանած մարումը գումարի) ամբողջ ծավալի 79.7 տոկոսը կամ 289.9 մլրդ դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, 20.3 տոկոսը կամ 73.7 մլրդ դրամը՝ կապիտալ ծախսերին: ՀՀ 2004 թվականի նկատմամբ ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծի ծախսային մասը ավելացել է 43.6 մլրդ դրամով: Նշված հավելածի գումարը հիմնականում ուղղվել է սոցիալական ոլորտներում իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովմանը, տնտեսության ճյուղերում իրականացվող ծրագրերի, պաշտպանության և հասարակական կարգի պահպանության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններին պետական աջակցության ծախսերին:

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալները, կազմն ու կառուցվածքը ձևավորվել են՝ ելնելով 2005 թվականի մակրոտնտեսական կանխատեսումներից, գների և սակագների կանխատեսվող ցուցանիշներից, հանրապետությունում տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքը խաթարող նոր բյուջետային պարտքերի չառաջացման անհրաժեշտությունից, ինչպես նաև առանձին ծախսատեսակների գծով մշակված բյուջետային նորմատիվներից: Հաշվի են առնվել նաև բյուջետային հիմնարկների ցանցի կազմի և կառուցվածքի կատարելագործման և բնակչության կենսապահովման խնդիրների լուծման միջոցառումները:

Սոցիալական բնագավառի ծախսերի (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն և ապահովագրություն) տեսակարար կշիռը բյուջետային ծախսերի ամբողջ ծավալում կազմում է 35.9 տոկոս, պաշտպանության, հասարակական կարգի պահպանության և ազգային անվտանգության ապահովության ոլորտների ծախսերինը՝ 20.4 տոկոս, տնտեսության ճյուղերի ծախսերինը՝ 15.6 տոկոս, պետական պարտքի սպասարկման ծախսերինը՝ 3.3 տոկոս, արտաքին տնտեսական աջակցության և արտաքին քաղաքական գործունեության ծախսերինը 5.3 տոկոս, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի ձևավորման ծախսերինը՝ 0.6 տոկոս, համայնքների բյուջեներին ՀՀ պետական բյուջեից պաշտոնական տրանսֆերտների տրամադրման ծախսերինը՝ 3.7 տոկոս:

Ստորև ներկայացվում են ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի ծախսերի ծրագրավորման հիմքում դրվող հիմնական սկզբունքները և առանձնահատկությունները:

Հայաստանի Հանրապետության 2005 թվականի պետական բյուջեի նախագծում **պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերի** ծրագրավորումը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով:

1. 2004 թվականի ընթացքում շարունակվում է իրականացվել պետական կառավարման համակարգի բարեփոխումների և վերակազմակերպման գործընթացը և «Պետական կառավարչական

հիմնարկների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան իրականացվել է պետական կառավարման առանձին մարմինների վերակազմակերպման գործընթացը:

Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը ՀՀ Սահմանադրության և օրենքների, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների և նորմերի համաձայն իրականացնելու նպատակով, ինչպես նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան նշանակվեց Մարդու իրավունքների պաշտպան և ստեղծվեց ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի կիրարկման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության կազմում ստեղծվեց «Հայաստանի Հանրապետության աշխատանքի պետական տեսչություն»՝ հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով /ՀՀ կառավարության 29.07.2004թ. N1146-Ն որոշում/:

Հանրապետությունում անասնաբուժա-հսկաանասնաճարակային սպասարկումները, գյուղատնտեսական կենդանիների համարակալումը, հաշվառումը և տվյալների գրանցումը միասնական Ռեեստրում, ինչպես նաև անտառային տնտեսության զարգացման, անտառի պահպանման, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման աշխատանքները իրականացնելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կազմում ստեղծվեցին համապատասխանաբար «Անասնաբուժության, անասնաբուժության և գյուղատնտեսական կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման գործակալություն»-ը և «Անտառի կառավարման գործակալություն»-ը՝ հիմնարկի առանձնացված ստորաբաժանումների կարգավիճակով /ՀՀ կառավարության 29.01.2004թ. N 96-Ն որոշում/:

2. Ելնելով օրենքով և այլ իրավական ակտերով առանձնացված ստորաբաժանումներին վերապահված լիազորությունները լիարժեք և արդյունավետ իրականացնելու, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցությունը նախարարության աշխատակազմի կողմից ապահովելու դրույթից, ՀՀ 2005թ պետական բյուջեի նախագծում պահպանվել է նրանց պահպանման ծախսերը համապատասխան նախարարության պահպանման ծախսերում ներառելու սկզբունքը:

3. ՀՀ 2005 թ. պետական բյուջեի նախագծում օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերը հաշվարկվել են հիմք ընդունելով 13992.5 հաստիքային միավորների քանակը, որը 2004թ-ի համեմատ ավելացվել է 48.5 միավորով /13992.5-13944/: Թվաքանակի ավելացումը հիմնականում պայմանավորված է վերոնշյալ գործոններով, ինչպես նաև առանձին մարմիններում կառուցվածքային փոփոխությունների հետևանքով աշխատողների թվաքանակի փոփոխություններով:

ՀՀ պետական կառավարման մարմինների աշխատողների թվաքանակի փոփոխությունը արտացոլված է N 2ա աղյուսակում:

4. «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջներին համապատասխան քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվելու ժամանակահատվածում քաղաքացիական ծառայողներին վճարելու նպատակով նախատեսվել է աշխատավարձի ֆոնդ՝ / վրաեկով/ 14.4 մլն դրամի չափով՝ նախորդ տարվա 56.0 մլն դրամի դիմաց:

5. Ծառայողական ավտոմեքենաների պահպանման ծախսերը հաշվարկվել է 620 ավտոմեքենայի համար:

ՀՀ պետական կառավարման մարմինների ծառայողական ավտոմեքենաների քանակի փոփոխությունը արտացոլված է N 2բ աղյուսակում:

6. Հաշվի առնելով ՀՀ վարչապետի որոշումներով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար հատկացվող միջոցների առավել արդյունավետ օգտագործման հանգամանքը, 2005թ. պետական բյուջեի նախագծում պահպանվել է ԱՊՀ անդամ երկրներ մեկնելու համար նախատեսված գործուղման ծախսերը արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերում ներառելու սկզբունքը:

ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերը 2004 թ. համար ծրագրավորվել է 3812.8 մլն դրամի չափով, որը 191.2 մլն դրամով գերազանցում է 2004 թվականի մակարդակը: Ավելացումը պայմանավորված է Եվրո գոտու երկրներում ՀՀ դեսպանություններում և ներկայացուցչություններում դիվանագետների ԱՄՆ-ի դոլարով սահմանված պաշտոնային դրույքաչափերի և ծառայության հետ կապված ծախսերի փոխհատուցման չափերը համարժեք եվրոյով փոխարինելու, ինչպես նաև դեսպանակալ երկրներում բնակվարձերի թանկացման հետ : Սիաժամանակ նախատեսվել է նաև Առևտրի համաշխարհային կազմակերպությունում ՀՀ ներկայացուցչի պահպանման ծախս 21.5 մլն դրամի չափով:

ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերը 2004թ. պետբյուջեի նախագծում սահմանված են 27752.3 մլն դրամի չափով, որը նախորդ բյուջետային տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների նկատմամբ կազմում է համապատասխանաբար՝ 134.6 և 110.4 տոկոս: Սույն համեմատությունը արտացոլված է աղյուսակ 2-ում:

Հայաստանի Հանրապետության 2005թ. պետական բյուջեի նախագծով պետական կառավարման մարմիններին ուղղվող ծախսերը 1660.9 մլն դրամով պակաս են «Հայաստանի Հանրապետության 2005-2007 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 17-ի N985-Ն որոշմամբ հաստատված 2005թ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված չափաքանակից, որը պայմանավորված է քաղաքացիական ծառայողների աշխատավարձի հաշվարկման բազային պաշտոնային դրույքաչափի նախատեսված 30.0 հազար դրամը 2004 թվականին գոր-

ծող 20.0 հազար դրամի չափով նախատեսելու, ինչպես նաև պետական կառավարման մարմինների աշխատակազմերի մյուս աշխատակիցների, այդ թվում տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողների պաշտոնային դրույքաչափերը անփոփոխ թողնելու հետ /նախատեսված էր 20 % ավելացում/:

Աշխատավարձի ֆոնդ - օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների աշխատողների աշխատավարձի ֆոնդը 2005 թ. ծրագրավորվել է 15216.3 մլն. դրամի չափով, որը 2004 թ. մակարդակը գերազանցում է 1068.2 մլն դրամով, որը պայմանավորված է պետական կառավարման համակարգի բարեփոխումների իրականացման հետևանքով կառավարման նոր մարմինների ստեղծմամբ, «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի բնականոն աճով (հողված 10), «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան հարկային ծառայողների վարձատրության սանդղակի փոփոխման հետ կապված հարկային ծառայողների աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ՝ շուրջ 500.0 մլն. դրամ, «Հանրային ծառայությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ՝ շուրջ 150.0 մլն. դրամ, «Մաքսային ծառայության մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան մաքսային ծառայողի և հարկադիր կատարողի աշխատավարձերի բնականոն աճով, «Դատավորի կարգավիճակի մասին», «Դատախազության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան դատավորների և դատախազների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հաշվարկվող հավելավճարների աճով, ինչպես նաև պետական կառավարման առանձին մարմիններում աշխատողների թվաքանակի ավելացմամբ:

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ - հաշվարկվել է «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաներ- ծրագրավորվել է 144.7 մլն. դրամի չափով՝ Կոնդի առանձնատների պահպանման համար:

Այլ տրանսֆերտներ - ԱԺ-ի պատգամավորների պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերն են՝ ՀՀ օրենքին համապատասխան մեկ պատգամավորին հատկացվող ամսական 15.0 հազ. դրամ գումարի հաշվարկով:

Ընթացիկ ներքին այլ տրանսֆերտներ - «Դատախազության մասին» և «Չինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքներին համապատասխան ՀՀ դատախազության աշխատակիցների թոշակի անցնելու կապակցությամբ տրվող միանվագ նպաստի և զինծառայողների պարենային բավարարման համար անհրաժեշտ գումարն է, ինչպես նաև ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի հասարակական հիմունքներով գործող անդամների գործունեության հետ կապված դրամական փոխհատուցման գումարը:

Գրասենյակային ապրանքներ և նյութեր - ծրագրավորվել է 498.5 մլն. դրամի չափով, որը 2004թ. մակարդակից պակասել է 43.9 մլն դրամով:

Փափուկ գույք և հանդերձանք - նախատեսվել է միջոցներ ՀՀ դատախազության աշխատակիցների համար ձմեռային համազգեստի ձեռքբերման նպատակով:

Ղեկորայք և վիրակապային նյութեր- նախատեսվել է ՀՀ սոցիալական ապահովության նախարարության կազմում գործող ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության գործունեության համար անհրաժեշտ ղեկորայքի և վիրակապային նյութերի ձեռք բերման համար:

Այլ ծախսեր - նախատեսվել է ՀՀ Նախագահի կողմից առանձին անձանց պարգևատրելու համար անհրաժեշտ մեդալների և շքանշանների պատրաստման ծախսեր:

Գործուղումներ և ծառայողական ուղևորություններ - ծրագրավորվել է 955.0 մլն. դրամի չափով, որը 2004թ. մակարդակը գերազանցում է 77.5 մլն դրամով:

Տրանսպորտային ծառայությունների ծախսեր - ծրագրավորվել է 902.4 մլն. դրամի չափով, որը 2004 թ. մակարդակը գերազանցում է 210.1 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ Նախագահի հատուկ չվերթների սպասարկման համար անհրաժեշտ միջոցների նախատեսմամբ:

Կապի ծառայությունների վճար - ծրագրավորվել է 718.3 մլն. դրամի չափով, որը 2004 թ. մակարդակը գերազանցում է 144.8 մլն դրամով: Ավելացումը հիմնականում պայմանավորված է պետական կառավարման համակարգի բարեփոխումների իրականացման հետևանքով պետական կառավարման նոր մարմինների ստեղծմամբ, ՀՀ դատարանների և մարզպետարանների կապի ծառայությունների հետ կապված ծախսերի կանոնակարգմամբ, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ԱՀԿ ծանուցման գործակալության ինտերնետ կապի ծառայություններից օգտվելու համար համապատասխան միջոցների նախատեսմամբ:

Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր - ծրագրավորվել է 675.1 մլն. դրամի չափով, որը 2004թ. մակարդակը գերազանցում է 69.3 մլն դրամով: Ավելացումը հիմնականում պայմանավորված է ՀՀ դատարանների նշված ծախսերի կանոնակարգմամբ, պետական կառավարման համակարգի բարեփոխումների իրականացման հետևանքով պետական կառավարման նոր մարմինների ստեղծմամբ, ինչպես նաև պետական կառավարման առանձին մարմիններում աշխատողների թվաքանակի ավելացմամբ:

Ջրնուղ - կոյուղուց օգտվելու վարձի վճարման ծախսեր - ծրագրավորվել է 40.3 մլն. դրամի չափով, որը 2004թ. մակարդակը գերազանցում է 2.0 մլն դրամով, ավելացումը հիմնականում պայմանավորված է ջրի նորմայի /օրական 30 լ/ ավելացման հետ կապված ծախսերի նախատեսմամբ:

Այլ կոմունալ ծախսեր - ներառում է աղբահանման և դեռատիզացիայի ծախսերը, ծրագրավորվել է 23.4 մլն. դրամի չափով, որը 2004.թ. մակարդակը գերազանցում է 0.9 մլն դրամով:

Այլ ծախսեր - ներառում են՝

ա/ ներկայացուցչական ծախսերը - ծրագրավորվել է 475.6 մլն. դրամի չափով, որը 2004.թ. մակարդակը գերազանցում է 58.9 մլն դրամով:

բ/ վարչական շենքերի վարձակալության վճարները - ծրագրավորվել են ներկայացված պայմանագրերին համապատասխան:

գ/ դեկավարի ֆոնդ - ներառում է ՀՀ նախագահի, ՀՀ Ազգային ժողովի նախագահի և ՀՀ վարչապետի ֆոնդերը՝ պահպանվել է նախորդ տարիների մակարդակը:

դ/ այլ ծառայությունների ձեռք բերում - ծրագրավորվել է 279.6 մլն. դրամի չափով, որը 2004.թ. մակարդակը գերազանցում է 145.8 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ Նախագահի 2004 թ. մայիսի 20-ի N ՆՀ-113-Ն կարգադրության համաձայն գրականության և արվեստի, ինչպես նաև ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառներում պետական մրցանակներ հիմնելու և շնորհելու, գույքահարկի և հողի հարկի անդորագրերի և ծանուցագրերի, ինչպես նաև վիզային պիտակների տպագրության, Առևտրի համաշխարհային կազմակերպությունում ՀՀ ներկայացուցչի պահպանման համար անհրաժեշտ միջոցների նախատեսմամբ:

ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ Նախագահի աշխատակազմի, ՀՀ կառավարության աշխատակազմի, ՀՀ Սահմանադրական դատարանի 2005 թ. պահպանման ծախսերը հաշվարկելիս կիրառվել է առանձին մոտեցում՝ ելնելով նշված մարմինների գործառական առանձնահատկություններից:

Կապիտալ ակտիվների ձեռք բերում -ծրագրավորվել է ընդամենը 366.7 մլն դրամի չափով, որը պայմանավորված է պետական և տարածքային կառավարման առանձին մարմիններում սարքերի և սարքավորումների, ինչպես նաև ծառայողական ավտոմեքենաների ձեռք բերման համար անհրաժեշտ միջոցների նախատեսմամբ:

Հայաստանի Հանրապետությունում **կրթությունն** առավել կարևորվող և առաջնային համարվող բնագավառներից է: Կրթական համակարգի պահպանումն ու զարգացումը, որպես միջազգային ասպարեզում երկրի մրցունակությունն ապահովելու գրավական, այսօր էլ պետական ու ազգային կարևորագույն խնդիր է համարվում, և բնագավառի հետագա զարգացումը ՀՀ կառավարության կողմից դիտվում է որպես տնտեսության առաջընթացի առաջնային գերակայություն:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված կրթության բնագավառի ծախսերը (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի) կազմում են 55399.2 մլն դրամ: Ծախսերի աճը 2004 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ կազմում է 10203.8 մլն դրամ կամ 22.6 տոկոս:

2005 թվականի պետական բյուջեի նախագծով կրթության բնագավառի ծախսերը միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվածի նկատմամբ աճել են 753.6 մլն դրամով: Միջնաժամկետ հեռանկարում կրթության ծախսերը նախատեսվում է հասցնել 2006 թվականին 59389.7 մլն դրամի, իսկ 2007 թվականին՝ 67714.6 մլն դրամի:

Կրթության բնագավառում հիմնական գերակայություն է համարվում **հանրակրթության ոլորտը**, որին էլ ուղղված են վերջին տարիներին ՀՀ կառավարության կողմից կրթության ոլորտում՝ համակարգի կառավարման ու արդյունավետության բարձրացման, հանրակրթության բովանդակության բարեփոխման ու որակի բարելավման ուղղությամբ իրականացվող միջոցառումները:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով «Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն» ենթախմբով նախատեսվել է 44085.1 մլն դրամ: Ծախսերը 2004 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ աճել են 8215.3 մլն դրամով կամ 22.9 տոկոսով, իսկ 2005 թվականի միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվածի նկատմամբ՝ աճել են 350.7 մլն դրամով կամ 0.8 տոկոսով: Ծախսերի աճը 2004 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ հիմնականում պայմանավորված է՝

- մանկավարժական, վարչական, ուսումնասօժանդակ և տնտեսական աշխատողների աշխատավարձերի աճով՝ 10718.5 մլն դրամով (միաժամանակ, համակարգի ռացիոնալացման իրականացման և երեխաների թվաքանակի նվազման արդյունքում, աշխատավարձի ֆոնդի գծով տնտեսվել է 2002.7 մլն դրամ),

- պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների աճով՝ 1006.4 մլն դրամով,
- վառելիքի և ջեռուցման ծախսերի աճով՝ 41.9 մլն դրամով՝ կապված սեփական կաբ-սայատների միջոցով ջեռուցման կազմակերպման հետ,

- ջրի սակագնի բարձրացման հետ կապված՝ 48.7 մլն դրամով,
- Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի (ներառյալ Հայաստանի Սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով իրականացվող աշխատանքների) գծով գումարների ավելացմամբ՝ 947 մլն դրամով,

- ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունները մանկավարժական կադրերով համալրման նպատակով նախատեսվող ծախսերի աճով՝ 22.9 մլն դրամով,

- «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գծով նախատեսված ծախսերի աճով՝ 27.5 մլն դրամով,

- «Դպրոցականների օլիմպիադաների անցկացում» ծրագրի գծով ծախսերի աճով՝ 2.0 մլն դրամով,

- ինչպես նաև նոր ծրագրերի գծով միջոցների նախատեսմամբ՝ 210.5 մլն դրամի չափով:

Միաժամանակ կրթական օբյեկտների հիմնանորոգման և կապիտալ շինարարության գծով գումարները նվազել են 2813.4 մլն դրամով:

Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության գծով ծախսերը 2006 թվականին նախատեսվում է հասցնել 47557.4 մլն դրամի, իսկ 2007 թվականին՝ 55628.1 մլն դրամի:

Հանրակրթական դպրոցների 2005 թվականի ծախսերը հաշվարկվել են՝ հիմք ընդունելով ՀՀ 2005-2007 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով հանրակրթության ոլորտում ռացիոնալացման գծով նախատեսված միջոցառումները.

ա/ 2004/2005 ուսումնական տարվանից ուսուցչական անձնակազմի հիմնական ուսումնական ծանրաբեռնվածության բարձրացում՝ շաբաթական մինչև 22 ժամ,

բ/ դպրոցներում աշակերտների օպտիմալ թվաքանակի սահմանում, անհրաժեշտության դեպքում՝ դպրոցների միավորում (ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 24-ի N 1236 և

2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 2047-Ն որոշումների կատարում (թերհամալրված դասարանների վերահամալրում, խիստ թերհամալրված դասարանների դեպքում՝ երկու, երեք դասարանների համախմբում, դպրոցների միավորում, դպրոցների տիպերի փոփոխություն)՝ պահպանելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N 773 և 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N1937-Ն որոշումների պահանջները):

Վերոնշված միջոցառումների իրականացման արդյունքում, ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով հանրակրթական դպրոցների ծախսերում աշխատավարձի գծով հաշվարկված 27554.1 մլն դրամը հնարավորություն կտա 32850.1 մանկավարժական դրույքների միջին ամսական աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, հասցնել 50551 դրամի, 4363.5 վարչական դրույքներին՝ 51761.8 դրամի, իսկ 19344.1 ուսումնաօժանդակ և տնտեսական դրույքների միջին ամսական աշխատավարձը՝ 21180.6 դրամի:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների՝ կառավարման և ֆինանսավորման նոր կարգի անցման ժամանակացույցի՝ 2005 թվականին կավարտվի հանրակրթական բոլոր դպրոցների անցումը ֆինանսավորման նոր ձևի և խորհուրդներով կառավարման համակարգի (ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 25-ի թիվ 444 որոշում):

Ըստ աշակերտների թվի ֆինանսավորման համակարգի անցած դպրոցներին հատկացվող բյուջետային ծախսերը հաշվարկվում են մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի հաշվարկի բանաձևով՝ $B=AN+C$, որտեղ՝

B-ն՝ մեկ տարվա համար հաստատությանը հատկացվող ամբողջական գումարն է,

N-ը՝ հաստատության սովորողների թիվը,

A-ն՝ մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը, որը 2005 թվականին կազմում է 51702 դրամ՝ 2004 թվականի 36068 դրամի դիմաց,

C-ն՝ հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը, որը 2005 թվականին կազմում է 6600.0 հազար դրամ՝ 2004 թվականի 4600.0 հազ. դրամի դիմաց:

Հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը բարձր լեռնային բնակավայրերում գտնվող հանրակրթական հաստատությունների համար հաշվարկվում է նույն բանաձևով՝ այն բազմապատկելով 1.21 գործակցով, իսկ լեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1.07 գործակցով: Բարձր լեռնային բնակավայրերում գտնվող հանրակրթական հաստատությունների մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը հաշվարկվում է նույն բանաձևով՝ այն բազմապատկելով 1.11 գործակցով:

Ըստ աշակերտների թվի բանաձևով հաշվարկը, սակայն, չի կիրառվի ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի թիվ 773 որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված՝ աշակերտների թվից անկախ ֆինանսավորվող հանրակրթական դպրոցների նկատմամբ, որոնց ֆինանսավորման չափը որոշվում է ըստ դասարան-կոմպլեկտների թվի: Փոքր համակազմով (մինչև 100 աշակերտ ունեցող) այն հանրակրթական դպրոցներում, որտեղ ըստ դասարան-կոմպլեկտների թվի որոշված

ֆինանսավորման չափը ցածր է, քան տվյալ դպրոցի համար բանաձևով հաշվարկված պահպանման ծախսերի գումարը, ապա ընդունվում է ըստ դասարան-կոմպլեկտների թվի հաշվարկված գումարը:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով «Ըստ աշակերտների թվի ֆինանսավորման համակարգի անցած դպրոցներում ուսուցման գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվել է 34924.9 մլն դրամ:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պետությունը տարրական ընդհանուր կրթական ծրագրերով սովորող բոլոր երեխաներին անվճար ապահովում է դասագրքերով (բացառությամբ օտար լեզվի և երաժշտության դասագրքերի): Այս նպատակով ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով «Տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով ապահովում» ծրագրով նախատեսվել է 301.1 մլն դրամ:

Դպրոցականների օլիմպիադաների և հանրապետական սպարտակիադայի անցկացման նպատակով ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է, համապատասխանաբար, 27.0 և 35.0 մլն դրամ:

Ներքին սփյուռքի, այդ թվում Ջավախքի դպրոցների դասագրքերի պահանջարկը բավարարելու և դասագրքերի տպագրման միասնական քաղաքականություն ապահովելու, ինչպես նաև դպրոցների համար գույքի ձեռքբերման նպատակով 2005 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ կրթության և գիտության նախարարությանը նախատեսվել է, համապատասխանաբար, 70.0 մլն և 30 մլն դրամ:

Կենտրոնացված կարգով ավարտական փաստաթղթերի, գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների, ծրարների ձեռքբերման նպատակով ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ կրթության և գիտության նախարարությանը նախատեսվել է 83.0 մլն դրամ:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով 34.9 մլն դրամ է նախատեսվել Հայաստանի Հանրապետության հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունները մանկավարժական կադրերով համարելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտում գնահատման միասնական համակարգ ստեղծելու և կրթության բնագավառի միջազգային զարգացումներին ինտեգրվելու նպատակով ստեղծվել է «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որի գծով ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է շուրջ 130.0 մլն դրամ:

4-6-րդ դասարանցիների ամենամյա ստուգատես-հավաքների անցկացման նպատակով ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 8.3 մլն դրամ՝ «Պատանի հետազոտողի և ստեղծագործողի հեռակա դպրոց» ծրագրի գծով դրամաշնորհի տրամադրում» ծրագրով:

Հանրապետության 180 դպրոցների ինտեքնետային ցանցի սպասարկման և համակարգչային սարքավորումների պահպանման համար նախատեսվել է 72.2 մլն դրամ:

ՀՀ Լոռու, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տրանսպորտային ծախսերը փոխհատուցելու և տրանսպորտային ծառայությունների վճարների գծով ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 31.7 մլն. դրամ:

Վերոնշյալներից բացի՝ ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով միջոցներ են նախատեսվել նաև հանրակրթական մի շարք ծրագրերի իրականացման նպատակով: Դրանք են՝

- «Ռ-ազմագիտության կաբինետների վերականգնման գծով պետական պատվեր»՝ 5.3 մլն դրամ,

- «Հանրակրթական դպրոցներում նախապատրաստական ուսուցման գծով պետական պատվեր» ծրագրի իրականացում «Երևանի «Սխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-միջոցով» ծրագրի գծով՝ 23.2 մլն դրամ,

-«Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում»՝ 30.0 մլն դրամ,

- «Կրթական օբյեկտների հիմնանորոգում»՝ 4546.3 մլն դրամ,

- «Կրթական օբյեկտների շինարարություն»՝ 243.0 մլն դրամ:

Կրթության ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ վարկային ծրագրերը.

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության որակի և համապատասխանության» վարկային ծրագիր, որի նպատակն է կրթության ոլորտի արդյունավետության բարելավումն ու ամրապնդումը, դպրոցական կրթության համակարգի որակի և համապատասխանության բարձրացումը, կրթության համակարգում գնահատման գործառույթների բարելավումը:

Ծրագրի շրջանակներում 2005 թվականի ընթացքում նախատեսվում է՝

- Գործող ուսումնական ծրագրերով 10 առարկաների թեստերի վերամշակում,

- բուհերի համար ընդունելության չափանիշների մշակում,

- հայոց լեզվի, մաթեմատիկայի, բնագիտական և հասարակագիտական առարկաների նոր ուսումնական ծրագրերի մշակում,

- հայոց լեզվի և մաթեմատիկայի ընթացիկ թեստերի մշակում,

- նոր առարկայական ուսումնական ծրագրերի մշակման աշխատանքային խմբերի վերապատրաստում և օժանդակում,

- նոր առարկայական թեստերի մշակման աշխատանքային խմբերի միջազգային փորձագետի կողմից վերապատրաստում և օժանդակում,

- տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ուսուցման ներդրում բնագիտական 4 առարկաների նոր ուսումնական ծրագրերում,

- համադպրոցական համակարգչային ինտերնետ պորտալի մշակում,

- համակարգչային կենտրոնների ստեղծում հանրակրթական դպրոցներում և համադպրոցական համակարգչային ցանցի հիմնում,

- ուսուցման համագործակցային մեթոդների ձեռնարկի տպագրում,

- բարեփոխումներում ընդգրկված դպրոցների 100 տնօրենների վերապատրաստում,

- սոցիալական աջակցության տարբեր ծրագրերի իրականացում կրճատված ուսուցիչներին:

2. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ վարկային ծրագիր կրթության ոլորտում, որի շրջանակներում 2005 թվականին նախատեսվում է իրականացնել մի շարք համայնքների դպրոցների շենքերի վերանորոգման և ջեռուցման համակարգերի վերականգնման, ինչպես նաև դպրոցական կահույքի մատակարարման աշխատանքներ:

Կարևորելով կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության հարցերը, բնականոն զարգացման և սոցիալական ինտեգրացիայի խնդիրները, **հատուկ կրթության** համակարգում 2005 թվականին կշարունակվեն համակարգում իրականացվող բարեփոխումները՝ ուղղված համակարգի կառավարման արդյունավետության բարձրացմանն ու ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործմանը: Բյուջետային միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման նպատակով՝ հատուկ կրթության համակարգում 2005 թվականին կիրականացվի 10 փորձնական դպրոցների նախապատրաստում ըստ աշակերտների թվի ֆինանսավորման համակարգի անցման: Այս հաստատություններում կստեղծվի կոլեգիալ կառավարման մարմին՝ հաստատության խորհուրդ, ինչպես նաև կիրականացվեն տնօրենների, խորհրդի անդամների և հաշվապահների վերապատրաստումներ:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով «**Հատուկ ընդհանուր կրթություն**» ենթախմբով նախատեսվել է 3408.6 մլն. դրամ. աճը 2004 թվականի նկատմամբ կազմել է 976.1 մլն դրամ կամ 40.1 տոկոս: Ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է համակարգի աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ, որը կիրականացվի հանրակրթության համակարգում իրականացվող բարձրացումների ընդհանուր սկզբունքներով, ինչպես նաև հատուկ դպրոցներում սովորողների սննդի կազմակերպման համար նախատեսված հաշվարկային նորմատիվի 20 տոկոսով բարձրացմամբ:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նշված ենթախմբով նախատեսված միջոցները կուղղվեն 52 հաստատություններում հատուկ ընդհանուր կրթական ուսուցման գծով պետական պատվերի իրականացմանը, որոնցում կրթություն կստանան 11054 սաներ: Հաշվարկներում տարեկան աշխատավարձի ֆոնդը կազմել է 1767.9 մլն դրամ, ինչը հնարավորություն կտա 1929.9 մանկավարժական դրույքների միջին ամսական աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, հասցնել 50023.4 դրամի, 175.5 վարչական դրույքներին՝ 51917 դրամի, իսկ 2080 ուսումնաօժանդակ և տնտեսական դրույքների միջին ամսական աշխատավարձը՝ 20037.2 դրամի:

Միջնաժամկետ հեռանկարում հատուկ ընդհանուր կրթության ծախսերը նախատեսվում է հասցնել՝ 2006 թվականին 4062.1 մլն դրամի, իսկ 2007 թվականին՝ 4173.3 մլն դրամի:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով «**Արտադպրոցական դաստիարակություն**» ենթախմբով նախատեսվել է 828.5 մլն դրամ, որը 2004 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ աճել է 120.0 մլն դրամով կամ 16.9 տոկոսով, իսկ միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվածի նկատմամբ՝ 22.7 մլն դրամով կամ 2.8 տոկոսով: Ծախսերի աճը հիմնականում

պայմանավորված է Գյումրու «Ռ. Էմմիյանի անվան թեթև արվեստիկայի մարզադպրոցի», «Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոցի» և «Գորիսի մարզադպրոցի» գծով գումարների նախատեսմամբ, համապատասխանաբար 10.8; 6.1 և 5.8 մլն դրամի չափով: Մնացած աճը պայմանավորված է արտադրողական հիմնարկների աշխատողների միջին ամսական աշխատավարձերի աճի և ջրի սակագնի բարձրացման գծով լրացուցիչ գումարների նախատեսմամբ:

2006-2007 թվականների համար արտադրողական դաստիարակության գծով ծախսերը նախատեսվել են 827.8 մլն դրամի չափով:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով **«Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն» ենթախմբով** նախատեսվել է 663.6 մլն դրամ, որը 2004 թվականի նկատմամբ աճել է 303.7 մլն դրամով կամ 84.4 տոկոսով, իսկ միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվածի նկատմամբ՝ 139.9 մլն դրամով կամ 26.7 տոկոսով: Աճը 2004 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ հիմնականում պայմանավորված է համակարգի աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ, որը կիրականացվի հանրակրթության համակարգում իրականացվող բարձրացումների ընդհանուր սկզբունքներով, ինչպես նաև արհեստագործական ուսումնարաններում կրթաթոշակի գծով գումարների նախատեսմամբ՝ 148.0 մլն դրամի չափով՝ պայմանավորված արհեստագործական հոսքով ավագ դպրոցները արհեստագործական ուսումնարանների վերակազմակերպմամբ :

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախնական մասնագիտական /արհեստագործական/ հաստատությունների ծախսերում աշխատավարձի գծով հաշվարկված 405.5 մլն դրամը հնարավորություն կտա 462 մանկավարժական դրույքների միջին ամսական աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, հասցնել 45839.7 դրամի, 46 վարչական դրույքներինը՝ 47942.7 դրամի և 528.5 ուսումնաօժանդակ ու տնտեսական դրույքներինը՝ 19698.8 դրամի:

2006-2007 թվականների համար նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով ծախսերը նախատեսվել են, համապատասխանաբար, 628.6 և 752.7 մլն դրամ:

«Միջին մասնագիտական կրթություն» ենթախմբով ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 1454.5 մլն դրամ: Աճը 2004 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ կազմում է 241.2 մլն դրամ կամ 19.9 տոկոս: Ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի և սոցապվճարների գծով ծախսերի աճով՝ կապված միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների աշխատողների աշխատավարձերի 15 տոկոսով բարձրացման հետ, իսկ հանրակրթական ծրագրեր իրականացնող պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մանկավարժների և վարչական աշխատողների միջին ամսական աշխատավարձերի բարձրացումը կատարվել է հանրակրթության համակարգում իրականացվող բարձրացումների ընդհանուր սկզբունքներով: Միաժամանակ ծախսերի հաշվարկներում սննդի հաշվարկային նորմատիվը բարձրացվել է 20 տոկոսով, ինչպես նաև հաշվի է առնվել ջրի սակագնի բարձրացումը:

2006-2007 թվականներին նշված ենթախմբի գծով ծախսերը նախատեսվում է հասցնել, համապատասխանաբար ըստ տարիների, 1540.3 և 1559.2 մլն դրամի:

«Բարձրագույն և հետրուհական մասնագիտական կրթություն» ենթախմբով ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 4205.5 մլն դրամ, որը 2004 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ աճել է 319.2 մլն դրամով կամ 8.2 տոկոսով, իսկ միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվածի նկատմամբ՝ 189.8 մլն դրամով կամ 4.7 տոկոսով: Ծախսերի աճը 2004 թվականի հաստատվածի նկատմամբ պայմանավորված է՝

ա/ ՀՀ պաշտպանության նախարարության ռազմաուսումնական հաստատությունների գծով՝ 229.5 մլն դրամ և ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության՝ այլ երկրներում սովորողների գծով 42.6 մլն դրամ ծախսերի նախատեսմամբ, որոնք ՀՀ 2004 թվականի պետական բյուջեով նախատեսված են եղել ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ընդհանուր ծախսերում:

բ/ ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության բարձրագույն ուսումնական հաստատությունների գծով ծախսերի աճով 122.8 մլն դրամով, որից 27.7 մլն դրամը նախատեսվել է Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռազմաբժշկական ֆակուլտետի կուրսանուների սննդի փոխհատուցման գծով, իսկ մնացածը կապված է բուհերում անվճար ընդունելության լրացուցիչ 192 տեղերի հատկացման հետ:

գ/ «Ձեյթուն» ուսանողական ավան» հիմնադրամի գծով 15.1 մլն դրամի նախատեսմամբ, ինչը 2004 թվականին նախատեսված է եղել ՀՀ կառավարության պահուստային ֆոնդում:

2005 թվականի ծախսերի հաշվարկներում հաշվի է առնվել նաև ջրի սակագնի բարձրացումը:

Միաժամանակ, կրթական օբյեկտների շինարարության գծով գումարների չնախատեսման հետ կապված՝ ծախսերը նվազել են 100.0 մլն դրամով:

2006-2007 թվականներին նշված ենթախմբի գծով ծախսերը նախատեսվել են 4132.6 մլն դրամի չափով:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով **«Լրացուցիչ կրթություն»** ենթախմբով նախատեսվել է 753.3 մլն դրամ: ՀՀ 2004 թվականի պետական բյուջեով հաստատվածի նկատմամբ ծախսերն աճել են 28.3 մլն դրամով կամ 3.9 տոկոսով, իսկ միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվածի նկատմամբ՝ 128.8 մլն դրամով կամ 20.6 տոկոսով: 2004 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ ծախսերի աճը պայմանավորված է ՀՀ առողջապահության նախարարության ծախսերի ավելացմամբ 8.1 մլն դրամով՝ կապված մարզերից նպատակային գործուղվող վերապատրաստվող բժիշկների թվաքանակի ավելացման հետ, վերապատրաստումների գծով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ծախսերի ավելացմամբ՝ 18.0 մլն դրամով, ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության ծախսերի ավելացմամբ 28.2 մլն դրամով՝ պայմանավորված Ռուսաստանի Դաշնության քաղաքապետության և հակահրդեհային ծառայության ակադեմիաներում ունկնդիրների ուսուցման գծով ծախսերի նախատեսմամբ:

2005 թվականին կրթության ոլորտում նախատեսվում է նաև շարունակել **Մեծ Բրիտանիայի Թագավորության աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ ծրագրի գծով համաֆինանսավորման դրամաշնորհային ծրագիրը**, որի շրջանակներում նախատեսվում է կրթական համակարգի ենթակառուցվածքների վերականգնման նպատակով նախագծային աշխատանքների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքային հզորացման համար տեղական նորընտիր իշխանությունների և դպրոցների տնօրենների, խորհուրդների ու հաշվապահների ուսուցման, սեմինարների և խորհրդատվությունների գծով աշխատանքների իրականացում: Ծրագիրը նախատեսված է ավարտել 2005 թվականին: Գրամաշնորհով իրականացվող ծրագրի գծով ծախսերը 2004 թվականի համեմատ նվազել են 22.1 մլն դրամով:

Միաժամանակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գծով 14.2 մլն դրամի ծախսերը նախատեսվել են ՀՀ պետական բյուջեի «Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն» խմբով:

Ծախսերի հաշվարկներում հաշվի է առնվել նաև ջրի սակագնի բարձրացումը:

2005 թվականին շարունակվելու է իրականացվել սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ամենամյա դասընթացների ծրագիրը, որի նպատակն է աջակցել սփյուռքում հայապահպան կրթական գործունեությանը:

2006-2007 թվականներին լրացուցիչ կրթության գծով ծախսերը նախատեսվել են 640.9 մլն դրամի չափով:

Գիտությունը, որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն, գտնվում է պետության հովանավորության ներքո և այդ նպատակով 2005 թվականի պետական բյուջեով նախատեսված գիտության ծախսերը կուղղվեն.

ա/ գերակա գիտական ուղղությունների կայուն զարգացման ապահովմանը,

բ/ գիտական հիմնարկների նյութատեխնիկական հիմքի ամրապնդմանը, համապարփակ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծմանը, միջազգային գիտական կապերի զարգացմանը,

գ/ գիտական երիտասարդ հերթափոխի ձևավորմանը՝ կատարելագործելով բարձրագույն և հետբուհական /մագիստրոսական և ասպիրանտական/ մասնագիտական կրթության համակարգը և մշակելով պետական ու հասարակական շահերին համապատասխանող միջոցառումներ,

դ/ գիտական ներուժի պահպանմանը՝ կանխելով գիտական բարձրորակ կարգերի արտահոսքը և ստեղծելով բարենպաստ պայմաններ՝ նրանց գիտական գործունեության համար:

Գիտության ոլորտի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման մեջ գիտության գործուն դեր ունենալը, գիտական հետազոտությունների արդյունքները տնտեսության մեջ արդյունավետ օգտագործելը:

Գիտության զարգացումը պետք է ընթանա «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի և գիտության ու գիտատեխնիկական քաղաքականության հիմնադրույթներով, ըստ որի պետության կողմից գիտության ֆինանսավորումն կիրականացվի

2. բազային,
3. նպատակային-ծրագրային,
4. պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման ձևերով:

2005 թվականին նախատեսվում է գործածության մեջ դնել բազային ֆինանսավորմամբ հիմնարար և կարևորագույն կիրառական նշանակություն ունեցող թեմաների ֆինանսավորումը: Չուգահեռաբար բազային ֆինանսավորման կներկայացվեն նոր նախագծեր գիտական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման գծով:

Գիտության բնագավառի ծախսերը ՀՀ 2005 թվականին պետական բյուջեի նախագծում ներկայացվել են 2004 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ 22 տոկոս աճով և կազմում է **4052.1 մլն դրամ**, որն ամբողջապես ապահովում է նաև «Գիտության և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի հոդված 23-ի պահանջը՝ ըստ որի պետությունը յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեի ծախսային մասում նախատեսում է նախորդ տարվա համեմատ բյուջեի եկամտային մասի աճին համամասնորեն ավելացող գումարից ոչ պակաս հատկացումներ:

Գիտության բնագավառի ծախսերից՝

ա/ **բազային** ֆինանսավորում ստացող կազմակերպությունների համար նախատեսվում է **2100.8 մլն դրամ**՝ նախորդ տարվա հաստատված բյուջեի 713.4 մլն դրամի դիմաց, որից՝

հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների կիրականացման ծրագրի գծով՝ 1299.5 մլն դրամ,

գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի գծով՝ 665.7 մլն դրամ, որի մեջ ներառված են Միջուկային Հետազոտությունների Միացյալ Ինստիտուտին ՀՀ անդամակցության վճարը /31.3 մլն դրամ/ և «Նորավանք» գիտակրթական հիմնադրամին սուբսիդավորումը /70.2 մլն դրամ/ :

ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի գծով՝ 81.0 մլն դրամ,

գիտական կադրերի պատրաստման պետական ծրագրի գծով՝ 54.4 մլն դրամ:

բ/ **պետական նպատակային-ծրագրային** ֆինանսավորման համար նախատեսվում է **551.0 մլն դրամ**՝ նախորդ տարվա հաստատված բյուջեի 513.2 մլն դրամի դիմաց և աճը պայմանավորված է ՀՀ պաշտպանության նախարարության պատվերով կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով ծախսերի ավելացմամբ:

գ/ **պայմանագրային (թեմատիկ)** ֆինանսավորման համար նախատեսվում է **1194.0 մլն դրամ**, կամ 1.7 անգամ կրճատվել է նախորդ տարվա մակարդակը, որը պայմանավորված է 2005-2007թթ ՄԺԾԾ-ով տարվող քաղաքականությամբ, որով նախատեսվում է գիտության ֆինանսավորման ընդհանուր ծավալում պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մասնաբաժնի

նվազեցման հաշվին բազային և նպատակային-ծրագրային ֆինանսավորման մասնաբաժինների ընդլայնում:

2005 թվականին նախատեսվում է գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ՝ **206.2 մլն դրամ** ընդհանուր գումարով:

Գիտության բնագավառի ծախսերը ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծում ներկայացվել են 2005-2007 թվականների միջինժամկետ պետական ծախսային ծրագրով 2005 թվականի համար նախատեսված չափաբաժիններից 274.2 մլն դրամով ավել, որը պայմանավորված է գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարների ավելացմամբ և «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի սուբսիդավորումը գիտության ծախսերում նախատեսելու հետ /նախկինում ներառված էր կրթության ոլորտի ծախսերում/:

2005-2007 թվականների միջինժամկետ պետական ծախսային ծրագրով գիտության ծախսերի համար 2006 թվականին նախատեսվում է 4205.7 մլն դրամ, իսկ 2007 թվականին՝ 4684.4 մլն դրամ:

Կրթության և գիտության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ նախորդ տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ, արտացոլված է սույն բացատրագրի N 3 աղյուսակում:

Առողջապահության ոլորտում 2005 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագիծը կազմվել է՝ հիմք ընդունելով ՀՀ 2005-2007 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գործառնական դասակարգման «05. Առողջապահություն» խմբի գումարը /առանց առողջապահության բնագավառում պետական կառավարման ծախսերի/ նախատեսվում է 32326.4 մլն դրամ՝ նախորդ տարվա 24508.6 մլն դրամի դիմաց, կամ աճը կազմում է 31.9 տոկոս:

Հայաստանի Հանրապետության 2005-2007 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով առողջապահությանն ուղղվող ծախսերը 2006 թվականին կանխատեսվում են 35788.5 մլն դրամ (2005 թվականի բյուջեի նախագծի նկատմամբ աճը կազմում է 10.7 տոկոս), իսկ 2007 թվականին՝ 49072.4 մլն դրամ (2006 թվականի նկատմամբ աճը կազմում է 37.1 տոկոս): 2005-2007 թվականների Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտի ծրագրային գերակայություններն են շարունակվելու համարվել բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման, ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության դերի իրական բարձրացման, մոր և մանկան առողջության ապահովման, սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելման և բնակչության աղքատ խավերի կարիքների բավարարման ծրագրերը:

Հայաստանի Հանրապետության 2005 թվականի պետական բյուջեով առողջապահության ծախսերի ձևավորումն ունի երկու հիմնական մոտեցում.

- առողջապահական գերակայությունների պահպանում,
- սոցիալական ուղղվածության ապահովում:

Հիվանդանոցային բուժօգնություն

Հիվանդանոցային բուժօգնության գծով նախատեսվում է 13994.3 մլն դրամ 2004 թվականի 12921.8 մլն դրամի դիմաց, կամ աճը կազմում է 8.3 տոկոս: Հարկ է նշել, որ ՀՀ 2004 թվականի պետական բյուջեով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով 45.0 մլն դրամ գումարով իրականացվող «Հոգեկան առողջության վերականգնման ծառայությունների ձեռքբերման գծով պետական պատվեր» ծրագիրը 2005 թվականին ՀՀ պետական բյուջեի նախագծով նախատեսվում է տեղափոխել «06. Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն» խումբ, իսկ «Բժշկասոցիալական վերականգնման և աշխատունակության փորձաքննության ծառայությունների ձեռքբերման գծով պետական պատվեր» ծրագիրը՝ հիվանդանոցային բուժօգնություն ենթախմբի «Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագիր: Ընդհանուր առմամբ, հիվանդանոցային բուժօգնության գծով աճը պայմանավորված է մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջինացված արժեքի բարձրացմամբ և 2004 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ 18641 հիվանդանոցային դեպքի բուժման ավելացմամբ: Հիվանդանոցային բուժօգնություն իրականացնող բուժհաստատություններում մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջինացված արժեքը նախատեսվում է 8700 դրամ՝ նախորդ տարվա 8300 դրամի դիմաց, կամ աճը կազմում է 4.8 տոկոս, որը պայմանավորված է աշխատավարձի բարձրացմամբ, դեղորայքի, բժշկական պարագաների և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ ծախսերի ավելացմամբ: Բժշկական անձնակազմի աշխատողների ամսական աշխատավարձը նախատեսվում է հասցնել մինչև 37500 դրամ (նախորդ տարվա 33500 դրամի դիմաց), իսկ միջին բուժանձնակազմի աշխատողների ամսական աշխատավարձը՝ մինչև 29300 դրամ (նախորդ տարվա 24550 դրամի դիմաց): Մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջինացված արժեքի մեջ դեղորայքի, բժշկական պարագաների և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ ծախսերի համար նախատեսվում է 3372 դրամ՝ նախորդ տարվա 3261 դրամի դիմաց, կամ աճը կազմում է 3.4 տոկոս:

Հիվանդանոցային բուժօգնության ծառայության գծով հիվանդանոցային դեպքի դիմաց վճարումը կատարվում է՝ ելնելով անվճար բուժօգնության համար հաստատված գներից: Գները հաշվարկվում են մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջինացված արժեքի, բուժման միջին տևողության և ծառայության բարդության գործակցի արտադրյալով: Ինչպես 2004 թվականին, այնպես էլ 2005 թվականին ֆինանսավորումը կիրականացվի սահմանափակված (զլոբալ) բյուջեի սկզբունքով:

Հիվանդանոցային բուժօգնության շրջանակներում 2005 թվականին նախատեսվում է տասներեք ծրագրերի իրականացում:

Այսպես՝

- «Տուբերկուլյոզի բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է տուբերկուլյոզի 2618 հիվանդանոցային դեպքի բուժում 687.0 մլն դրամ գումարով՝ նախորդ տարվա 2500 դեպքի և 625.3 մլն դրամի դիմաց, 350 հետազոտում հիվանդանոցային պայմաններում

ախտորոշման նպատակով 17.5 մլն դրամ գումարով՝ նախորդ տարվա 150 հետազոտման և 7.2 մլն դրամի դիմաց, տուբերկուլյոզով 230 հիվանդների առողջարանային բուժում 66.7 մլն դրամ գումարով՝ նախորդ տարվա 400 դեպքի և 85.1 մլն դրամի դիմաց /տուբերկուլյոզով հիվանդների առողջարանային բուժման դեպքերի իջեցումը պայմանավորված է փաստացի կատարողականով, որը 2003թ. կազմել է 226 դեպք/:

- «Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 5916 հիվանդանոցային դեպքի բուժում՝ 502.9 մլն դրամ գումարով /այդ թվում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով 50 հիվանդների բուժում 50 մլն դրամ գումարով/, նախորդ տարվա 5819 դեպքի և 475 մլն դրամի դիմաց:

- «Մեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 724 հիվանդանոցային դեպքի բուժում 57.4 մլն դրամ գումարով՝ նախորդ տարվա 690 դեպքի և 52 մլն դրամի դիմաց, 400 դեպքի հետազոտում հիվանդանոցային պայմաններում ախտորոշման նպատակով՝ 14 մլն դրամ գումարով՝ նախորդ տարվա 300 դեպքի և 9.9 մլն դրամի դիմաց:

- «Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է մանկաբարձական օգնություն 40387 դեպք ` 1929.7 մլն դրամ գումարով /այդ թվում ծննդալուծում կեսարյան հատումով 3958 դեպք` 297.5 մլն դրամ գումարով/, նախորդ տարվա 36000 դեպքի` 1571.0 մլն դրամի դիմաց /հիվանդանոցային դեպքերի ավելացումը պայմանավորված է ծնունդների աճի տեմպի հետ/: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 13.8 %:

- «Մինչև 7 տարեկան երեխաների բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 20715 հիվանդանոցային դեպքի բուժում 1576.0 մլն դրամ գումարով՝ նախորդ տարվա 18200-ի և 1329.3 մլն դրամի դիմաց: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 11.3%:

- «Հոգեկան հիվանդների բժշկական օգնության և խնամքի գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 2973 սուր դեպքի բուժում 328.2 մլն դրամ գումարով, դատահոգեբուժական 210 դեպքի փորձաքննություն` 23.2 մլն դրամ գումարով, նախորդ տարվա 200 դեպքի, 21.1 մլն դրամի դիմաց, հարկադիր 140 դեպքի բուժում` 173.2 մլն դրամ գումարով՝ նախորդ տարվա 165.1 մլն դրամի դիմաց, քրոնիկ հոգեկան 620 հիվանդների խնամք` 645.6 մլն դրամ գումարով՝ նախորդ տարվա 600 դեպքի և 594.7 մլն դրամի դիմաց: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 8.4%:

- «Նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 406 դեպք նարկոլոգիական հիվանդների բուժում 54.2 մլն դրամ գումարով՝ նախորդ տարվա 52.2 մլն դրամի դիմաց, հիվանդանոցային պայմաններում ախտորոշման նպատակով 250 դեպքի հետազոտում` 8.7 մլն դրամ գումարով՝ նախորդ տարվա 240 դեպքի և 7.9 մլն դրամի դիմաց:

- «Անհետաձգելի բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 45670 հիվանդանոցային դեպքի բուժում 2914.0 մլն դրամ գումարով՝ նախորդ տարվա 34176 դեպքի և 2496.2 մլն դրամի դիմաց: Հիվանդանոցային դեպքերի ավելացումը հիմնականում պայմանավորված է կարճաժամկետ հիվանդանոցային բուժօգնություն պահանջող հիվանդությունների և վիճակների բուժման կազմակերպման նոր ձևի նախատեսմամբ: Նախատեսվում է 11217 դեպք՝ 3 օր բուժման տևողությամբ և 26.1 հազ դրամ մեկ դեպքի բուժման արժեքով: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 20.8 %: Ծրագիրն իրականացվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված անհետաձգելի վիճակների և հիվանդությունների ցանկի:

- «Հեմոդիալիզի անցկացման գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 250 հիվանդանոցային դեպք 650.2 մլն դրամ գումարով՝ նախորդ տարվա 176 դեպքի և 472.7 մլն դրամի դիմաց:

- «Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 30204 հիվանդանոցային դեպքի /այդ թվում բժշկասոցիալական վերականգնման և աշխատունակության փորձաքննության 420 հիվանդանոցային դեպքի/ բուժում 2298.0 մլն դրամ գումարով՝ նախորդ տարվա 28196 դեպքի և 2059.5 մլն դրամի դիմաց: Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության գծով պետական պատվեր ծրագիրը նպատակաուղղված է բժշկական օգնություն և ծառայություններ մատուցել բնակչության սոցիալապես անապահով խմբերին, բժշկական օգնության և ծառայությունների բոլոր տեսակների համար, բացառությամբ՝ կոսմետոլոգիական, օրգանների ու հյուսվածքների փոխպատվաստման և ստոմատոլոգիական թանկարժեք ծառայությունների: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 16.4%:

- «Զորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության գծով պետական պատվեր» ծրագրի շրջանակներում նախատեսվում է զորակոչային և նախագորակոչային տարիքի 34175 անձանց /նախորդ տարվա 36100-ի դիմաց/ փորձաքննությունը և բուժումն իրականացնել 918.7 մլն դրամ գումարով /նախորդ տարվա 1443.5 մլն դրամի դիմաց/, այդ թվում հիվանդանոցային ստացիոնարում՝ 6375 անձանց 485.0 մլն դրամ գումարով և ցերեկային ստացիոնարում 27800 անձանց՝ 433.7 մլն դրամ գումարով: Դեպքերի թվի կրճատումը /1925 դեպքով/ կապված է սույն ծրագրի գծով փաստացի բուժօգնություն ստացող հիվանդների թվի նվազմամբ:

Ինչպես 2004 թվականին, այնպես էլ 2005 թվականին նախատեսվում է շտապ բժշկական օգնության ծառայության ֆինանսավորումն ընդգրկել հիվանդանոցային բուժօգնության ենթախմբի մեջ: «Շտապ բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 318825 կանչ 1088.9 մլն դրամ գումարով՝ նախորդ տարվա 303725 կանչի և 1000.5 մլն դրամի դիմաց: Ծրագրի գծով աճը պայմանավորված է՝ շտապ բժշկական օգնության կանչերի 15100-ով ավելացմամբ՝ 52.9 մլն դրամ գումարով և շտապ բժշկական օգնության կանչերի գների բարձրացմամբ՝ 35.5 մլն դրամ

գումարով, նեղ մասնագիտացված բուժօգնության կանչի գնի 4.2 տոկոսով /նախորդ տարվա 4700 դրամի դիմաց նախատեսվում է 4900 դրամ/, գծային շտապ բուժօգնության կանչի գնի՝ 3.2 տոկոսով /նախորդ տարվա 3100 դրամի դիմաց նախատեսվում է 3200 դրամ/, ֆելդշերական բուժօգնության կանչի գնի՝ 3.6 տոկոսով /նախորդ տարվա 2800 դրամի դիմաց նախատեսվում է 2900 դրամ/, սանիտարական ավիացիայի կանչի գնի՝ 4.9 տոկոսով /նախորդ տարվա 32800 դրամի դիմաց նախատեսվում է 34400 դրամ/ բարձրացումներով:

Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով նախատեսվում է 40.0 մլն դրամ՝ Ուռուցքաբանության ազգային կենտրոնի կապիտալ վերանորոգման աշխատանքների համար:

Հիվանդանոցային բուժօգնությանն ուղղվող ծախսերը 2006 թվականին կկազմեն 14300.0 մլն դրամ կամ 2005 թվականի նկատմամբ կավելանան 2.2 տոկոսով, իսկ 2007 թվականին՝ 18340.0 մլն դրամ կամ 2006 թվականի նկատմամբ կավելանան 28.2 տոկոսով: Ընդհանուր առողջապահության ծախսերում /առանց առողջապահության բնագավառում պետական կառավարման ծախսերի/ հիվանդանոցային բուժօգնությանն ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը 2005 թվականի 43.5 տոկոսից կնվազի և 2007 թվականին կկազմի 37.4 տոկոս:

Առաջնային /ամբուլատոր-պոլիկլինիկական/ բուժօգնություն

Առաջնային /ամբուլատոր-պոլիկլինիկական/ բուժօգնության գծով 2005 թվականին նախատեսվում է 12459.3 մլն դրամ՝ նախորդ տարվա 8716.5 մլն դրամի դիմաց, կամ աճը կազմում է 42.9 %: Հաշվի առնելով առաջնային /ամբուլատոր-պոլիկլինիկական/ բուժօգնության գերակայությունը, մատչելիության ավելի բարձր մակարդակը և ազգաբնակչությանը տարածքային կտրվածքով հասանելիության ավելի մեծ աստիճանը՝ հիվանդանոցային բուժօգնության համեմատ, առողջապահության պետական ծախսերի ֆինանսավորման կառուցվածքում նախատեսվում է առաջնային բուժօգնության ծախսերի բաժինը հասցնել 38.7 %-ի՝ ի հաշիվ հիվանդանոցային բուժօգնությանը տրամադրվող միջոցների տեսակարար կշռի կրճատման և ընդհանուր ծախսերի ավելացման: Առաջնային /ամբուլատոր-պոլիկլինիկական/ բուժօգնության շրջանակներում նախատեսվում է յոթ ծրագրերի իրականացում: Այսպես.

- «18 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց առողջության առաջնային պահպանման գծով պետական պատվեր» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 5001.0 մլն դրամ՝ նախորդ տարվա 3138.8 մլն դրամի դիմաց, կամ աճը կազմում է 59.3%,

- «Մինչև 18 տարեկան երեխաների առողջության առաջնային պահպանման գծով պետական պատվեր» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 3444.0 մլն դրամ՝ նախորդ տարվա 2284.5 մլն դրամի դիմաց, կամ աճը կազմում է 50.8%,

- «Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 700.0 մլն դրամ՝ նախորդ տարվա 466.7 մլն դրամի դիմաց, կամ աճը կազմում է 50%,

- «Դիսպանսերային բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 835.9 մլն դրամ՝ նախորդ տարվա 557.4 մլն դրամի դիմաց, կամ աճը կազմում է 50%,

- «Ջորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության գծով պետական պատվեր» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 801.3 մլն դրամ՝ նախորդ տարվա 767.6 մլն դրամի դիմաց, կամ աճը կազմում է 4.4%,

- «Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերման գծով պետական պատվեր» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 1585 մլն դրամ՝ նախորդ տարվա 1500 մլն դրամի դիմաց, կամ աճը կազմում է 5.7%,

- «Մարզական բժշկության և հակադոպինգային հսկողության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գծով պետական պատվեր» ծրագիրը, որը նախատեսվում է իրականացնել 2005 թվականին: Նշված ծրագրի գծով նախատեսվում է 92.0 մլն դրամ, այդ թվում 50.1 մլն դրամ՝ բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերման համար:

Առաջնային /ամբուլատոր-պոլիկլինիկական/ բուժօգնության գծով ավելացումը հիմնականում պայմանավորված է՝

- տեղամասային թերապևտների /մանկաբույժների/, ընտանեկան բժիշկների, բուժքույրերի, կրտսեր բուժանձնակազմի պահպանման ծախսերի, տեղամասերի աշխատանքների ապահովման տնտեսական և դեղորայքային /տեղամասային կաբինետների միջոցով իրականացվող առաջին օգնության համար անհրաժեշտ դեղորայքի, վիրակապական նյութերի և անվճար ու արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղորայքի/ ծախսերի 31.4 տոկոսով ավելացմամբ /նախորդ տարվա 3744.4 մլն դրամի դիմաց նախատեսվում է 4918.5 մլն դրամ/: Բժշկական անձնակազմի աշխատողների ամսական աշխատավարձը նախատեսվում է հասցնել մինչև 46800 դրամ՝ նախորդ տարվա 36000 դրամի դիմաց, իսկ միջին բուժանձնակազմի աշխատողների ամսական աշխատավարձը՝ մինչև 29900 դրամ՝ նախորդ տարվա 23000 դրամի դիմաց,

- շուրջօրյա հիվանդանոցային խնամք չպահանջող 13450 դեպքերի բուժման և մեկ դեպքի բուժման արժեքի 15000 դրամ նախատեսմամբ,

- ամբուլատոր-պոլիկլինիկական մեկ հաճախման գնի 11.1 %-ով բարձրացմամբ /նախորդ տարվա 900 դրամի դիմաց նախատեսվում է 1000 դրամ /ներառված չէ 300 դրամ անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքային ապահովման ծախսը, որը ընդգրկված է տեղամասերի աշխատանքների ապահովման համար նախատեսված ծախսերում/,

- բարձր ռիսկի խմբերում ընդգրկված անձանց սրտանոթային համակարգի հիվանդությունների հայտնաբերման համար 112.1 մլն դրամ նախատեսմամբ,

- ստոմատոլոգիական բուժօգնություն ստացողների թվի 10000 մարդով ավելացմամբ և բուժման գնի 20 տոկոսով բարձրացմամբ /նախորդ տարվա 270.0 մլն դրամի դիմաց նախատեսվում է 396.0 մլն դրամ/,

- լաբորատոր-ախտորոշիչ հետազոտությունների թվի ավելացմամբ և մեկ հետազոտության գնի 18.7-ից 22.2 տոկոսով բարձրացմամբ /լիինիկական և բիոքիմիական հետազոտությունների գծով նախորդ տարվա 600 դրամի դիմաց նախատեսվում է 720 դրամ, ռենտգեն հետազոտությունների գծով՝ 1500 դրամի դիմաց 1800 դրամ, բակտերիոլոգիական հետազոտությունների գծով՝ 800 դրամի դիմաց

950 դրամ, ֆունկցիոնալ հետազոտությունների գծով 700 դրամի դիմաց 850 դրամ, ուլտրաձայնային հետազոտությունների գծով 900 դրամի դիմաց 1100 դրամ և էլեկտրասարտագրության հետազոտությունների գծով 700 դրամի դիմաց 850 դրամ/,

- 70 տարեկան և բարձր տարիքի անձանց նեղ մասնագետների կողմից անվճար բժշկական օգնության իրականացման համար 44.8 մլն դրամ և լաբորատոր- ախտորոշիչ հետազոտությունների 57.6 մլն դրամ նախատեսամբ,

- 15 տարեկան աղջիկների առողջական վիճակի գնահատումը և բուժումը ապահովելու համար 132.7 մլն դրամ նախատեսամբ, որից նեղ մասնագիտացված բուժօգնության գծով՝ 42.0 մլն դրամ, իսկ լաբորատոր-ախտորոշիչ հետազոտությունների գծով՝ 90.7 մլն դրամ,

- 6 և 12 տարեկան երեխաների բերանի խոռոչի հետազոտման համար 105.3 մլն դրամ նախատեսամբ,

- դիսպանսեր հիվանդների /դիաբետիկ, ուռուցքաբանական ու տուբերկուլյոզով հիվանդների/ և բարձր ռիսկի /սրտանոթային համակարգի հիվանդների/ բնակչության համար 882800 լաբորատոր-ախտորոշիչ հետազոտությունների 656.9 մլն դրամ գումարով նախատեսամբ,

- դպրոցներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման ծախսերի 81.5 տոկոսով ավելացմամբ /նախորդ տարվա 200.0 մլն դրամի դիմաց նախատեսվում է 363.0 մլն դրամ/:

Առաջնային /ամբուլատոր-պոլիկլինիկական/ բուժօգնության գծով ծրագրերը ներառում են՝

- տեղամասային թերապևտի /մանկաբույժի/ և ընտանեկան բժշկի կողմից բնակչության առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող անձանց դեղորայքային բուժման, հիվանդների բժշկական օգնության և նրանց նկատմամբ շարունակական հսկողության ապահովման, անհրաժեշտության դեպքում, հիվանդանոցային բուժման կարիք ունեցողների հոսպիտալացման կազմակերպման միջոցառումների իրականացումը,

- հիվանդանոցային շուրջօրյա բժշկական հսկողություն չպահանջող հիվանդությունների ամբուլատոր բուժման կազմակերպումը,

- ամբուլատոր-պոլիկլինիկական օդակի և դիսպանսերների նեղ մասնագետների կողմից բնակչության բուժական-խորհրդատվական մասնագիտացված օգնության ապահովումը, արտոնյալ պայմաններով դեղամիջոցներ ստանալու իրավունք ունեցող անձանց անհրաժեշտ դեղորայքով ապահովումը,

- սրտաբանական մասնագիտացված կաբինետների միջոցով սրտանոթային համակարգի հիվանդների հայտնաբերման և բժշկական օգնության իրականացման ապահովումը,

- սոցիալապես անապահով խավերում ընդգրկված անձանց համար, հիվանդությունների արդյունավետ ախտորոշման և բուժման կազմակերպման նպատակով, ամբուլատոր-պոլիկլինիկական օդակում անհրաժեշտ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացման ապահովումը,

- 70 տարեկան և բարձր տարիքի անձանց անվճար բժշկական օգնության կազմակերպումը նեղ մասնագետների կողմից և անհրաժեշտության դեպքում լաբորատոր-ախտորոշիչ հետազոտությունների իրականացման ապահովումը,

- տուբերկուլյոզով, դիաբետով, չարորակ նորագոյացություններով և սրտանոթային համակարգի հիվանդների /բարձր ռիսկի խմբում ընդգրկված բնորոշիչ ախտանիշներ ունեցող անձանց/ լաբորատոր-գործիքային հետազոտությունների իրականացման ապահովումը,

- 6 և 12 տարեկան երեխաների բերանի խոռոչի հիգիենայի ծրագրի իրականացման ապահովումը,

- 15 տարեկան աղջիկների առողջական վիճակի գնահատումը և խորհրդատվությունը,

- ստոմատոլոգիական օգնության ապահովումը մինչև 8 տարեկան երեխաներին և սոցիալապես անապահով խմբերում ընդգրկվածներին,

- նախագորակոչային և գորակոչային տարիքի անձանց առողջական վիճակի հետազոտումը, գնահատումը, բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը,

- գյուղական բնակավայրերում բուժականակաբարձական կետերի միջոցով բնակչության մինչբժշկական օգնության և սպասարկման իրականացումը,

- հղիների և գինեկոլոգիական հիվանդություններով տառապող կանանց մանկաբարձագինեկոլոգիական օգնության ապահովումը՝ կանանց կոնսուլտացիաների /կաբինետների/ միջոցով:

Ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության ֆինանսավորումը շարունակվելու է իրականացվել բնակչության մեկ շնչի հաշվով ֆինանսավորման սկզբունքով /հաշվարկի համար բնակչության հաշվարկային մեծությունը ընդունված է 3218 հազար, որից մեծահասակներ՝ 2240 հազար, երեխաներ՝ 878 հազար, նախագորակոչային և գորակոչային տարիքի պատանիներ՝ 100 հազար/:

18 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց առողջության առաջնային պահպանման գծով տարվա կտրվածքով մեկ բնակչի հաշվով հատկացվող գումարը քաղաքային և տարածաշրջանային պոլիկլինիկաներում նախատեսվում է 2018 դրամ՝ նախորդ տարվա 1303 դրամի դիմաց, իսկ գյուղական ամբուլատորիաներում՝ 1467 դրամ՝ նախորդ տարվա 1138 դրամի դիմաց, ըստ նեղ մասնագետի բուժօգնության իրականացման մեկ շնչի ֆինանսավորման գումարը նախատեսվում է 258 դրամ՝ նախորդ տարվա 165 դրամի դիմաց: Լաբորատոր-ախտորոշիչ հետազոտության ծախսերը ըստ մեկ շնչի ֆինանսավորման նախատեսվում են 515 դրամ՝ նախորդ տարվա 175 դրամի դիմաց:

Մինչև 18 տարեկան երեխաների առողջության առաջնային պահպանման գծով տարվա կտրվածքով մեկ երեխայի հաշվով հատկացվող գումարը քաղաքային և տարածաշրջանային պոլիկլինիկաներում նախատեսվում է 4102 դրամ՝ նախորդ տարվա 2651 դրամի դիմաց, իսկ գյուղական ամբուլատորիաներում՝ 3560 դրամ՝ նախորդ տարվա 2373 դրամի դիմաց, ըստ նեղ մասնագետի բուժօգնության իրականացման մեկ շնչի ֆինանսավորման գումարը նախատեսվում է 542 դրամ՝ նախորդ տարվա 277 դրամի դիմաց : Լաբորատոր-ախտորոշիչ հետազոտության ծախսերը ըստ մեկ շնչի ֆինանսավորման նախատեսվում են 407 դրամ՝ նախորդ տարվա 253 դրամի դիմաց:

Գպրոցներում իրականացվող երեխաների բժշկական օգնության և սպասարկման ծախսերը ըստ մեկ աշակերտի ֆինանսավորման նախատեսվում են 726 դրամ՝ նախորդ տարվա 400 դրամի դիմաց:

Նախագորակոչային և գորակոչային տարիքի անձանց առողջության առաջնային պահպանման գծով տարվա կտրվածքով մեկ պատանհի հաշվով հատկացվող գումարը նախատեսվում է 8013 դրամ՝ նախորդ տարվա 5905 դրամի դիմաց, փորձաքննությունն անցկացնող բուժանձնակազմի կողմից բժշկական հետազոտման իրականացման մեկ շնչի ֆինանսավորման գումարը նախատեսվում է 2580 դրամ, իսկ լաբորատոր-ախտորոշիչ հետազոտության ծախսերը՝ 3724 դրամ:

Մանկաբարձագինեկոլոգիական առաջնային բժշկական օգնության գծով պետական պատվեր ծրագրով տարվա կտրվածքով մեկ բնակչի հաշվով հատկացվող գումարը նախատեսվում է 218 դրամ՝ նախորդ տարվա 145 դրամի դիմաց:

Գիսպաններային առաջնային բուժօգնության ծրագրով 2005 թվականի պետական բյուջեով մեկ շնչի ֆինանսավորման չափը նախատեսվում է՝

Աղյուսակ 1

	մեկ շնչի հաշվով ֆինանսավորման չափը պոլիկլինիկայի նեղ մասնագետի կողմից իրականացվող դիսպանսերային բուժօգնության դեպքում		մեկ շնչի հաշվով ֆինանսավորման չափը դիսպանսերների կողմից իրականացվող դիսպանսերային բուժօգնության դեպքում	
	2004 թվականի հաստատված բյուջե	2005 թվականի բյուջեի նախագիծ	2004 թվականի հաստատված բյուջե	2005 թվականի բյուջեի նախագիծ
հակատուբերկուլյոզային	33	43	48	63
ուռուցքաբանական	26	34	42	54
հոգենյարդաբանական	26	34	42	54
մաշկավեներաբանական	26	34	42	54
ինֆեկցիոն	26	34	-	-
նարկոլոգիական	-	-	42	54
արյունաբանական	-	-	15	20
էնդոկրինոլոգիական	-	34	-	-

Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերման գծով պետական պատվեր ծրագրով նախատեսվում է կենտրոնացված միջոցներով դեղորայքի, շիճուկների, պատվաստանյութերի և բժշկական պարագաների ձեռքբերման ծախսեր 1585.0 մլն դրամի չափով՝ նախորդ տարվա 1500.0 մլն դրամի դիմաց, կամ աճը կազմում է 5.7 տոկոս : Այն նախատեսվում է հիմնականում սոցիալական կարևորության հիվանդությունների (չարորոկ նորագոյացությունների, էնդոկրին հիվանդությունների, հեմոդիալիզի, իմունիզացիայի, տուբերկուլյոզի, հոգեկան հիվանդությունների, էպիլեպսիայի,

պարբերական հիվանդությունների և այլն) բուժման նպատակով անվճար դեղորայքի ձեռքբերման համար:

Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնությանն ուղղվող ծախսերը 2006 թվականին կկազմեն 15407 մլն դրամ, կամ 2005 թվականի նկատմամբ կավելանան 23.7 տոկոսով, իսկ 2007 թվականին՝ 21183.4 մլն դրամ, կամ 2006 թվականի նկատմամբ կավելանան 37.5 տոկոսով: Ընդհանուր առողջապահության ծախսերում /առանց առողջապահության բնագավառում պետական կառավարման ծախսերի/ առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնությանն ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը 2005 թվականի 38.7 տոկոսից կաճի և 2007 թվականին կկազմի 43.2 տոկոս:

Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայություն

2005 թվականին հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության գծով նախատեսվում է 1440.0 մլն դրամ՝ 2004 թվականի 1000.0 մլն դրամի դիմաց, աճը կազմում է 44.0 տոկոս կամ 440.0 մլն դրամ: Ընդհանուր առողջապահության ծախսերում հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությանն ուղղված ծախսերը կազմում են 4.4 տոկոս:

Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունը ընդգրկում է հետևյալ ծրագրերը՝

- «Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության գծով պետական պատվեր» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 170.0 մլն դրամ՝ 2004 թվականի 100.0 մլն դրամի դիմաց, աճը կազմում է 70.0 տոկոս կամ 70.0 մլն դրամ: Ծրագրով նախատեսվում է իրականացնել համաճարակաբանական հետազոտություններ վարակային հիվանդությունների օջախներում, ազգաբնակչության իմունիզացիայի կատարման նկատմամբ հսկողություն, մանրէաբանական հետազոտություններ, վարակիչ և ոչ վարակիչ զանգվածային հիվանդությունների, թունավորումների հաշվառում, համաճարակների, բռնկումների, արտակարգ իրավիճակների ժամանակ հատուկ հակահամաճարակային միջոցառումներ, մալարիայի դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումների իրականացում:

Ծրագրի գումարի աճը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի ֆոնդի 18.7% բարձրացմամբ, որի արդյունքում բժիշկների աշխատավարձը հնարավոր կլինի 32300 դրամից հասցնել 37500 դրամի, իսկ բուժքույրերի աշխատավարձը 22800 դրամից հասցնել 29300 դրամի, ինչպես նաև ապրանքների ձեռքբերման ու ծառայությունների մատուցման ծախսերի 148.7 տոկոս ավելացմամբ: Վերջինիս մեջ հիմնական տեսակարար կշիռը, մոտ 81.0 տոկոսը, բաժին է ընկնում դեղորայքի ձեռքբերման ծախսերի ավելացմանը, որը կազմում է մոտ 48.1 մլն դրամ:

Նպատակ ունենալով պոլիոմիելիտի վերջնական վերացումը, դիֆթերիայի, կապույտ հազի, փայտացման, կարմրուկի, էպիդեմիկ պարոտիտի, տուբերկուլյոզի, հեպատիտ «Բ»-ի և այլ հիվանդությունների դեմ կանխարգելիչ պատվաստումների իրականացումը «Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայություն գծով պետական պատվեր» ծրագրի շրջանակներում 2005 թվականին ձեռք կբերվի մոտ 62.7 մլն դրամի դեղորայք՝ 2004 թվականի 14.5 մլն դրամի դիմաց, աճը կկազմի 48.2 մլն դրամ, որը պայմանավորված է Իմունիզացիայի ազգային ծրագրի իրականացման նպատակով, ՀՀ առողջապահության նախարարության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի միջև կնքված պայմա-

նագրի շրջանակներում, ձեռք կբերվի 7.4 մլն դրամի ԲՅԺ-ի, 13.3 մլն դրամի ԱԿԳ-ի, 8.0 մլն դրամի ՕՊՎ -ի, 1.2 մլն դրամի ԱԳ-ի պատվաստանյութ, ինչպես նաև հակակատաղության պատվաստանյութ, հակաբուստուլինային շիճուկ, հակափայտացման շիճուկ, օձի հակաթույն, որովայնի տիֆի բակտերիոֆագ, դեղին տենդի վակցինա և այլ դեղանյութեր:

Հաշվարկներում հաշվի է առված նաև ջրի սակագնի բարձրացումը, որը կազմում է 0.4 մլն դրամ:

- «Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության ոչ առևտրային կազմակերպությունների գծով սուբսիդավորում» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 1270.0 մլն դրամ` 2004 թվականի 900.0 մլն դրամի դիմաց. աճը կազմում է 41.1 տոկոս կամ 370.0 մլն դրամ:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության պահպանումը, համաճարակաբանական, մանրէաբանական հետազոտություններ, նախագուշակյան սանիտարական հսկողություն, բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի ազդեցության սոցիալ-հիգիենիկ գնումներ` արդյունքում ապահովելով համաճարակաբանական կայուն իրավիճակ: Վարակիչ հիվանդությունների հաշվառման և դրանց իջեցմանն ուղղված համապատասխան միջոցառումների, համաճարակների բռնկումների ժամանակ հատուկ ծրագրերի իրականացման, հանրապետության Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության կենտրոններին կազմակերպամեթոդական օգնության ապահովում: Հակահամաճարակական հետազոտությունների, կանխարգելիչ և հակահամաճարակային համալիր միջոցառումների, ախտահանման աշխատանքների և մանրէաբանական հետազոտությունների իրականացում:

Ծրագրի գումարի ավելացումը պայմանավորված է աշխատավարձի ֆոնդի 60.4 տոկոսով բարձրացմամբ, սոցիալական վճարներ մոտ 10.0 տոկոսով ավելացմամբ, որի արդյունքում հնարավոր կլինի բժիշկների աշխատավարձը 25800 դրամից հասցնել 37500 դրամի, բուժքույրերի աշխատավարձը` 18300 դրամից` 29300 դրամ, ինչպես նաև ապրանքների ձեռքբերման ու ծառայությունների մատուցման ծախսերի 16.0 տոկոսով ավելացմամբ, որը մասնավորապես պայմանավորված է ջրի սակագնի բարձրացմամբ:

Հիգիենիկ-հակահամաճարակային ծառայությանն ուղղվող ծախսերը 2006 թվականին կկազմեն 2000.0 մլն դրամ կամ 2005 թվականի նկատմամբ կավելանան 38.9 տոկոսով, իսկ 2007 թվականին` 2500.0 մլն դրամ կամ 2006 թվականի նկատմամբ կավելանան 25.0 տոկոսով: Ընդհանուր առողջապահության ծախսերում հիգիենիկ-հակահամաճարակային ծառայությանն ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը 2005 թվականի 4.4 տոկոսից կաճի և 2007 թվականին կկազմի 5.0 տոկոս:

Առողջապահական այլ ծառայություններ և ծրագրեր

Առողջապահական այլ ծառայությունների և ծրագրերի գծով գումարը կազմում է 4432.8 մլն դրամ` 2004 թվականի 1870.3 մլն դրամի դիմաց. աճը կազմում է 137.0 տոկոս կամ 2562.5 մլն դրամ:

«Առողջապահական այլ ծառայություններ և ծրագրեր» ենթախումբը ընդգրկում է հետևյալ ծրագրերը`

- «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների անցկացման գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 110.0 մլն դրամ՝ նախորդ տարվա 60.0 մլն դրամի փոխարեն. աճը կազմում է 83.3 տոկոս կամ 50.0 մլն դրամ:

Ծրագրով նախատեսված գումարն ուղղվելու է յուրահատուկ ու բացառիկ բուժասարքավորումներով անվճար ախտորոշիչ հետազոտությունների իրականացմանը: Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ցանկում ընդգրկված են մոտ 57 տեսակի բարդագույն հետազոտություններ: 2004 թվականի 8342 հետազոտության դիմաց 2005 թվականին նախատեսվում է իրականացնել 15046-ը կամ 6704-ով ավելի, որից կոմպյուտերային ռենտգենային տոմոգրաֆիկ հետազոտությունները՝ 505-ով, գլխուղեղի ներգանգային և արտագանգային անոթների գերձայնային դոպլեր հետազոտությունները՝ 25-ով, վերջույթային անոթների հեմոդինամիկայի գերձայնային դոպլեր հետազոտությունները՝ 233-ով, որովայնի համալիր սոնոգրաֆիկ հետազոտությունները՝ 128-ով, էլեկտրենցեֆլոգրաֆիա՝ 576-ով ավելի, ինչպես նաև կանցկացվեն հորմոնալ, ֆերմենտների որոշման, ախտորոշիչ պունկցիոն և այլ հետազոտություններ:

- «Այլ պետական ոչ առևտրային կազմակերպությունների գծով պետական պատվեր» ծրագրի իրականացման համար 2005 թվականին նախատեսվում է 430.0 մլն դրամ՝ նախորդ տարվա 400.0 մլն դրամի դիմաց. աճը կազմում է 7.5 տոկոս կամ 30.0 մլն դրամ: Ծրագրի գումարի ավելացումը պայմանավորված է աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ, որի արդյունքում հնարավոր կլինի բժիշկների միջին աշխատավարձը 35000 դրամից հասցնել 40000 դրամի, բուժքույրերի միջին աշխատավարձը՝ 25000 դրամից հասցնել 30000 դրամի:

Ծրագրում ընդգրկված են հետևյալ ծառայությունները.

«Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2005 թվականին պետական պատվերի գումարը կազմում է 172.8 մլն դրամ՝ նախորդ տարվա 161.6 մլն դրամի դիմաց, աճը կազմում է 6.9 տոկոս կամ 11.2 մլն դրամ:

«Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունն իր 11 մարզային բաժիններով սպասարկում է ՀՀ Դատախազությանը, ՀՀ արդարադատության և ՀՀ պաշտպանության նախարարություններին, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը և ոստիկանությանը, իրականացնում է դիակների, կենդանի անձանց, իրեղեն ապացույցների, դատաքիմիական, դատաբժշկաքրեագիտական, դատագենետիկական, հյուսվածքաբանական և դատակենսաբանական փորձաքննություններ, ինչպես նաև դիակների արտաշիրիմումներ:

«Հատուկ վտանգավոր վարակների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2005 թվականին պետական պատվերի գումարը նախատեսվում է 149.9 մլն դրամ՝ նախորդ տարվա 141.7 մլն դրամի դիմաց. աճը կազմում է 5.8 տոկոս կամ 8.2 մլն դրամ: Հատուկ վտանգավոր վարակների կենտրոնն իրականացնում է էպիզոոտոլոգիական հետազոտություն հանրապետության տարածքում ժանտախտի, տուլարեմիայի և այլ բնական օջախային վարակների էպիզոտիաները հայտնաբերելու և մարդկանց մեջ հիվանդացությունը ժամանակին կանխելու նպատակով:

«ՉԻԱՀ/ՄԻԱՎ կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2005 թվականին պետական պատվերի գումարը կկազմի 52.9 մլն դրամ՝ նախորդ տարվա 47.6 մլն դրամի դիմաց. աճը կազմել է 11.1 տոկոս կամ 5.3 մլն դրամ: ՉԻԱՀ/ՄԻԱՎ կանխարգելման հանրապետական կենտրոնը իրականացնում է ՄԻԱՎ վարակի տարածվածության մասին տեղեկատվության ստացում, ընտրված խմբերում վարակի միտոմների ընթացիկ հսկողություն:

Հիգիենայի և պրոֆեսիոնալ հիվանդությունների ծառայության 2005 թվականի պետական պատվերի գումարը կկազմի 16.0 մլն դրամ՝ նախորդ տարվա 14.3 մլն դրամի դիմաց. աճը կազմել է 11.9 տոկոս կամ 1.7 մլն դրամ: Ծրագրի նպատակն է գիտական, կլինիկական ու հիգիենիկ ոլորտներում հետազոտությունների անցկացումը և մասնագիտական հիվանդությունների ախտորոշումն ու վերջնական փորձագիտական եզրակացությունը, ինչպես նաև պրոֆեսիոնալ հիվանդությամբ հիվանդների ամբուլատոր-պոլիկլինիկական հսկողությունը, կանխարգելումը:

«Մանկական պաթանատոմիական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2005 թվականին պետական պատվերի գումարը կկազմի 22.0 մլն դրամ՝ նախորդ տարվա 20.4 մլն դրամի դիմաց. աճը կազմել է 7.8 տոկոս կամ 1.6 մլն դրամ: Ծրագրի միջոցով կիրականացվի հիվանդությունների ճշտված ախտորոշումը՝ սեկցիոն, վիրահատական և բիոպսիոն նյութի հետազոտության միջոցով, մանկական դիակների դիահերձումը, մահվան պատճառների ճշտումը:

«Մարդասիրական օգնության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2005 թվականին պետական պատվերի գումարը կկազմի 16.4 մլն դրամ՝ նախորդ տարվա 14.4 մլն դրամի դիմաց. աճը կազմել է 13.9 տոկոս կամ 2.0 մլն դրամ: Ծրագրի միջոցով իրականացվում է մարդասիրական օգնությամբ ստացված դեղերի պահպանումը, բաշխումը, գույքագրումը, հաշվառումը:

- «Կենտրոնացված կարգով նորագույն բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերման գծով պետական պատվեր» ծրագրի գծով նախատեսվում է 993.0 մլն դրամ՝ նախորդ տարվա 593.4 մլն դրամի դիմաց. աճը նախատեսվում է 67.3 տոկոս կամ 399.6 մլն դրամ: Նախատեսվում է 20 անուն բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերում, այդ թվում՝ գաստրոենդոսկոպ 5 հատ, ռենտգեն նկարահանման համալիր 3 հատ, շարժական շտապ օգնության գծային համալիր 10 հատ և այլն:

- «Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհածախս» ծրագրով 2005 թվականին նախատեսված է 25.0 մլն դրամ՝ նախորդ տարվա 20.0 մլն դրամի փոխարեն. աճը նախատեսվում է 25.0 տոկոսով կամ 5.0 մլն դրամ: Ծրագրի միջոցով իրականացվում է հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների և ուղեկցողի ճանապարհածախսի փոխհատուցումը: Նախատեսվում է 67 ուղեգրվող հիվանդ՝ նախորդ տարվա 56-ի փոխարեն (հաշվարկը կատարված է յուրաքանչյուր հիվանդի համար ներառելով նաև ուղեկցողի ճանապարհածախսի գումարը) :

- «Առողջապահության այլ ծառայությունների գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսված է 514.9 մլն դրամ՝ նախորդ տարվա 359.4 մլն դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում կիրականացվի հաստատված չարորակ նորագոյացությամբ հիվանդների կոնսուլտացիոն օգնություն և ախտորոշիչ հետազոտությունների իրականացում, շաքարային դիաբետով հիվանդների հսկողություն, հետազոտությունների իրականացում, արյան հավաքագրում և բուժկանխարգելիչ հիմնարկներին արյունով և դրա բաղադրիչներով ապահովում, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով հիվանդների, վարակի աղբյուրների և կոնտակտավորների, մարմնավաճառների «ռիսկի խմբի» և թափառող անձանց նկատմամբ հսկողության իրականացում, քրոնիկ տուբերկուլյոզով հիվանդների շարունակական հսկողություն, նոր հայտնաբերված հիվանդների և կրկնակի հիվանդացածների բուժման կազմակերպում, օրթեզների և կորսետների պատրաստում, դեղագործական քաղաքականության իրականացման աշխատանքներ, հիմնական և հսկվող դեղերի ցուցակների հրապարակում, դեղերի պետական գրանցում: Ծրագրի շրջանակներում կիրականացվի նաև բնակչության ռադիոլոգիական անվտանգության աշխատանքներ, ՉԱԿ-ի վթարի հետևանքով ճառագայթվածներին դիսպանսեր հսկողության վերցնում, կոնսուլտատիվ-ախտորոշիչ օգնության կազմակերպում՝ ճառագայթային հիվանդության վտանգ ունեցող անձանց:

Առողջապահական այլ ծառայություններին և ծրագրերին ուղղվող ծախսերը 2006 թվականին կկազմեն 4081.5 մլն դրամ, 2007 թվականին՝ 7049.0 մլն դրամ: Ընդհանուր առողջապահության ծախսերում առողջապահական այլ ծառայություններին և ծրագրերին ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը 2005 թվականի կկազմի 13.4 տոկոս, 2007 թվականին՝ 14.0 տոկոս:

Առողջապահության ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ վարկային ծրագրերը.

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Առողջապահական համակարգի արդիականացման ծրագիր, որի նպատակն է բարձրացնել առողջապահական ծառայությունների որակն ու մատչելիությունը՝ բարելավելով ընտրված հիվանդանոցային ցանցի որակն ու արդյունավետությունը և մշակելով առողջապահության քաղաքականության մշակման և մոնիտորինգի կարողություններ:

Ծրագրի շրջանակներում 2005 թվականին նախատեսվում է՝

1. Բուժքույրերի և ընտանեկան բժիշկների վերապատրաստում.
2. Առողջապահական կրթական կենտրոնների վերանորոգում, վերջիններիս համար բժշկական և գրասենյակային սարքավորումների ձեռքբերում.
3. Հիվանդանոցների կառավարման կարողությունների հզորացում, ներառյալ ֆինանսական մենեջմենթի և հաշվապահական նոր համակարգի ներդրում.
4. Մարզային հիվանդանոցների ապահովում բժշկական սարքավորումներով.
5. Առողջապահության մասին օրենսդրության կատարելագործման ֆինանսավորում.
6. Դրամաշնորհների տրամադրում համայնքներին:

Հայաստանի Սոցիալական ներդրումների երկրորդ ծրագիր առողջապահության ոլորտում, որի շրջանակներում 2005 թվականին նախատեսվում է առողջապահական հիմնարկների վերա-

նորոգման աշխատանքների իրականացման և համապատասխան բուժսարքավորումների ձեռք-բերման միջոցառումներ:

2005 թվականին նախատեսվում է իրականացնել նաև **Համաշխարհային բանկի աջակցությամբ Առողջապահության արդիականացման ծրագրում ճապոնական դրամաշնորհային ծրագիրը**, որը ևս ուղղված է առողջապահական համակարգի զարգացմանն ու արդիականացմանը:

Առողջապահության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ նախորդ տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ, արտացոլված է սույն բացատրագրի N 4 աղյուսակում:

2005 թվականի առողջապահական պետական նպատակային ծրագրերը արտացոլված են սույն բացատրագրի N 6 հավելվածում:

Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության բնագավառի համար 2005 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսերն ուղղված են բնակչության սոցիալական խնդիրների լուծմանը:

Այս բնագավառում նախատեսվող միջոցառումներն ուղղվելու են բնակչության սոցիալական ապահովության քաղաքականության հիմնական և գերակա ուղղությունների՝ աշխատանքի, բնակչության զբաղվածության, պետական կենսաթոշակային ապահովության, սոցիալական աջակցության, ընտանիքի, հաշմանդամների և տարեցների սոցիալական պաշտպանության, փախստականների սոցիալական խնդիրների լուծման, օրենսդրության կատարելագործմանն ու դրա իրականացման ապահովմանը, ինչպես նաև անհատական ծածկագրային համակարգի ներդրման գործընթացի շարունակությանը:

2005 թվականին սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության բնագավառի ծախսերը (առանց ապարատի պահպանման) կկազմեն 45,433.0 մլն դրամ, կամ 2004 թվականի հաստատված բյուջեի ծախսերը կգերազանցեն 1012,7 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է՝

- կենսաթոշակային ապահովման ծախսերի աճով՝ 1,936.9 մլն դրամի չափով,
- *բնակչությանը տրվող պետական նպաստների ավելացմամբ՝ 6,060.1 մլն դրամի չափով,*

- սոցիալական ապահովության միջոցառումների և այլ սոցիալական ծրագրերի մասով նոր ծրագրի ընդունմամբ և գործող ծրագրերի ծախսերի ավելացմամբ՝ 2,130.0 մլն դրամի չափով:

ՀՀ 2005-2007 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2005 թվականի համար նախատեսված չափաքանակների նկատմամբ 2005 թվականի բյուջեի նախագծի աճը կազմում է 190.0 մլն դրամ՝ կապված առանձին ծրագրերի նախահաշիվների ճշտման և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի ներդրման հետ:

Միջնաժամկետ հեռանկարում «Սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության» բնագավառի ծախսերը կկազմեն՝ 2006 թվականին 52210.4 մլն դրամ, իսկ 2007 թվականին՝ 56580.5 մլն դրամ :

Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության ոլորտի ծախսերը ըստ ենթախմբերի և ծրագրերի բնութագրվում են հետևյալ կերպ.

1. Կենսաթոշակային ապահովում

Այս ենթախմբով ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող հատկացումները կկազմեն 15,456.2 մլն դրամ կամ 1,936.9 մլն դրամով ավելի, քան 2004 թվականին: Այդ թվում`

«Սպայական անձնակազմի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովում» ծրագրով նախատեսվում է 9,229.6 մլն դրամի չափով ծախս: Ծախսերի աճը 2004 թվականի նկատմամբ կազմում է 1,466.9 մլն դրամ, որը պայմանավորված է «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ, պետական բյուջեից ֆինանսավորվող կենսաթոշակառուների կանխատեսվող միջին տարեկան թվաքանակի ավելացմամբ` 799 մարդով (2004թվականին` 34766 մարդ, 2005թվականին` 35565 մարդ) և միջին ամսական կենսաթոշակի չափի աճով` 3014.0 դրամի չափով (2004թվականին` 18607.1 դրամ, 2005թվականին` 21621.1 դրամ, պայմանավորված կենսաթոշակի չափի հաշվարկում սննդի փոխհատուցման գումարի 50%-ի ներառմամբ` 287,759.5 հազ. դրամ և 1990-1994 թվականների մարտական գործողությունների մասնակից զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների կենսաթոշակների չափերի նախատեսվող 20%-ով բարձրացմամբ` 274,278.3 հազ. դրամ):

«Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովում» ծրագրով նախատեսվում է 2,463.5 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2004 թվականի նկատմամբ նվազել են 230.3 մլն դրամով, որը պայմանավորված է շարքային զինծառայող կենսաթոշակառուների կանխատեսվող թվաքանակի նվազմամբ` 1805 մարդով (2004թվականին` 19937 մարդ, 2005թվականին` 18132 մարդ):

«Սոցիալական կենսաթոշակներ» ծրագրով նախատեսվում է 2,628.9 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2004 թվականի համեմատությամբ աճել են 467.1 մլն դրամով (2004թվականին այն կազմել է 2161.8 մլն դրամ), որը պայմանավորված է կենսաթոշակի հիմնական չափի` 1000 դրամով բարձրացմամբ (բարձրացումը նախատեսվում է 01.04.2005 թվականից և կկազմի 4000 դրամ): Բացի այդ, եղեռնը վերապրած կենսաթոշակառուներին կտրվի կենսաթոշակի լրացուցիչ հավելում` ամսական 5000 դրամի չափով: Միաժամանակ կենսաթոշակառուների թվաքանակը կնվազի 1189 մարդով (2004թվականին` 46197 մարդ, 2005թվականին` 45008 մարդ):

«ՀՀ պետական բյուջեից «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով նախատեսված ապահովագրական ստաժի համար ֆինանսավորում» ծրագրի ծախսերը կազմում են 954.0 մլն դրամ (ՀՀ 2004 թվականի պետական բյուջեով այն ներառված է «Սոցիալական կենսաթոշակներ» ծրագրում` 834.7 մլն դրամի չափով): Աճը կազմում է 119.3 մլն դրամ, որը պայմանավորված է ՀՀ կառավարության 09.09.2004 թվականի N1265-Ն որոշմամբ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը 20 դրամով բարձրացնելու հետ (մինչև 01.10.2004թվականին

ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը կազմել է 140 դրամ, իսկ 01.10.2004թվականից՝ 160 դրամ):

«Աշխատողների աշխատանքային պարտավորությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում» ծրագրով նախատեսվում է 45.6 մլն դրամի չափով ծախս: Ծախսերի աճը 2004 թվականի համեմատությամբ կկազմի 32.6 մլն. դրամ, որը պայմանավորված է ՀՀ կառավարության 25.06.04 թվականի «ՀՀ կառավարության 1992թ. նոյեմբերի 15-ի N 579 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1040-Ն որոշմամբ վնասի փոխհատուցման չափի ավելացմամբ:

«ՀՀ օրենքներով և կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակներ և ամենամսյա դրամական օժանդակություն» ծրագրով նախատեսվում է 134.6 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի համեմատությամբ աճել են 81.4 մլն դրամով: Ծախսերի աճը պայմանավորված է «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ (ՀՕ-61-Ն 22.04.04թ), որի համաձայն կենսաթոշակի իրավունք ստացած դատավորների կենսաթոշակի չափի և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակի չափի տարբերությունը պետք է հատուցվի ՀՀ պետական բյուջեից:

2. Պետական նպաստներ բնակչությանը

Այս ենթախմբով ՀՀ 2005թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող հատկացումները կկազմեն 22,409.6 մլն դրամ, կամ 6,060.1 մլն դրամով ավելի քան 2004 թվականին (16,349.5 մլն դրամ):

«Աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն» ծրագրով, ինչպես և 2004 թվականին, նախատեսվում է նպաստի հատկացում 139.0 հազ. ընտանիքի, իսկ ծախսերը կկազմեն 20,166.6 մլն դրամ՝ 2004թվականի 16,093.0 մլն դրամի դիմաց: 2004 թվականի նկատմամբ ծախսերի աճը կազմում է 4,073.6 մլն դրամ, որը նպատակ ունի մոտեցնելու մեկ շնչին ընկնող նպաստի չափը աղքատության պարենային գծին՝ պահպանելով ներկայիս նպաստառու ընտանիքների թիվը: Նախատեսվել է նպաստի իրավունք ունեցող ընտանիքի յուրաքանչյուր երեխային տրվող հավելման չափի բարձրացում՝ իրականացնելով համապատասխան միջոցառումներ նաև հասցեականության և արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

«Մինչև 2 տարեկան երեխա խնամող և մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց տրվող ամենամսյա նպաստ» ծրագրով նախատեսվում է 256.4 մլն դրամ, ինչպես և 2004թվականին՝ 9400 մարդու հաշվով:

«Հղիության և ծննդաբերության», «Երեխայի ծննդյան միանվագ նպաստ» «Ֆինասական աջակցություն գործազուրկներին ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և աշխատատեղեր ստեղծելու համար» և «Աշխատաշուկայում խոցելի խմբերին աշխատանքի ընդունելու դեպքում աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին» ծրագրերով նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 655.0, 1,207.5, 50.0, և 74.0 մլն դրամի չափով ծախս: Նշված ծախսերը, որոնք ներկայումս կատարվում են ՀՀ սոցիալական ապահովագրության պետական

հիմնադրամի բյուջեից սկսած 2005թվականից կֆինանսավորվեն ՀՀ պետական բյուջեից, ինչպես նախատեսված է հանրապետությունում աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով:

3. Մոցիալական ապահովության միջոցառումներ

Այս ենթախմբով ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող հատկացումները կկազմեն 3,794.4 մլն դրամ, կամ 606.1 մլն դրամով ավելի քան 2004 թվականին: Այդ թվում՝

- ***Տարեցների մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում «Տարեցների տուն-ինտերնատների ծառայությունների ձեռք բերում»*** - նախատեսվել է 770.6 մլն դրամ (2004 թվականին այն կազմել է 634.6 մլն դրամ) կամ մեկ խնամվողի միջին օրական պահպանման համար՝ 2176.6 դրամ (2004 թվականին այն կազմել է 1906.3 դրամ): Մեկ խնամվողի միջին օրական պահպանման ծախսերը աճել են 14.2 %-ով, որը հնարավորություն է տալիս ավելացնելու խնամվողների թվաքանակը՝ 58 մարդով (2004 թվականին 912, 2005 թվականին՝ 970 խնամվող), աշխատողների միջին ամսական աշխատավարձը բարձրացնելու 45%-ով (2004թվականի 19023.0-ի դիմաց 2005 թվականին՝ 27600.0 դրամ), մեկ խնամվողի սննդի միջին օրական ծախսը՝ 153.3 դրամով և կկազմի 866.2 դրամ:

- ***Տարեցների մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում «Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոնի ծառայությունների ձեռք բերում»*** - ծախս է նախատեսվել 60.1 մլն դրամի չափով (2004թվականին այն կազմել է 42.6 մլն դրամ) մեկ խնամվողի միջին օրական պահպանման համար՝ 137.2 դրամ (2004 թվականին այն կազմել է 97.2 դրամ): Մեկ խնամվողի միջին օրական պահպանման ծախսերը աճել են 41.1 %-ով, որը որը հնարավորություն է տալիս համահավասարեցնելու տուն-ինտերնատների և տնային պայմաններում սոցիալական սպասարկումը իրականացնող աշխատողների միջին ամսական աշխատավարձը:

- ***Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում «Հոգեկան առողջության վերականգնման ծառայությունների ձեռք բերում» և «Բժշկասոցիալական վերականգնման, աշխատունակության փորձաքննության հիվանդանոցային ծառայությունների ձեռք բերում»*** - ծախսերը նախատեսվել են 2004թվականի մակարդակով և համապատասխանաբար կկազմում են 45.0 մլն դրամ և 35.5 մլն դրամ:

- ***Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում «Հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում»*** - ծախս է նախատեսվել 550.4 մլն դրամի չափով: 2004 թվականի նկատմամբ ծախսերը նվազել են 18.0 մլն դրամով, որը պայմանավորված է պրոթեզա-օրթոպեդիկ պարագաների և հաշմանդամների կյանքը թեթևացնող այլ պարագաների և նրանց վերանորոգման, լսողական ապարատների և հաշմանդամների սայլակների մեկ պայմանական միավորի շուկայական միջին գների և դրանց կարիքը ունեցող անձանց թվաքանակի փոփոխությամբ

(2005 թվականին 16958 պայմանական միավոր և մեկ միավորի շուկայական միջին գինը՝ 32.46 հազ. դրամ, 2004թվականի համապատասխանաբար՝ 19440 միավորի և 29.2 հազ. դրամի դիմաց):

- **Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում «Հաշմանդամների տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների ձեռք բերում»** - ծախսերը 2004 թվականի նկատմամբ նվազել են 0.4 մլն դրամով և կազմել է 8.6 մլն դրամ, կապված հաշվարկների ճշտգրտման հետ:

- **Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում «ԲՄՓ ձևաթղթի տպագրության ծառայությունների ձեռք բերում»** - ծախսերը 2004թվականի նկատմամբ աճել են 5.3 մլն դրամով և կազմել է շուրջ 10.0 մլն դրամ, կապված ձևաթղթերի գների բարձրացման հետ:

- **«Գործազուկների տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների՝ «Գործ» համակարգ ձեռք բերում» (ընդգրկված է Զբաղվածության ծառայություններ ծրագրի շրջանակներում)**- ծախսերը 2004 թվականի նկատմամբ նվազել են 0.4 մլն դրամով և կազմել 9.6 մլն դրամ՝ կապված հաշվարկների ճշտգրտման հետ:

- **«ՍԾՏԳ ձևաթղթի տպագրության ծառայությունների ձեռքբերում» (ընդգրկված է Սոցիալական աջակցության ծառայություններ ծրագրի շրջանակներում)**- ծախսերը 2004 թվականի նկատմամբ աճել են 5.3 մլն դրամով և կազմել 11.7 մլն դրամ՝ կապված հաշվարկների ճշտգրտման հետ:

- **«Աղքատության ընտանեկան նպաստի տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների ձեռք բերում» (ընդգրկված է Սոցիալական աջակցության ծառայություններ ծրագրի շրջանակներում)** - ծախսերը 2004 թվականի նկատմամբ նվազել են 1.2 մլն դրամով և կազմել 28.8 մլն դրամ՝ կապված հաշվարկների ճշտգրտման հետ:

2004 թվականի բյուջեով նախատեսված «Նպաստ աշխատանքի դիմաց» ծրագիրը 2005 թվականին կփոխարինվի զբաղվածության ծառայություններ ծրագրի շրջանակներում իրականացվող «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով, որի գծով նախատեսվում է 600.0 մլն. դրամի չափով ծախս: Ծրագրի իրականացման արդյունքում կկանոնակարգվի ժամանակավոր զբաղվածության խնդիրը, այն ուղղորդված է սոցիալական ենթակառուցվածքների, ինչպես նաև տարածքների, պատմա-ճարտարապետական հուշարձանների բարեկարգման օժանդակ աշխատանքների կատարմանը: Նախկին նպաստը կփոխարինվի աշխատավարձով, իսկ աշխատած ժամանակահատվածը կհամարվի որպես աշխատանքային ստաժ, աշխատանք փնտրող չզբաղված անձինք երեքից վեց ամսվա ընթացքում ամսական կունենան հանրապետության միջին աշխատավարձին մոտ եկամուտ («Պետական նպաստներ բնակչությանը» ենթախմբից տեղափոխվել է «Սոցիալական ապահովության միջոցառումներ» ենթախումբ):

Զբաղվածության ծառայություններ ծրագրի շրջանակներում իրականացվող «Դպրոցական աշխատակազմի օպտիմալացման և սոցիալական աջակցության ենթածրագրի իրակա-

նացման ուղեկցման ծախսեր» - նախատեսվել է 5.3 մլն դրամ՝ օպտիմալացման ծրագրով իրականացվող գործընթացները համակարգելու համար:

Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության ծառայություններ ծրագրի շրջանակներում «Սոցիալական ապահովության քարտերի համակարգի ներդրման, տեղեկատվական բազայի վարման և շահագործման գծով «Նորք» տեղեկատվա-վերլուծական կենտրոն ՓԲԸ ծառայությունների ձեռք բերում» - 2005 թվականին կշարունակվի իրականացվել գործատուների կողմից անհատականացված հաշվետվությունների ներկայացումը, որը կարտացոլի կենսաթոշակային ապահովագրության համար յուրաքանչյուր ապահովագրված անձի կողմից և նրա համար կատարված վճարումները: Այդ համակարգը թույլ կտա մեծացնել յուրաքանչյուր աշխատողի ապահովագրական ստաժի հաշվառման ճշտությունն ու ճշգրտությունը, կպարզեցնի կենսաթոշակի նշանակման գործընթացը և ուղղակի կապ կապահովի կատարված վճարումների և նշանակված կենսաթոշակների չափերի միջև: Ծախսերը 2004 թվականի նկատմամբ նվազել են 3.6 մլն դրամով և կազմել են 116.4 մլն դրամ՝ կապված հաշվարկների ճշտորոտման հետ:

Ըտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում «Երեխաների տուն-ինտերնատների ծառայությունների ձեռքբերում» - ծախս է նախատեսվել 897.4 մլն դրամի չափով (2004թվականին այն կազմել է 594.1 մլն դրամ) կամ մեկ խնամվողի միջին օրական պահպանման համար՝ 2629.6դրամ (2004 թվականին այն կազմել է 1740.9 դրամ): Մեկ խնամվողի միջին օրական պահպանման ծախսերը աճել են 51.0 %-ով, որը հնարավորություն է տալիս աշխատողների միջին ամսական աշխատավարձը բարձրացնել 108.9%-ով (2004 թվականի 19970.0-ի դիմաց 2005թվականին՝ 41717.6 դրամ՝ հավասարեցնելով կրթության և առողջապահության ոլորտների համապատասխան աշխատողների աշխատավարձերին), ավելացնելու մեկ խնամվողի սննդի միջին օրական ծախսը՝ 132.8 դրամով և կկազմի 806.4 դրամ: Բացի այդ այն հնարավորություն է տալիս ապահովելու ՀՀ Կառավարության 05.08.2004թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմին ճանաչելու և մանկատներում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին», N1324-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ մանկատան երեխային տրամադրվում է անձնական մանր ծախսեր կատարելու գումար (անձնական մանր ծախսերի համար նախատեսվել է՝ 7-ից ներառյալ 12 տարեկան երեխաներին՝ ամսական 2000 դրամ, 13-ից ներառյալ 18 տարեկան երեխաներին՝ ամսական 3000 դրամ):

Ըտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում «Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» - ծախս է նախատեսվել 222.3 մլն դրամի չափով: 2004 թվականի նկատմամբ ծախսերը նվազել են 113.0 մլն դրամով՝ կապված շահառուների թվաքանակի նվազմամբ: Այս ծրագրի ընդհանուր նպատակն է՝ ապահովել ՀՀ մանկատների շրջանավարտների սոցիալական պաշտպանությունը և նրանց ինտեգրումը հասարակության մեջ, բնակարանների հատկացումը, մասնագի-

տական կողմնորոշումը, ուսուցումը, վերապատրաստումը, բուժօգնության անվճար և իրավաբանական աջակցության տրամադրումը:

Լտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում «Մանկական խնամակալական կազմակերպությունների բեռնաթափման հետ կապված ծախսեր» - ծախս է նախատեսվել 17.0 մլն դրամի չափով: 2004 թվականի նկատմամբ ծախսերի նվազումը շուրջ 9.2 մլն դրամի չափով պայմանավորված է նրանով, որ 2004թվականի հուլիսի 1-ին ՀՀ կառավարության N 988-Ն որոշմամբ հաստատվեց «Մանկատների բեռնաթափում» փորձնական ծրագիրը, որի համաձայն 2004 թվականին ընտրվել են 26 երեխաներ, որոնք 2005 թվականին կվերադարձվեն 13 ընտանիքներ: Միաժամանակ 2005 թվականին կընտրվեն 50 երեխա, որոնց դրամական օգնությունը պետք է տրվի սեպտեմբեր ամսից, քանի որ մինչ այդ պետք է կատարվեն նախապատրաստական աշխատանքներ՝ սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների աշխատակիցների վերապատրաստում, սոցիալ-հոգեբանական նախապատրաստական աշխատանքներ ընտանիքների և երեխաների հետ (պայմանագրային կարգով հոգեբան մասնագետների ներգրավում): Բացի այդ նկատի է առնվել նաև այն, որ սոցիալական տարածքային կենտրոնների աշխատակիցների վերապատրաստման աշխատանքները կիրականացվեն «Սեթո-դարանական և վերապատրաստման ծառայություններ» ծրագրով:

Լտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում «Երեխաների ցերեկային խնամքի կենտրոնների սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների ձեռք բերում» - ծախսերը նախատեսվել են 200 երեխայի համար՝ 57.4 մլն.դրամի չափով:

«Մարդասիրական օգնության կարգով ստացվող սննդի բաշխման հետ կապված ծախսեր» - ծախս է նախատեսվել 55.0 մլն դրամի չափով (6978.0 տոննա բեռ x 7880.18 դրամ՝ 1տ բեռի բեռնաթափման, բեռնման, պահպանման, տեղափոխման և բաշխման ծախսեր):

Սոցիալական աջակցության ծառայություններ ծրագրի շրջանակներում «Աղքատության ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնություն վճարման հետ կապված փոստային ծառայությունների ձեռք բերում» - փոստային ծառայության գնի բարձրացմամբ պայմանավորված նախատեսվում է 242.0 մլն դրամի չափով ծախս (աղքատության ընտանեկան նպաստների գումարի 1.0 %-ի դիմաց կազմել է 1.2 %):

Սոցիալական աջակցության ծառայություններ ծրագրի շրջանակներում «Սոցիալապես անապահով քաղաքացիներին կամ ընտանիքներին դրամական օժանդակություն հրատապ օգնության համար» - ծախս է նախատեսվել 7.6 մլն դրամի չափով: 2004 թվականի նկատմամբ ծախսերը աճել են 687.5 հազ. դրամով, որը պայմանավորված է օգնություն գումարի ավելացմամբ նախորդ տարվա 3000 դրամի դիմաց այն կկազմի 3500 դրամ (2150 մարդ x 3500 դրամ):

«Մեթոդաբանական և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստման ծառայությունների ձեռք բերում»- ծախս է նախատեսվել 14.2 մլն դրամի չափով (կրթության խմբից տեղափոխվել է սոցիալական ապահովություն խումբ):

«Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ» ծրագիր:

«Փախստականների մասին» ՀՀ օրենքով նախատեսված փախստականների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման և նրանց սոցիալական խնդիրների լուծման համար ծախս է նախատեսվել 13.1 մլն դրամի չափով: 2004թվականի նկատմամբ ծախսերը նվազել են 13.9 մլն դրամով, որը պայմանավորված է փախստականների համար բնակարանների սեփականաշնորման գործընթացով:

«Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության ծառայությունների գնման գծով ծրագրի շրջանակներում «Համակարգչային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սուբսիդավորում» - ծախս է նախատեսվել 2004 թվականի մակարդակով և կազմում է 9.6 մլն դրամի չափով, որի նպատակն է փախստականների և միգրանտների հաշվառման, վերահաշվառման և այլ աշխատանքների կատարումը:

««Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ծառայությունների ձեռքբերման գծով պետական պատվեր»» ծրագրով ծախս է նախատեսվել 2004թվականի մակարդակով և կազմում է 6.9 մլն դրամ:

4. Այլ սոցիալական ծրագրեր

Այս ենթախմբով ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող հատկացումները կկազմեն 3772.9 մլն դրամ, կամ 2004 թվականի նկատմամբ կաճեն 1523.9 մլն դրամով:

«Փախստականի կարգավիճակ հայցողին միանվագ նպաստ» ծրագրով ծախս է նախատեսվել 0.3 մլն դրամ: Ծախսերի նվազումը կազմում է 50.0 հազ. դրամ, որը պայմանավորված է փախստականի կարգավիճակ հայցողների թվաքանակի 40 մարդով նվազմամբ (2004 թվականին՝ 70 մարդ):

«Հայրենական Մեծ Պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձածներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրում» ծրագրով ծախս է նախատեսվել 1,499.5 մլն դրամ՝ պայմանավորված «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» և «Վետերանների մասին» ՀՀ օրենքներում նախատեսված արտոնությունների փոխարինումը դրամական փոխհատուցումամբ (Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներ՝ 2517 մարդ, Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներին հավասարեցված՝ 438 մարդ, հաշմանդամ վետերաններ՝ 6851 մարդ, հաշմանդամ վետերաններին հավասարեցված՝ 1928 մարդ, Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների ընտանիքի անդամներ (այրիներ և մանկուց հաշմանդամներ) 2255

մարդ, հաշմանդամ զինծառայողներ (նրանց հավասարեցված անձիք)՝ 7819 մարդ, զոհված (մահացած) զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) ընտանիքներին՝ 8234 մարդ, ընդամենը՝ 30042 մարդ): «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի համաձայն հաշմանդամ դարձած զինծառայողներին գազի, ջրամատակարարման և տրանսպորտից օգտվելու համար տրվող դրամական օգնությունը նախատեսվում է ավելացնել ամսական երկու հազար դրամի չափով և գործող երեք հազարի դիմաց այն կկազմի հինգ հազար դրամ:

Անհրաժեշտ է նշել նաև, որ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ 2005թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում են նաև միջոցներ ՀՀ պաշտպանության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին միանվագ սոցիալական ապահովագրական վճարների (130.0 մլն. դրամ), վարժական հավաքների և զինծառայության ընթացքում մահացած (զոհված) զինծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցման (170.0 մլն դրամ), զոհված ազատամարտիկների երեխաներին ԲՈՒՀ-երում վճարովի ուսուցման փոխհատուցման (15.0 մլն դրամ) գծով ծախսերի ֆինանսավորման համար:

«Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքով սահմանված վետերանների պատվովճարների վճարման համար նախատեսվում է 510.0 մլն դրամ:

Բռնադատված քաղաքացիներին պատճառված վնասի միանվագ դրամական փոխհատուցում՝ 2.6 մլն դրամ:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում անվճար իրավաբանական օգնություն ցույց տված փաստաբանների վարձատրություն՝ 26.0 մլն դրամ:

Անավարտ շինարարության բնակչինարարական կոոպերատիվ բնակելի տների փայտերերի ներդրված միջոցների դիմաց առաջացած պետական պարտքի փոխհատուցում՝ 462.0 մլն դրամ:

«ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների կողմից գեղջ սակագնով կամ անվճար ծառայություններ մատուցելու հետևանքով չստացված եկամուտների փոխհատուցում» - ծախս է նախատեսվել 2004 թվականի մակարդակով՝ 20.0 մլն դրամ:

«Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման» ծրագրով նախատեսվում է հատկացնել 937.5 մլն դրամ:

Ծրագրի նպատակը բնակչության աղքատ և խոցելի խավի սոցիալական պաշտպանվածության բարձրացումն է: Ծրագիրն ուղղված է ժամանակակից սոցիալական ապահովության կառավարման համակարգի ստեղծմանը, որը կտրամադրի ոչ միայն պետական սոցիալական ծրագրերի արդյունավետ կառավարում և վերահսկողություն, այլ նաև հիմք կհանդիսանա աղքատ ընտանիքներին և բնակչության խմբերին բարելավված սոցիալական ծառայություններ մատուցելու համար :

Ծրագիրը բաղկացած է հինգ բաղադրիչներից՝

7. Ընդհանուր աջակցություն սոցիալական պաշտպանության ոլորտին,
8. Աշխատանք և զբաղվածություն,
9. Կենսաթոշակային արդիական համակարգի ստեղծում
10. Սոցիալական աջակցություն:

11. 2005 թվականի ընթացքում նախատեսվում է սոցիալական ապահովության տարածքային կենտրոնների համար համակարգչային տեխնիկայի ձեռք բերում, կենսաթոշակային արդի համակարգի ստեղծման համար կենտրոնացված գրանցման համակարգի ստեղծման աշխատանքներ, կենսաթոշակային հիմնադրամի աշխատանքների բարելավմանն ուղղված միջոցառումներ, ուղեցույցների պատրաստում, գործազուրկների վերապատրաստման դասընթացներ, խորհրդատվական աշխատանքներ:

Սոցիալական ապահովության բնագավառի ծախսերի՝ նախորդ տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ համեմատությունն արտացոլված է սույն բացատրագրի N 5 աղյուսակում:

**Բյուջետավորման բնագավառում ՀՀ կառավարության կողմից
իրականացվող բարեփոխումները**

2001 թվականից սկսած՝ ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել նախապատրաստական աշխատանքներ կատարել բյուջետավորման՝ մուտքերի (ծառայությունների մատուցման համար օգտագործվող ռեսուրսներ) վրա հիմնված եղանակից արդյունքների վրա հիմնված եղանակին աստիճանական անցման նպատակով անհրաժեշտ պայմանների ստեղծման համար: Արդյունքում, 2002, 2003 և 2004 թվականների պետական բյուջեների նախագծերի կազմում (2003 թ.՝ տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքում, իսկ 2002 և 2004 թթ.՝ ՀՀ կառավարության այդ տարիների բյուջետային ուղեընթացում) ներառվել են սոցիալական ոլորտներում (կրթություն, առողջապահություն և սոցիալական ապահովություն) այդ տարիների պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացելիք ծախսային ծրագրերի ակնկալվելիք արդյունքների ցուցանիշները:

2003 թվականին ՀՀ կառավարությունը մշակել է ծրագրային բյուջետավորման բարեփոխման գործողությունների ծրագիր: Այս գործողությունների ծրագիրը հաշվի է առնում այն փաստը, որ ծախսային ծրագրի արդյունավետ կառուցվածքը հիմք է հանդիսանում հաջող ծրագրային բյուջետավորման և քաղաքականության և բյուջեների կապի համար:

Համաձայն այս գործողությունների ծրագրի, պահանջվում է, որ բոլոր պետական մարմինները վերափոխեն իրենց ծրագրերն այնպիսի սկզբունքներով, որի արդյունքում ունենան ծառայությունների օգտակար համախմբում: Դրա նպատակն է կառավարությանն ավելի արդյունավետ տեղեկատվություն ներկայացնել այն ծառայությունների կամ ուղղակի արդյունքների վերաբերյալ, որոնք տրամադրելու են բյուջետային գումարների դիմաց: Ծրագրերի վերափոխումով և դրանց ֆինանսական գնահատականը տալով ըստ ծառայությունների՝ ՀՀ կառավարությունն ավելի լավ տեղեկատվություն կունենա մատուցվող ծառայությունների արժեքի վերաբերյալ: Սա կօգնի ՀՀ կառավարությանը, որպեսզի այն ավելի լավ հասկանա ծառայությունների մատուցման համար կատարվող ծախսային որոշումների հնարավոր հետևանքները, և, այդպիսով, կօգնի ռեսուրսներն ուղղել այն ոլորտներին և միջոցառումներին, որոնք, լավագույնս, կնպաստեն ՀՀ կառավարության նպատակների իրականացմանը: Այսպիսով, այս տեղեկատվությունը շատ կարևոր է, որպեսզի ուժեղանա քաղաքականության և բյուջեների միջև կապը Հայաստանում: Այս խնդիրն ավելի կարևոր է դառնում, քան անցյալում, քանի որ սկսվել է ԱՀՌԾ գործընթացը և ավելացել են քաղաքական պահանջները՝ կառավարության միջոցառումների, ձեռքբերված արդյունքների և հաշվետվողականության միջև կապերի թափանցիկության

առումով: Նման պահանջները Ազգային ժողովի և, հենց իսկ, կառավարության կողմից ընդգծում են այս բարեփոխումների անհրաժեշտությունը:

Այս մոտեցումը 2003-2004 թթ. փորձնականորեն կիրառվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում (ԱՍՀՆ)՝ ըստ գործողությունների ծրագրի պահանջների, իսկ սկսած 2004 թվականից՝ այն կիրառվում է նաև երեք այլ նախարարություններում. ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության և ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություններում: Համաձայն գործողությունների ծրագրի, ՀՀ ԱՍՀՆ ծրագրերի նոր կառուցվածքը հրատարակվել է ՀՀ 2005-2007 թթ. ՄԺԾԾ-ում և պետք է ներկայացվի ՀՀ 2005 թ. պետական բյուջեի նախագծում, իսկ մյուս երեք նախարարությունների գծով ծրագրերի նոր կառուցվածքը՝ ՀՀ 2006-2008 թթ. ՄԺԾԾ-ում և ՀՀ 2006 թ. պետական բյուջեի նախագծում: Այդ նախարարություններում ծրագրերի վերափոխման աշխատանքների արդյունքում ձեռք բերված փորձի հիման վրա նախատեսվում է 2005թ. ընթացքում ծրագրերի վերաձևակերպման աշխատանքները կատարել, արդեն իսկ, բոլոր պետական մարմիններում, որպեսզի դրանք կարողանան պատրաստել իրենց 2007-2009 թթ. միջնաժամկետ հայտերը և 2007 թ. բյուջետային հայտերը ծախսային ծրագրերի նոր կառուցվածքով:

Նշված աշխատանքների առավել արդյունավետ կատարումը կազմակերպելու նպատակով ՀՀ կառավարությունը համագործակցում է Միացյալ Թագավորության միջազգային զարգացման նախարարության օժանդակությամբ 2002 թվականից հրավիրված փորձագետների հետ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ուսուցման կենտրոնում իրականացվող դասընթացների միջոցով պետական կառավարման մարմինների աշխատակիցների շրջանում տարածում է բյուջետավորման նոր եղանակների կիրառման գիտելիքները: Այս ուղղությամբ դասընթացների անցկացումը նախատեսվում է ներառել նաև ուսուցման կենտրոնի առաջիկա տարիների ուսումնական ծրագրերում:

Ներկայումս վերը նշված միջոցառումների կատարմանը զուգահեռ սկսվել են քննարկումների արդյունքների վրա հիմնված բյուջետային ծախսային ծրագրերի գանձապետական կատարման ու դրա վերաբերյալ հաշվետվողականության ապահովման հարցերի շուրջ: Մասնավորապես նպատակ է դրվել եռամյա ժամկետում (2005-2007թթ) ՀՀ պետական հատվածում ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման հետ կապված համապատասխանեցնել բյուջեների կազմման և բյուջեների կատարման ու հաշվետվությունների գործող համակարգերը, ինչը ենթադրում է ՀՀ պետական բյուջեի կազմում, կատարում և հաշվետվությունների ներկայացում՝ հիմնվելով արդյունքների վրա:

Ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրումը նախատեսում է, որպեսզի բոլոր պետական մարմինները վերաձևակերպեն իրենց ծախսային ծրագրերն այնպիսի սկզբունքներով, որի արդյունքում ունենան ծառայությունների օգտակար համախմբում, ապահովելով ծրագրի իրականացման նպատակով կատարվող բոլոր ծախսերի բաշխումը ծրագրի միջև: Մրանք պետք է ընդգրկեն ոչ միայն այն ծախսերը, որոնք ուղղակիորեն հատկացվում են ծրագրին, այլև անուղղակի ծախսերը (ծրագրերի գոյություն ունեցող կառուցվածքով, պետական մարմինների կենտրոնական ապարատի աշխատակազմի, ինչպես քաղաքականություն մշակող, մոնիտորինգ իրականացնող, այնպես էլ ծառայություններ մատուցող ստորաբաժանումների գծով ծախսերը՝ աշխատավարձ, կոմունալ սպասարկման և պահպանման ծախսեր, խմբավորված են պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կենտրոնական ապարատների պահպանման ծախսերի գծով ծրագրերում): Որպեսզի ծառայությունների վրա հիմնված ծրագրերն արտացոլեն այդ ծառայությունների մատուցման համար կատարված բոլոր ծախսերը, որոնք ավանդորեն խմբավորվել են կենտրոնական ապարատի պահպանման ծախսերի գծով ծրագրերում, դրանք պետք է բաշխվեն ծառայությունների վրա հիմնված ծրագրերի միջև:

Բյուջեների կատարման ավտոմատացման ներկայիս պայմաններում ՀՀ պետական բյուջեն միայն ծրագրային դասակարգմամբ հաստատելը լուրջ բարդություններ կարող է առաջ բերել բյուջեների կատարման և հաշվետվությունների ներկայացման առումով: Խոսքը վերաբերվում է բյուջեներից իրականացվող վճարումների նկատմամբ գանձապետական համակարգի կողմից ներկայումս իրականացվող նախնական հսկողության և բյուջեների կատարման, ինչպես նաև հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ պետական մարմինների կողմից գանձապետարան ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության գնահատման գործառնությունների թուլացմանը կամ վերացմանը: Միաժամանակ, միայն ծրագրային դասակարգմամբ բյուջեն հաստատելու պայմաններում էապես կաճեն գանձապետական համակարգի, պետական մարմինների և մատակարարների միջև իրականացվող գործառնությունների ծավալները, քանի որ մեկ ծախսատեսակը մի քանի ծրագրերի միջև բաժանելը կստեղծի լրացուցիչ աշխատանք: Ուստի հարցը կարգավորելու նպատակով նախատեսվում է կիրառել հետևյալ մոտեցումը:

Ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման ժամանակ բյուջեների կատարման և հաշվետվությունների ներկայացման ոլորտում առաջ եկող խնդիրների կարգավորման նպատակով առաջարկվում է ՀՀ պետական բյուջեում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ծրագրերը հաստատել 2 ձևաչափերով՝

ա) Չևաչափ N 1. Ծառայությունների վրա հիմնված ծրագրերի գործող դասակարգմամբ հաստատում՝ ըստ ծախսերի գործառնական, տնտեսագիտական և գերատեսչական դասակարգումների, որտեղ կենտրոնական ապարատի պահպանման ծախսերը բաշխված չեն ծրագրերի միջև: Այս դասակարգումը կօգտագործվի բյուջեների կատարման, դրամական հոսքերի կառավարման, վերահսկման և հաշվետվությունների ներկայացման նպատակով:

բ) Չևաչափ N 2. Ծառայությունների վրա հիմնված ծրագրերի նոր կառուցվածքի հաստատում, որտեղ կենտրոնական ապարատի (առաջիկայում միայն ծառայություններ մատուցող՝ պետական կառավարման հանրապետական մարմինների կենտրոնական ապարատների կառուցվածքի բաղկացուցիչ մաս կազմող գործակալությունների գծով) պահպանման ծախսերը բաշխված են այլ ծրագրերի միջև (2005թ. համար նշած բաշխումը բերված է ստորև): Այս ձևաչափը կօգտագործվի՝ աշակցելու պետական բյուջեի մասին որոշումների կայացմանը և հիմք կհանդիսանա եռամսյակային և տարեկան մոնիտորինգի և հաշվետվության համար:

Վերոհիշյալ երկու ձևաչափերը պետք է մեկը մյուսով պայմանավորված և սերտորեն փոխկապակցված լինեն:

Այս մոտեցմամբ պետական բյուջեի հաստատումը առանձնացնում է պետական բյուջեի կատարման, դրամական հոսքերի կառավարման և հաշվետվությունների ներկայացման նպատակով ծախսեային ծրագրերի դասակարգումը (1-ին ձևաչափ) պետական բյուջեի պլանավորման և հաշվետվության համար օգտագործվող ծախսային ծրագրերի դասակարգումից (2-րդ ձևաչափ):

Բյուջեների կատարման, ինչպես նաև հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունների նպատակով ՀՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմիններն ու գանձապետարանը պետք է կիրառեն 1-ին ձևաչափը: Միաժամանակ, հիմք ընդունելով 1-ին ձևաչափով ներկայացված հաշվետվությունները և պետական բյուջեի մասին օրենքով սահմանված՝ 1-ին ձևաչափից 2-րդ ձևաչափին անցման սկզբունքները, ՀՀ պետական կառավարման հանրապետական մարմինները պետք է ինքնուրույն հաշվարկեն և կազմեն նույն հաշվետվությունները 2-րդ ձևաչափով և ներկայացնեն գանձապետարան: 2-րդ ձևաչափով ներկայացված հաշվետվությունների արժանահավատության համար ողջ պատասխանատվությունը պետք է վերապահվի այն ներկայացնող պետական մարմիններին, քանզի գանձապետարանը չունի և չի կարող ունենալ այդ հաշվետվությունների արժանահավատության գնահատման համապատասխան գործիքներ:

Բյուջետային տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջեում վերաբաշխումների իրականացումը պետք է կատարվի 1-ին ձևաչափի նույն ընթացակարգերով, որով այն իրականացվում է ներկայումս, պայմանով, որ համապատասխան պետական մարմինները ինքնուրույն կապահովեն այդ փոփոխությունների արդյունքում 2-րդ ձևաչափի մեջ անհրաժեշտ փոփոխությունների կատարումը: Այդ փոփոխությունները իրենց արտացոլումը պետք է գտնեն 2-րդ ձևաչափի գանձապետարան ներկայացվող հաշվետվություններում, որպես պլանային ցուցանիշների ճշտումներ:

Եթե փորձնական ծրագրերի իրականացման արդյունքում կամ երկարաժամկետ հատվածում բյուջեների պլանավորման, կատարման և հաշվետվությունների և այս գործընթացի հետ կապված այլ համակարգերում սկզբունքային նոր փոփոխություններ չիրականացվեն, ապա առաջարկվող մոտեցումը կպահպանվի նաև երկարաժամկետ հատվածում, հակառակ դեպքում անհրաժեշտությունից ելնելով այն կվերանայվի:

Աղյուսակ 2 Կենտրոնական ապարատի կառուցվածքի բաղկացուցիչ մաս կազմող գործակալությունների գծով պահպանման ծախսերի բաշխումը ծառայությունների վրա հիմնված ծրագրերի միջև

հազար դրամ

Խումբ	Ծրագիր N	Ծրագրի անվանումը	Չևաչափ N1	Կենտրոնական ապարատի ծախսերի բաշխում ²⁶	Չևաչափ N2
06	1	Քաղաքականություն, պլանավորում, աջակցություն և մոնիտորինգ աշխատանքի, սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության ոլորտում	639.591,0	(474540.5)	165050.5
06, 02	2	Տարեցների մատուցվող ծառայություններ, այդ թվում	846.724,0	-	846.724,0
02	2.1	Այլընտրանքային ծառայություն	16.000.0	-	16.000,0
06	3	Հաշմանդամների մատուցվող ծառայություններ	669,486,8	131917.9	
06	4	Զբաղվածության ծառայություններ	614,875.9	332864.0	
06	5	Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության ծառայություններ	116,355.3	-	116,355.3
06	6	Ընտանիքների, կանանց և երեխաների մատուցվող ծառայություններ	1,194,137.3	-	1,194,137.3
06	7	Մեթոդաբանական և վերապատրաստման ծառայություններ	14,225.8	-	14,225.8
06	8	Մարդասիրական օգնության ծառայություններ	54,987.9	-	54,987.9
06	9	Սոցիալական աջակցության ծառայություններ	289,980.0	-	289,980.0
06	10	Ընտանեկան նպաստներ	20,166,586.0	-	20,166,586.0
06	11	Աշխատանքի ոլորտում վերահսկողություն	-	9758.6	9758.6

¹ «Կենտրոնական ապարատի ծախսերի բաշխում» սյունակում փակագծերում նշված թիվը և առանց փակագծերի թվերը պետք է հավասարակշռվեն, այնպես որ զուտ ազդեցությունը ԱՍՀՆ ծրագրերի ամբողջ ծախսի վրա հավասար լինի զրոյի:

ՀՀ սոցիալական ապահովության նախարարության 2005 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսերը «Ծրագրային բյուջետավորման» դասակարգմամբ ներկայացված է «ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 9 հավելվածում :

2005 թվականի Հաշմանդամների սոցիալական պաշտպանության և երեխայի իրավունքների ծրագրերը արտացոլված են սույն բացատրագրի, համապատասխանաբար՝ N 2 և N 3 հավելվածներում:

Մշակույթի, տեղեկատվության և սպորտի բնագավառում (առանց կառավարման մարմինների կենտրոնական ապարատի) ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված հատկացումները կազմում են 9096.1 մլն դրամ, 2004 թվականի 7870.7 մլն դրամի դիմաց, աճը կազմում է 1225.4 մլն դրամ, կամ 15.6 տոկոս:

Ծախսերի աճը պայմանավորված է՝

- մշակույթի ոլորտի գրադարանների, թանգարանների, մշակույթի տների, կենտրոնների, այլ

մշակութային հիմնարկների, թատերահամերգային կազմակերպությունների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտական ամսագրերի և մենագրությունների աշխատողների աշխատավարձի 50 տոկոսով բարձրացմամբ, որի արդյունքում ծախսերն աճում են շուրջ 618.5 մլն դրամով /ներառյալ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները/,

- շրջակա միջավայրի ազդեցությունից մշակութային արժեքների պահպանվածությունն ապահովող ժամանակակից սարքավորումների տեղադրման և հակահրդեհային անվտանգության ապահովման նպատակով 51.5 մլն դրամի նախատեսմամբ,

2. նոր և գոյություն ունեցող ծրագրերի ծախսերի աճով՝ 586.6 մլն դրամ:

Բացի վերը նշվածից, ոլորտի կապիտալ շինարարության և նորոգման ծախսերը նվազել են՝ 31.2 մլն դրամով:

Միջնաժամկետ հեռանկարում այս բնագավառի ծախսերը նախատեսվում են 2006 թվականին՝ 10111.3 մլն դրամ, իսկ 2007թվականին՝ 10008.0 մլն դրամ:

Մշակույթի, տեղեկատվության, սպորտի խմբի ծախսերն ուղղվելու են մշակութային ժառանգության պահպանմանն ու սերունդներին փոխանցմանն ապահովմանը, գեղարվեստա-ստեղծագործական գործունեության աջակցմանը, երիտասարդական, սպորտային ծրագրերի, ծառայությունների իրականացմանը, հեռուստատեսության և ռադիոյի հաղորդումների պատրաստմանը և հեռարձակմանը:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված հատկացումները ներկայացված են ներքոհիշյալ ենթախմբերում ընդգրկված պետական ոչ առևտրային կազմակերպությունների, խմբագրությունների սուբսիդավորման, մշակութային, երիտասարդական, սպորտային ծրագրերի և ծառայությունների իրականացման ծախսերի տեսքով:

Գրադարանների առաջնահերթ նպատակն է գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկված գրքային միավորի պահպանության և գրադարանային-տեղեկատվական սպասարկման ապահովումը:

Սուբսիդիաների հատկացումները նպատակուղղված են ակնկալվող այն արդյունքների ապահովմանն, ինչպիսին են գրադարանային աշխատողների աշխատավարձի բարձրացումը, գրադարանային հավաքածուների պահպանության պայմանների բարելավումը, գրադարանային հավաքածուների համալրումը, տեղեկատվական-գրադարանային ավտոմատացված համակարգի ստեղծումը և զարգացումը, գրադարանային հավաքածուների օգտագործման մատչելիության ապահովումը, գրադարանային հավաքածուների հրապարակումը, համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորումը:

Վերոնշյալ արդյունքներին հասնելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- գրադարանային հավաքածուների պահպանությունն ապահովելու համար 11 գրադարանի կտրամադրվի պատճենահան սարք, գրապահոցներում նորմատիվային ջերմաստիճանի ապահովման համար 6 գրապահոցում կտեղակայվեն օդակարգավորիչ սարքավորումներ, կկազմակերպվի

մշակութային նշանակության գրքային հավաքածուների պահպանվածության վիճակի ուսումնասիրություն, 2 գրադարանում /Հայաստանի ազգային և Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարաններում/ կիրականացվի 500 գրքերի կոնսերվացման ու վերականգնման աշխատանքներ,

- գրադարանային հավաքածուների համալրման աշխատանքները կատարելագործելու և նպատակային դարձնելու համար Հայաստանի ազգային գրադարանը ընդգրկվելու է՝ ըստ յուրաքանչյուր տպագիր արտադրանքի, Խնկո-Ապոր անվան մանկական և երաժշտական գրադարանները՝ ըստ բովանդակության տպագիր արտադրանքի և նյութական կրիչի, 10 մարզային գրադարանները՝ ըստ տարածաշրջանի ընթերցողի պահանջարկի ՀՀ-ում տպագրվող գրականության ձեռքբերման գործընթացին,

- տեղեկատվական-գրադարանային ավտոմատացված համակարգի ստեղծման և զարգացման նպատակով 7 գրադարանի կտրամադրվի համակարգիչներ և համակարգչային սարքավորումներ, որը հնարավորություն կտա 5000 միավորով ավելացնել էլեկտրոնային գրացուցակներ մուտքագրվող գրքերի նկարագրական տվյալները, ՀՀ բոլոր մարզային գրադարաններում կապահովվի էլեկտրոնային սպասարկումների իրականացումը, որը 30000 միավորով ավելին կլինի 2004 թվականի համեմատությամբ,

- գրադարանային-տեղեկատվական սպասարկման որակական նոր համակարգի ստեղծման ու զարգացումը կապահովվի բնակչության տեղեկատվության մատչելիությունը և արդյունավետությունը, որի արդյունքում գրադարանային հավաքացուներից օգտվողների թիվը կավելանա 1500 ընթերցողով, էլեկտրոնային սպասարկումները՝ 1000-ով (2005 թվականին ընթերցողների թիվը կկազմի 124717 ընթերցող),

- գրադարանային հավաքածուների հրապարակայնությունն ու ճանաչողականությունն ապահովելու նպատակով կապահովվի 5 մատենագիտության հրապարակում, 30 գրադարանային միջոցառումների կազմակերպում,

- գրադարանային գործի ոլորտը կարգավորող «Գրադարանային գործի մասին», «Ազգային գրադարանի մասին», «Փաստաթղթի պարտադիր օրինակի մասին» ՀՀ օրենքների և ենթօրենսդրական ակտերի ընդունումը կապահովվի համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորումը:

Գրադարանների համար 2005 թվականին նախատեսված միջոցները՝ 601.3 մլն դրամի չափով, ուղղվելու են 16 գրադարանների սուբսիդավորմանը /որից 10-ը մարզկենտրոններում/, ՀՀ ազգային գրապալատին սուբսիդիայի հատկացմանը և վերջիններիս աշխատանքների իրականացման նպատակով սարքերի, սարքավորումների ձեռքբերմանը՝ 17.9 մլն դրամ: ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով 2004 թվականի նկատմամբ նախատեսված ծախսերի ավելացումը՝ 160.4 մլն դրամով, կամ 36.4 տոկոսով պայմանավորված է.

- աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ /նեռարյալ պարտադիր սոցիալական վճարները/՝ 123.2 մլն դրամ,

- ապրանքների ձեռքբերման և ծառայությունների մատուցման ծախսերի ավելացմամբ՝ 15.3 մլն դրամ, որը հիմնականում պայմանավորված է էլեկրաէներգիայի և ջրմուղ-կոյուղու ծախսերի

աճով /տեղադրված սարքավորումների շահագործում և ջրի սակագնի աճ/,

- կապիտալ ակտիվների ձեռքբերման ծախսերի ավելացմամբ /գրքերի համալրում/ 15.3 մլն դրամ,

- գրադարանային հավաքածուների պահպանությունն ապահովելու և տեղեկատվական-գրադարանային ավտոմատացված համակարգի ստեղծման և զարգացման նպատակով ծախսերի ավելացմամբ՝ 6.6 մլն դրամով:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով գրադարանների աշխատողների աշխատավարձի նախատեսվող բարձրացումը հնարավորություն կընձեռի միջին աշխատավարձը հասցնել 24338 դրամի՝ նախորդ տարվա 16225 դրամի դիմաց:

Հատկացվող ֆինանսական միջոցներով 2005 թվականին կվարձատրվեն այս ոլորտի 1268 աշխատողներ:

2005-2007 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով գրադարանների համար կանխատեսվում է 2006-2007թվականներին հատկացնել յուրաքանչյուր տարի 720.7 մլն դրամ:

Թանգարանների համար սուբսիդիաների հատկացումները նպատակուղղված են՝ թանգարանային աշխատողների աշխատավարձի բարձրացմանը, թանգարանային հավաքածուների ամբողջացմանը, թանգարանային հավաքածուների հետագա պահպանվածության ապահովմանը, թանգարանային հավաքածուների կառավարման ավտոմատացված համակարգի ստեղծմանը, թանգարանային հավաքածուների հրապարակմանը, համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորմանը:

Վերոնշյալ արդյունքներին հասնելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- պատմամշակութային, հուշային նշանակության մշակութային արժեքների ձեռքբերում 15 թանգարանների հավաքածուի համալրման համար,

- թանգարանային հավաքածուների պահպանությունն ապահովելու համար 6 թանգարանում կիրականացվի 300 թանգարանային առարկաների կոնսերվացում, 3 թանգարանում՝ 100 թանգարանային առարկաների վերականգնում, 6 ֆոնդապահոցի օղակարգավորիչ սարքերով ապահովում,

- 15 թանգարանի կտրամադրվի 15 համակարգչային սարքեր ու սարքավորումներ և էլեկտրոնային շտեմարանի ստեղծման համակարգչային «Թանգարան 1.0» ծրագիրաշարը, որը հնարավորություն կտա իրականացնել տարեկան 21000 թանգարանային առարկաների նկարագրական տվյալների մուտքագրումը էլեկտրոնային շտեմարան,

- թանգարանային հավաքածուները հանրությանը ներկայացնելու նպատակով կկազմակերպվի 3 թանգարանում նոր մշտական ցուցադրություններ, 7 թանգարանում՝ ժամանակավոր ցուցադրություններ, 2 թանգարանում՝ մշտական ցուցադրության վերաբացում, կկազմակերպվի թեմատիկ և հորելյանական 40 ցուցահանդես, 3 թանգարան կներկայացվեն ինտերնետում, կապահովվի 5 թանգարանային ցուցադրություն՝ ցուցանմուշների եռալեզու բացատրական տեքստերով,

- «ՀՀ թանգարանային հավաքածուի և թանգարանների մասին» ՀՀ օրենքի և ենթա-

օրենսդրական ակտերի ընդունումը կնպաստի համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորմանը:

Թանգարանների համար սուբսիդիայի հատկացումը նպատակ ունի ապահովել թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկված շուրջ 1.9 մլն թանգարանային առարկաների ամբողջականությունը և պահպանվածությունը, հավաքածուների շրջանառության ընդլայնումը, այցելուների թվաքանակի ավելացումը 116241-ով, 2005 թվականին այն կկազմի 287057 այցելու:

Թանգարանների համար նախատեսված միջոցները՝ 865.4 մլն դրամի չափով, ուղղվելու են 40 թանգարանների /որից 12-ը մարզային/ սուբսիդիայի հատկացմանը՝ 804.8 մլն դրամ, սարքերի, սարքավորումների ձեռքբերմանը՝ 55.6 մլն դրամ և կապիտալ ծախսերի իրականացմանը՝ 5.0 մլն դրամ:

Թանգարանների համար ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի ավելացումը 2004թ. պետական բյուջեի նկատմամբ՝ 215.1 մլն դրամով, կամ 33.1 տոկոսով պայմանավորված է.

- աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ /նեռարյալ պարտադիր սոցիալական վճարները/ 163.5 մլն դրամ,

- ապրանքների ձեռքբերման և ծառայությունների մատուցման ծախսերի ավելացմամբ՝ 20.1 մլն դրամ, որը հիմնականում պայմանավորված է էլեկտրաէներգիայի և ջրմուղ-կոյուղու ծախսերի աճով /տեղադրված սարքավորումների շահագործում և ջրի սակագնի աճ/,

- թանգարանային հավաքածուների պահպանությունն ապահովելու և էլեկտրոնային շտեմարանի ստեղծման նպատակով ծախսերի ավելացմամբ՝ 30.5 մլն դրամով,

- «Թանգարան անիվների վրա» նոր ծրագրի իրականացման նպատակով ծախսերի նախատեսմամբ՝ 5.0 մլն դրամ:

Բացի վերը նշվածից, նվազել են հիմնանորոգման ծախսերը՝ 4.0 մլն դրամով:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով թանգարանների աշխատողների աշխատավարձի նախատեսվող բարձրացումը հնարավորություն կտա աշխատողների միջին աշխատավարձը հասցնել 25155 դրամի՝ 2004 թվականի 16770 դրամի դիմաց: Հատկացվող ֆինանսական միջոցներով 2005 թվականին կվարձատրվեն այս ոլորտի 1539 աշխատողներ:

2005-2007 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով թանգարանների համար կանխատեսվում է 2006 թվականին հատկացնել 1029.1 մլն դրամ, իսկ 2007 թվականին՝ 990.5 մլն դրամ:

Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների համար նախատեսված միջոցները՝ 114.4 մլն դրամ ուղղվելու են 4 կազմակերպությունների /որից 3-ը մարզային/ սուբսիդիայի հատկացմանը և մշակութային օբյեկտների հիմնանորոգման և վերականգնման համալիր ծրագրի իրականացմանը, համապատասխանաբար՝ 14.4 և 100.0 մլն դրամ: Սուբսիդիաների հատկացումը նպատակ ունի ապահովել մշակույթի տների, կենտրոնների պահպանումը:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի ավելացումը 2004 թվականի պետական բյուջեի նկատմամբ՝ 8.9 մլն դրամով, կամ 8.4 տոկոսով պայմանավորված է:

է.

- աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ /ներառյալ պարտադիր սոցիալական վճարները/ 3.1 մլն դրամ,

- ապրանքների ձեռքբերման և ծառայությունների մատուցման ծախսերի ավելացմամբ՝ 0.8 մլն դրամ,

- մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծախսերի աճով՝ 5.0 մլն դրամով:

2005 թվականին նախատեսվող մշակույթի տների, կենտրոնների աշխատողների աշխատավարձի բարձրացումը հնարավորություն կտա աշխատողների միջին աշխատավարձը հասցնել 23463 դրամի՝ 2004 թվականի 15642 դրամի դիմաց: Հատկացվող ֆինանսական միջոցներով 2005 թվականին կվարձատրվեն այս ոլորտի 35 աշխատողներ:

2005-2007 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով մշակույթի տների, ակումբների, կենտրոնների համար կանխատեսվում է 2006 թվականին հատկացնել 1092.0 մլն դրամ, իսկ 2007 թվականին՝ 965.1 մլն դրամ, որից մշակութային օբյեկտների հիմնանորոգման և վերականգնման համալիր ծրագրի ծախսերը կազմում են, համապատասխանաբար՝ 1074.0 և 947.1 մլն դրամ:

Այլ մշակութային կազմակերպությունների համար նախատեսված միջոցները՝ 304.6 մլն դրամ, ուղղվելու են «Հայաստանի ազգային արխիվ», «Տեղեկատվական-վերլուծական և հասարակության հետ կապերի կենտրոն», «Ժողովրդական ստեղծագործության և արհեստագործության կենտրոն», «Երևանի կենդանաբանական այգի», «Փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների սուբսիդավորման և «Արմենպրես» ՓԲԸ-ի կողմից տեղեկատվության պահպանման և արխիվացման գծով պետական պատվերի իրականացմանը:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի ավելացումը 2004 թվականի պետական բյուջեի նկատմամբ՝ 94.9 մլն դրամով, կամ 45.3 տոկոսով պայմանավորված է.

- աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ /ներառյալ պարտադիր սոցիալական վճարները/ 46.3 մլն դրամ,

- ապրանքների ձեռքբերման և ծառայությունների մատուցման ծախսերի ավելացմամբ՝ 7.3 մլն դրամ,

- Պետական աջակցություն «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նոր ծրագրի նախատեսմամբ՝ 15.0 մլն դրամ,

- Երևանի կենդանաբանական այգու կենդանիների սննդի ձեռքբերման նպատակով լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ՝ 11.9 մլն դրամ,

- Հայաստանի ազգային արխիվի հակահրդեհային անվտանգության ապահովման ծախսերի նախատեսմամբ՝ 14.4 մլն դրամ:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող այլ մշակութային կազմակերպությունների աշխատողների աշխատավարձի բարձրացումը հնարավորություն կտա աշխատողների միջին աշխատավարձը հասցնել 24493 դրամի՝ 2004 թվականի 16459 դրամի դիմաց:

Հատկացվող ֆինանսական միջոցներով 2005 թվականին կվարձատրվեն կազմակերպությունների 478 աշխատողներ:

2005-2007 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով կանխատեսվում է 2006 թվականին հատկացնել 318.5 մլն դրամ, իսկ 2007 թվականին՝ 320.5 մլն դրամ:

Արվեստի համար 2005թ. նախատեսված միջոցները՝ 1590.8 մլն. դրամ ուղղվելու են 43 թատերա-համերգային կազմակերպությունների սուբսիդիաների հատկացմանը և մշակութային միջոցառումների իրականացմանը:

2005 թվականին արվեստի ոլորտի պետական բյուջեի միջոցներն առաջին հերթին կուղղվեն՝ թատերարվեստի, կրկեսային արվեստի, կինոարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կերպարվեստի, ժողովրդական արվեստի պահպանմանը, տարածմանը և զարգացմանը /3 դրամատիկ ստեղծագործությունների, թատերարվեստի 10 ստեղծագործական ծրագրերի, կերպարվեստի զարգացմանը նպաստող 6 ծրագրերի իրականացում/.

թատերահամերգային կազմակերպությունների և կրկեսի գործունեության զարգացմանը, ստեղծագործական ծրագրերի իրականացմանը /10-15 երաժշտական ստեղծագործությունների գնում/.

մշակութային միջոցառումների, մրցույթների, փառատոնների, ցուցահանդեսների, հայ մշակույթի, հասարակական-քաղաքական գործիչների և մշակութային նշանավոր իրադարձությունների հորելյանների կազմակերպմանն ու անցկացմանը /17 հորելյանների անցկացում, 6 թատերական, երաժշտական և պարային փառատոն, 2 կինոփառատոն, 5 միջազգային մրցույթ/.

Հայաստանի Հանրապետության վավերացված միջպետական համաձայնագրերին, մշակույթի պահպանման, տարածման և զարգացման ծրագրերին համապատասխան սփյուռքի հետ մշակութային հարաբերությունների զարգացմանը և կատարելագործմանը, արտերկրում հայ արվեստը ներկայացնելուն /միջազգային ծրագրերի, սփյուռքի հետ համագործակցության միջոցառումների իրականացում՝ 58.1 մլն դրամ/.

աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի շրջանակներում ստեղծագործական կազմակերպությունների աշխատողների աշխատավարձի բարձրացմանը,

օրենսդրական և այլ իրավական ակտերի ընդունմանը, մասնավորապես՝ «Թատրոնի և թատերական գործունեության մասին» ՀՀ օրենքի ընդունմանը:

Սուբսիդիաների տրամադրումը նպատակ ունի ապահովելու թատրոնների, համերգային կազմակերպությունների բնականոն գործունեությունը՝ որպես հայ մշակույթի յուրօրինակության, ազգային ինքնագիտակցության, լեզվի պահպանման և ամրապնդման միջոց:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով արվեստի գծով նախատեսված ծախսերի ավելացումը 2004 թվականի նկատմամբ 369.2 մլն դրամով, կամ 30.2 տոկոսով պայմանավորված է՝

- աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ /նեռարյալ պարտադիր սոցիալական վճարները/ 277.5 մլն դրամ,

- Վանաձորի Հ.Աբելյանի անվ.թատրոնի նոր կառուցված կաթսայատան գազամատա-

կարարման ապահովման ծախսերի նախատեսմամբ՝ 4.5 մլն դրամ,

- «Հայաստանի ժողովրդական նվագարանների նվագախումբ» նոր ՊՈԱԿ-ի ստեղծմամբ՝ 17.1 մլն դրամ,

- Պ.Ադամյանի անվան պետական դրամատիկական թատրոնի ծախսերի ավելացմամբ՝ 15.0 մլն դրամ, կապված աշխատողների միջին աշխատավարձի աճով 7000 դրամից 15000 դրամ,

- Կոմիտասի պատարագի CD-ի ձայնագրության ծախսերի նախատեսմամբ՝ 7.1 մլն դրամ,

- Ա. Խաչատրյանի անվան դաշնակահարների միջազգային մրցույթի անցկացման և «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի իրականացման ծախսերի նախատեսմամբ, համապատասխանաբար՝ 40.0 և 25.0 մլն դրամ,

- Սյունիքի մարզպետարանի Գորիսի դրամատիկական թատրոնը համայնքի ենթակայությունից պետական բյուջեի ենթակայությանը անցնելու կապակցությամբ ծախսերի նախատեսմամբ՝ 8.2 մլն դրամ / ՀՀ վարչապետի 09.07.04թ. N001-45-96 հանձնարարական/:

Բացի վերը նշվածից, հիմնանորոգման ծախսերը նվազել են՝ 25.2 մլն դրամով:

ՀՀ 2005 թվականին թատերա-համերգային կազմակերպություններին հատկացվող սուբսիդիայի աճը հնարավորություն կտա աշխատողների միջին աշխատավարձը հասցնել 22898 դրամի՝ 2004 թվականի 15265 դրամի դիմաց: Հատկացվող ֆինանսական միջոցներով 2005 թվականին կվարձատրվեն թատերա-համերգային կազմակերպությունների 3429 աշխատողներ:

2005-2007 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով արվեստի համար կանխատեսվում է 2006-2007թվականներին հատկացնել յուրաքանչյուր տարի՝ 1594.7 մլն դրամ:

Կինեմատոգրաֆիային ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ հայրենական խաղարկային և անիմացիան կինոարտադրության, միջազգային կինոփառատոններին և կինոշուկաներին ՀՀ մասնակցության աջակցությունը, մանուկների և պատանիների համար հայկական կինոնկարների արտադրության և հասարակական-քաղաքական իրադարձությունների, կինոտարեգրության վավերագրման խթանումը: Կինեմատոգրաֆիայի ոլորտի համար նախատեսված հատկացումները՝ 447.6 մլն դրամ, ուղղվելու են կինոարտադրության կազմակերպմանը /խաղարկային կինոնկարներ՝ 272.4 մլն դրամ, մուլտիպլիկացիոն՝ 103.0 մլն դրամ, վավերագրական՝ 39.6 մլն դրամ/, կինոշուկաներին մասնակցության ապահովմանը՝ 28.1 մլն դրամ և կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանմանն ու համարմանը՝ 4.5 մլն. դրամ /հայկական ֆիլմերի նոր պատճենների ձեռքբերում/:

Ծախսերի ավելացումը 2004 թվականի նկատմամբ 14.7 մլն դրամով, կամ 3.4 տոկոսով պայմանավորված է.

- խաղարկային կինոնկարների արտադրության ծախսերի աճով՝ 7.9 մլն դրամ /2005 թվականին նախատեսվում է 12 խաղարկային ֆիլմ 2004 թվականին նախատեսված՝ 9 -ի դիմաց/,

- վավերագրական ֆիլմերի արտադրության ծախսերի աճով՝ 1.3 մլն դրամով /ինչպես 2004 թվականին, այնպես էլ 2005թվականին նախատեսվում է 13 ֆիլմի արտադրություն/,

- կինոշուկաներին մասնակցության ապահովման ծախսերի աճով՝ 23.8 մլն դրամով /5 ֆիլմի

ներկայացում Բեռլինում կամ Կաննում կայանալիք փառատոններում/:

Բացի վերը նշվածից, մուլտիպլիկացիոն ֆիլմերի արտադրության ծախսերը նվազել են 18.3 մլն դրամով /2005թվականին նախատեսվել են 2 ֆիլմի արտադրություն 2004 թվականին նախատեսված՝ 4-ի դիմաց/:

2005-2007 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով կինեմատոգրաֆիայի համար կանխատեսվում է 2006-2007 թվականներին հատկացնել յուրաքանչյուր տարի՝ 482.9 մլն դրամ:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման համար նախատեսված հատկացումները՝ 136.2 մլն դրամ, ուղղված են ՀՀ տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ուսումնասիրման, հաշվառման, վավերագրման, վկայագրերի, պետական ցուցակների, պահպանական գոտիների, վերականգնման և բարեկարգման, տարածքների նախագծերի կազմման, պատմամշակութային անշարժ ժառանգության գիտատեղեկատու շտեմարանի կազմման և հուշարձանների վերականգնման աշխատանքների իրականացմանը, համապատասխանաբար՝ 36.2 և 100.0 մլն դրամ:

Հատկացումները 2004 թվականի նկատմամբ նվազել են 5.9 մլն դրամով, կամ 4.1 տոկոսով՝ պայմանավորված հուշարձանների վերանորոգման և հիմնանորոգման ծախսերի նվազմամբ՝ 7.0 մլն դրամով:

Բացի վերը նշվածից, ապրանքների և ծառայությունների ծախսերը աճել են 1.1 մլն դրամով:

2005-2007 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման համար կանխատեսվում է 2006-2007թվականներին հատկացնել յուրաքանչյուր տարի՝ 38.4 մլն դրամ:

ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտին ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել ազգաբնակչության առողջության ամրապնդումը, անհատի ներդաշնակ զարգացումը, տարբեր տարիքային և սոցիալական խմբերի համար ֆիզիկական դաստիարակության անընդհատության ապահովումը:

Սպորտի ոլորտի համար նախատեսվում են հատկացումներ՝ 1039.3 մլն դրամ /նախորդ տարվա 880.6 մլն դրամի դիմաց/, որն ուղղվելու է Հայաստանի հավաքական թիմերի մասնակցության ապահովմանը միջազգային տարբեր մակարդակի միջոցառումներին, ուսումնամարզական հավաքներին, հանրապետական առաջնություններին, մարզերի միջև սպորտային խաղերի անցկացմանը, հավաքական թիմերի համար մարզագույքի, մարզահանդերձանքի ձեռքբերմանը, մարզերում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման ծրագրերի և Աշխարհի, Եվրոպայի առաջնություններում հաղթողների և մրցանակակիրների պարգևատրման ծախսերի իրականացմանը:

Սպորտի գծով նախատեսված ծախսերի ավելացումը 2004 թվականի նկատմամբ՝ 158.7 մլն դրամով, կամ 18.0 տոկոսով պայմանավորված է հետևյալ ծախսերի աճով.

- Աշխարհի, Եվրոպայի առաջնություններին, միջազգային մրցաշարերին մասնակցության ապահովում, ՀՀ առաջնությունների և ուսումնամարզական հավաքների անցկացում, համապատասխանաբար՝ 127.9, 20.0 և 59.4 մլն դրամ, որը կուղղվի Օլիմպիական խաղերին միջազգային

վարկանիշի ձեռքբերմանը և գործուղման ծախսերի փոխհատուցմանը,

- նոր ծրագրերի նախատեսում՝ 138.2 մլն դրամ, այդ թվում
- Համաշխարհային ունիվերսիադային ՀՀ ուսանող-մարզիկների մասնակցության ապահովում՝ 23.0 մլն դրամ,
- Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող ըմբշամարտի Եվրոպայի մեծահասակների առաջնության անցկացում՝ 25.0 մլն դրամ,
- ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում՝ 16.0 մլն դրամ,
- Կ. Դեմիրճյանի անվան մարզամշակութային կենտրոնի սուբսիդավորում՝ 19.2 մլն դրամ,
- «Չեսս» շախմատային ակադեմիա» հիմնադրամի գործունեության ապահովման ծախսերի նախատեսում՝ 55.0 մլն դրամ /2004 թվականին նշված ծախսերը նախատեսված էին «04.Կրթություն և գիտություն» խմբում/:

Միաժամանակ, առանձին ծրագրերով ծախսերը նվազել են 186.8 մլն դրամով, որը պայմանավորված է դրանց ավարտով, կամ ծախսերի վերահաշվարկով:

2005-2007 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով սպորտի համար կանխատեսվում է 2006 թվականին հատկացնել 887.5 մլն դրամ, իսկ 2007 թվականին 947.7 մլն դրամ:

Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտին ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության, մարզական, զվարճալի և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվություն ստանալու ՀՀ քաղաքացիների իրավունքը:

Հեռուստառադիոհաղորդումների համար 2005 թվականին նախատեսվում է հատկացնել 3094.8 մլն դրամ /նախորդ տարվա 3054.1 մլն դրամի դիմաց/, որն ուղղվելու է հեռուստաֆիլմերի արտադրությանը, հանրային հեռուստառադիոհաղորդումների պատրաստմանն ու հեռարձակմանը, պահուստային բազայի պահպանմանը, Հասարակական կարծիքի ուսումնասիրմանը, «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության գործունեության ծախսերում ՀՀ մասնաբաժնի ծախսերի իրականացմանը, պետական գնումների հրապարակայնության ապահովմանը և «Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ի սուբսիդավորմանը:

Ինչպես 2004 թվականին, այնպես էլ 2005 թվականին հանրային հեռուստաընկերության և ռադիոընկերության հաղորդումների պատրաստման և հեռարձակման ժամերի միջին օրական ծավալը նախատեսվում է՝ 18 և 50 ժամ, իսկ Շիրակի հեռուստատեսային և ռադիոյի հաղորդումներինը, յուրաքանչյուրը՝ 0.5 ժամ:

Միաժամանակ, հանրային հեռուստաընկերությունն իրականացնում է հաղորդումների հեռարձակում արտասահմանում՝ 779.7 մլն դրամ (Եվրոպա, Մերձավոր Արևելք, Հյուսիսային Աֆրիկա, Հյուսիսային Ամերիկա):

Հեռուստառադիոհաղորդումների համար ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող ծախսերը 2004 թվականի նկատմամբ աճել են 40.7 մլն դրամով, կամ 1.3 տոկոսով, որը

պայմանավորված է՝

- հեռուստաֆիլմերի արտադրության ծախսերի աճով՝ 6.9 մլն դրամ, այդ թվում Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցին նվիրված ֆիլմի արտադրության ծախսեր՝ 6.0 մլն դրամ,

- «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի ռադիոհաղորդումների պատրաստման ծախսերի աճով՝ 5.5 մլն դրամ, որը կուղղվի հանրային ռադիոընկերության աշխատողների աշխատանքի վճարմանը,

- «Եթեր ստեղծագործական տուն» ՓԲԸ-ի կողմից հեռուստատեսության պահուստային բազայի պահպանման ծախսերի աճով՝ 0.2 մլն դրամ,

- Պետական գնումների հրապարակայնության ապահովման ծախսերի աճով՝ 23.0 մլն դրամով, որը կուղղվի պետական գնումների տեղեկագրերում հրապարակվող մրցույթների գովազդմանը, համաձայն «Պետական գնումների գործակալության գործունեության բարելավման մրջոցառումների մասին» ծրագրի,

- «Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ի սուբսիդավորման ծախսերի աճով՝ 8.0 մլն դրամ, որը կուղղվի «Ձեռագիր» հեռուստահաղորդաշարի պատրաստմանը, ինտերնետային էջի սպասարկմանը և հրատարակումների հրապարակմանը:

Բացի վերը նշվածից, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման համար նախատեսված ծախսերը նվազել են 2.9 մլն դրամով, որը պայմանավորված է 2004 թվականի ընթացքում արտասահմանում հեռուստահաղորդումների հեռարձակման ծախսերի նվազմամբ՝ 157.2 մլն դրամով, վերջինս ինչպես 2004 թվականին, այնպես էլ 2005 թվականին նախատեսվում է ուղղել է հեռուստահաղորդումների պատրաստմանը և հեռուստահաղորդումների հեռարձակման իրավունքի ձեռքբերմանը, համապատասխանաբար՝ 107.6 և 49.6 մլն դրամ:

2005-2007 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով հեռուստառադիոհաղորդումների համար 2006-2007 թվականներին կանխատեսվում է հատկացնել յուրաքանչյուր տարի 3100.2 մլն դրամ:

Գրահրատարակչության համար նախատեսված հատկացումները նպատակ ունեն ապահովել տեղեկատվություն ստանալու և տարածելու իրավունքը, գրահրատարակչական արտադրանքի տեսքով ազգային և համաշխարհային գրական, գիտական, մշակութային արժեքների մատչելիությունը: Գրահրատարակչական ոլորտի համար 2005 թվականին նախատեսվում է հատկացնել 479.6 մլն դրամ /նախորդ տարվա 418.4 մլն դրամի դիմաց/, որն ուղղվելու է մանկական հանրագիտարանային, այլ, գիտահանրամատչելի, հոբելյանական, թարգմանական գրականության, թերթերի, ամսագրերի, մենագրությունների, ոչ պետական մամուլի և այլ հրատարակումների հրատարակմանը:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով գրահրատարակչության ոլորտում նախատեսվող ծախսերի աճը 61.2 մլն դրամով, կամ 14.6 տոկոսով պայմանավորված է՝

- մանկական, մանկապատանեկան թերթերի և ամսագրերի հրատարակման ծախսերի ավելացմամբ՝ 0.7 մլն դրամով,

- «Հայաստանի Հանրապետություն», «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթերի հրատարակման ծախսերի ավելացմամբ՝ համապատասխանաբար, 1.1 և 6.4 մլն դրամով,

- Էկոնոմիկա հանդեսի հրատարակման ծախսերի ավելացմամբ՝ 0.6 մլն դրամով,

- հրատարակումների գծով ծախսերի ավելացմամբ՝ 23.0 մլն դրամով, որից 15.9 մլն դրամը կուղղվի տեղեկագրերի հրատարակման և Հայաստանի իրավական տեղեկատվական կենտրոնի շահագործման ապահովմանը, 2.0 մլն դրամը՝ պետական գնումների պաշտոնական տեղեկագրերի հրատարակմանը և 5.1 մլն դրամը՝ 2005 թվականից ուժի մեջ մտնող երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի հրատարակմանը,

- գիտական ամսագրերի և մենագրությունների գծով ծախսերի ավելացմամբ՝ 4.9 մլն դրամով /աշխատավարձ, պարտադիր սոցիալական վճարներ/,

- գրքերի հրատարակման գծով ծախսերի ավելացմամբ՝ 3.3 մլն դրամով,

- ոչ պետական մամուլի սուբսիդավորման գծով ծախսերի ավելացմամբ՝ 1.2 մլն դրամով:

ՀՀ 2005թվականի պետական բյուջեի նախագծով թարգմանական գրականության հրատարակման համար նախատեսվել են հատկացումներ՝ 20.0 մլն դրամ:

«Վրաստան» և «Դ-նիպրո» թերթերի հրատարակման ծախսերը նախատեսվում են նախորդ տարվա մակարդակով, համապատասխանաբար՝ 5.0 և 2.5 մլն դրամ:

2005-2007 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով գրահրատարակչության համար կանխատեսվում է հատկացնել 2006-2007թվականներին յուրաքանչյուր տարի՝ 468.5 մլն դրամ:

Տեղեկատվության ձեռքբերման համար նախատեսված հատկացումները՝ 50.8 մլն դրամ, ուղղված են «Արմենպրես» ՓԲԸ-ի կողմից տեղեկատվության ձեռքբերման գծով պետական պատվերի իրականացմանը /զանգվածային լրատվական միջոցներին և դեսպանատներին պաշտոնական ինֆորմացիայի հաղորդում/: Ծախսերի աճը 2004 թվականի նկատմամբ կազմում է 1.5 մլն դրամ, կամ 3.0 տոկոս:

2005-2007 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով տեղեկատվության ձեռքբերման համար կանխատեսվում է հատկացնել 2005-2006 թվականներին յուրաքանչյուր տարի՝ 52.3 մլն դրամ:

Երիտասարդական ծրագրերի իրականացման համար նախատեսված հատկացումները՝ 240.0 մլն դրամ, ուղղվելու են սոցիալ-տնտեսական, իրավական, պետական կառավարման համակարգի զարգացման, ազատ ժամանցի, հոգևոր-ֆիզիկական, հայրենասիրական դաստիարակության, հոգևոր-մշակութային, երիտասարդական համագործակցության, տեղեկատվական-վերլուծական, Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների գործունեության համակարգման և գիտակրթական ոլորտներում ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև «Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» հիմնադրամի գործունեության ապահովմանը:

2005 թվականի միջոցառումները նպատակաուղղվելու են հասարակության սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքին երիտասարդների լիարժեք ներգրավման և նրանց ստեղծագործական ներուժի ամբողջական դրսևորման համար անհրաժեշտ պայմանների

ստեղծելուն:

Երիտասարդական ծրագրերի համար ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով 2004 թվականի նկատմամբ նախատեսվող ծախսերի աճը՝ 56.1 մլն դրամով, կամ 30.5 տոկոսով պայմանավորված է.

- «Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» հիմնադրամի գործունեության ծախսերի նախատեսմամբ՝ 50.0 մլն դրամ, որը 2004 թվականին նախատեսված էր առանձին ծրագրով,

- «Երեխաների և պատանիների իրավունքների ճանաչողությանը նվիրված ուսուցողական ծրագիր ՀՀ Սահմանադրական դատարանում և ՀՀ Ազգային Ժողովում» նոր ծրագրի ծախսերի նախատեսմամբ՝ 2.9 մլն դրամ,

- մնացած երիտասարդական միջոցառումների իրականացման համար ծախսերի աճի նախատեսմամբ՝ 3.2 մլն դրամ: Նշված միջոցառումներում ընդգրկված են նաև «Բազե Զմեռ-2005» համահայկական երիտասարդական ձմեռային խաղերի անցկացման ծախսերը՝ 18.4 մլն դրամի չափով:

2005-2007 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով երիտասարդական ծրագրերի համար կանխատեսվում է հատկացնել 2006-2007թվականներին յուրաքանչյուր տարի՝ 246.2 մլն դրամ:

Քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արմուքյուններին, ազգային փոքրամասնություններին պետական աջակցություն տրամադրելու նպատակով 2005 թվականին նախատեսվում է 130.2 մլն դրամ 2004 թվականի՝ 80.2 մլն դրամի դիմաց:

Ծախսերի աճը՝ 50.0 մլն դրամով պայմանավորված է «Պետական աջակցություն հասարակական կազմակերպություններին» նոր ծրագրի նախատեսմամբ:

Մշակույթի, տեղեկատվության և սպորտի բնագավառի ծախսերի համեմատությունը՝ նախորդ տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ, արտացոլված է սույն բացատրագրի N 7 աղյուսակում:

2005 թվականի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի տարեկան ծրագիրը և այլ թատրոնների և համերգային կազմակերպությունների սուբսիդայի բաշխումը ըստ առանձին կազմակերպությունների արտացոլված են սույն բացատրագրի, համապատասխանաբար՝ N 4 և N 5 հավելվածներում:

Չրային տնտեսության ոլորտին ՀՀ 2005թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 7158.195 մլն. դրամի ծախս (առանց պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի և վարկային ծրագրերի), ՄԺԾԾ-ի 2005թ. կողմնորոշիչ չափաքանակով նախատեսված է 6661.405մլն. դրամ ՀՀ 2004թ. պետական բյուջեով նախատեսված 5085.417մլն. դրամի դիմաց:

Այս ոլորտում 2005թ. բյուջեով նախագծված ծախսերի համեմատությունը՝ ՀՀ 2003թ. բյուջետային տարվա փաստացի և ՀՀ 2004թ. բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է N 8 աղյուսակում:

1. «Որոտան-Արփա-Սևան ԹՇՎ» ՊՀ-ի պահպանում, տեխնիկական վիճակի բարելավում և նորոգում» (322.29 մլն դրամ):

«Որոտան-Արփա-Սևան ԹՇՎ» ՊՀ-ի պահպանման և «Որոտան-Արփա-Սևան» թունելի հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար ՀՀ 2005թ. պետական բյուջեի նախագծում նախատեսվել է 322.29 մլն. դրամ: 2005թ. բյուջեի նախագծով գումարը 2005թ. ՄԺԺԾ-ով նախատեսված կողմնորոշիչ չափաքանակից ավել է 50.57 մլն դրամով, որը պայմանավորված է ՀՀ կառավարության 18.12.2003թ. «Պետական սեփականություն հանդիսացող Որոտանի հիդրոհանգույցի և Արփա-Սևան թունելի ջրային համակարգը հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» N 1781-Ն որոշման պահանջներից:

2. ՀՀ 2005թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվել է սուբսիդիա՝

ա) *Ոռոգման համակարգի ընկերությունների* համար՝ 3758.0 մլն դրամ: ՀՀ 2004թ. հաստատված պետական բյուջեով նախատեսվել է 3303.0 մլն դրամ իսկ ճշտված բյուջեն կազմել է 5120.2 մլն դրամ, որը պայմանավորված է ՀՀ կառավարության 25.06.2004թ. N 915-Ն և 26.08.2004թ. N 1155-Ն որոշումներով լրացուցիչ միջոցների հատկացումներով: 2005թ. բյուջեի նախագծով նախատեսված գումարը համապատասխանում է ՄԺԺԾ-ի 2005թ. կողմնորոշիչ չափաքանակին:

բ) *«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին* 1366.490 մլն դրամ, ՀՀ 2004թ. հաստատված պետական բյուջեով նախատեսված 592.0 մլն դրամի դիմաց, ավելացումը պայմանավորված է հիմնականում աշխատավարձերի բարձրացումով, Լոռի և Շիրակ մասնաճյուղերի բազայի վրա «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների առանձնացման հետևանքով կրճատված աշխատողների արձակման նպաստի վճարումով, ինչպես նաև վառելիքի և նյութերի գների բարձրացման հետևանքով ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքների ինքնարժեքի բարձրացմամբ: 2005թ. բյուջեի նախագծով նախատեսված գումարը համապատասխանում է ՄԺԺԾ-ի 2005թ. կողմնորոշիչ չափաքանակին:

գ) *Երևան «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ին* 1202.315 մլն դրամ ՀՀ 2004թ. հաստատված պետական բյուջեով նախատեսված 756.0 մլն դրամի դիմաց, ավելացումը պայմանավորված է բազմաբնակարան շենքերի մուտքագծերի և բնակիչ-բաժանորդների մոտ ջրաչափական սարքերի տեղադրումով (85%-ով): Պայմանական ամսեկան վճարի համակարգից ջրաչափական համակարգով հաշվառվող ծավալային համակարգին անցումը, շահագործման հաստատուն ծախսերի պայմաններում, գզալիորեն նվազում է սպառողների կողմից պահանջվող չափաքանակը: Միաժամանակ մինչև այժմ սակագնային մեծություններում ներառված չեն առանձին ծախսային հոդվածներ՝ մասնավորապես վարձակալական վճար, հողի հարկը և այլն: 2005թ. բյուջեի նախագծով նախատեսված գումարը համապատասխանում է ՄԺԺԾ-ի 2005թ. կողմնորոշիչ չափաքանակին:

3. «Ջրամբարների պահակային ծառայությունների իրականացման» ծրագիր (17.1 մլն դրամ):

ՀՀ 2005թ. պետական բյուջեի նախագծում ջրամբարների պահակային ծառայության գծով նախատեսվել է 17.1 մլն դրամ, որը համապատասխանում է 2004թ-ի ՀՀ պետական բյուջեի և ՀՀ

կառավարության 17.07.04թ. N 985-Ն որոշմամբ հաստատված ՄԺԾԾ-ով սահմանված կողմնորոշիչ չափաքանակին:

Նշված գումարների շրջանակներում իրականացվում է հանրապետության գործող 37 ջրամբարների անվտանգության ապահովումը:

4. «Անավարտ շինարարության օբյեկտների պահպանում» (45.5 մլն դրամ):

ՀՀ 2005թ. բյուջեի նախագծում նախատեսվել է 45.5 մլն.դրամ՝ թվով 24 անավարտ օբյեկտների պահպանման համար: Նախատեսված գումարը համապատասխանում է 2004թ-ի ՀՀ պետական բյուջեի և ՀՀ կառավարության 17.07.04թ. N 985-Ն որոշմամբ հաստատված ՄԺԾԾ-ով սահմանված կողմնորոշիչ չափաքանակին:

3. **Կոլեկտորողրենաժային ցանցի մաքրում և նորոգում (380.500 մլն դրամ) և «Մելիորացիա» ՓԲԸ-ի կողմից իրականացվող գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման գծով պետական պատվեր (15մլն դրամ)** ծրագրերը 2004թ. իրականացվել է ՀՀ գյուղատնտեսական նախարարության՝ «Մելիորացիա» ՓԲԸ կողմից, որի կառավարման լիազորությունները համաձայն ՀՀ կառավարության 30.09.04թ. N 1348-Ն որոշման 2005 թվականի հունվարի 1-ից վերապահվել է ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեին:

6.«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի պետական բաժնեմասի համալրում» (25.5 մլն դրամ) և «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի պետական բաժնեմասի համալրում» (25.5 մլն դրամ)

ՀՀ կառավարության և Գերմանիայի Գաշնային Հանրապետության կառավարության միջև ֆինանսական համագործակցության շրջանակներում «Լոռու» (Վանաձոր) և Շիրակ (Գյումրի) մարզերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում» վարկային ծրագրերով «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի «Շիրակ» և «Լոռի» մասնաճյուղերի բազայի վրա ստեղծվել են 51% պետական բաժնեմաս ունեցող «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունները: ՀՀ կառավարության 08.04.2004թ. ««Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների հիմնադրման գործում Հայաստանի Հանրապետության մասնակցության պայմանների մասին» որոշման 14-րդ կետի համաձայն վերոնշյալ նոր կազմավորվող ընկերությունների գծով նախատեսվում է կանոնադրական կապիտալների համալրում (ընդամենը 51,0 մլն դրամ):

Բացի այդ 2005 թվականին ջրային տնտեսության ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ վարկային ծրագրերը.

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքային զարգացման ծրագիր, որի նպատակն է՝ Երևանի ջրամատակարարման համակարգի բարելավումը, ջրմուղ-կոյուղու ծառայությունների արդյունավետության և կառավարման կատարելագործումը:

2005 թվականը ծրագրի ընդհանուր գնահատման համար հանդիսանում է եզրափակիչ տարի, որի ընթացքում նախատեսվում է ավարտել Երևանի Արաբկիր համայնքի ջրամատակարարման համակարգի գոտիավորման աշխատանքները, ինչպես նաև կատարել «Էյ Սի Ի Էյ Քոնսիլինի Արմինիյն

Յուրիլիթի ԱԶԱՐԼ» իտալական ընկերության հետ կնքված Կառավարման պայմանագրով նախատեսված վճարումները:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ծրագրի նախապատրաստման կանխավճար, որի շրջանակներում 2005 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել «Երևանի ջրմուղ կոյուղի ընկերության» ՓԲԸ սպասարկման տարածքի գյուղերի ջրամատակարարման-ջրահեռացման ցանցի վերականգնման աշխատանքներ՝ հոսակորուստներ ունեցող խողովակները և հիմնական փականները փոխարինելու նպատակով: Մնացած սպասարկման տարածքներում նախատեսվում է կատարել սեկտորները մեկուսացնող փականների և խողովակների փոխարինման աշխատանքներ: Իրականացվելու են նաև առաջնահերթ կարևորություն ունեցող օբյեկտների՝ հիմնականում ջրաղբյուրների և ջրամբարների վերանորոգման և ապահովության բարձրացման աշխատանքներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ծրագրի նախապատրաստման կանխավճարի ծրագիր, որի շրջանակներում 2005 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել «Երևանի ջրմուղ-կոյուղի ընկերության» ՓԲԸ սպասարկման տարածքի գյուղերի ջրամատակարարման-ջրահեռացման ցանցի վերականգնման աշխատանքներ՝ հոսակորուստներ ունեցող խողովակները և հիմնական փականները փոխարինելու նպատակով: Մնացած սպասարկման տարածքներում նախատեսվում է կատարել սեկտորները մեկուսացնող փականների և խողովակների փոխարինման աշխատանքներ: Իրականացվելու են նաև առաջնահերթ կարևորություն ունեցող օբյեկտների՝ հիմնականում ջրաղբյուրների և ջրամբարների վերանորոգման և ապահովության բարձրացման աշխատանքներ:

Պերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և կոյուղու համակարգերի վերականգնման ծրագիր, որի նպատակն է՝ Արմավիրի մարզի բնակչությանը մաքուր, հիգիենիկ խմելու ջրի անընդմեջ մատակարարումը, որը կհամապատասխանի պահանջարկին և կապահովի տնտեսական արդյունավետությունը, հոսքային ջրերի հեռացման այնպիսի համակարգի կառուցումը, որը վտանգ չի սպառնա բնակչության առողջությանը: Ջրամատակարարման ենթածրագրով նախատեսվում է իրականացնել խորքային հորերի շինարարություն, ջրաչափերի և սարքավորումների ձեռքբերում և մոնտաժում, ջրագծերի վերակառուցում: Հոսքային ջրերի ջրահեռացման ենթածրագրով նախատեսվում է կուտակման կայանների մաքրման, վերակառուցման, էլեկտրամեխանիկական և հիդրավիկ մեխանիզմների փոփոխման, մաքրման կայանների շինարարական աշխատանքների իրականացում:

Ծրագրի շրջանակներում 2005 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

2. Արմավիր և Մեծամոր քաղաքների ինչպես նաև Բաղրամյանի տարածաշրջանի մի հատվածի ջրամատակարարման համակարգի ապակենտրոնացում.

3. Մայիսյան, Խանջյան, Մրգաշատ, Նորապատ, Տարոնիկ գյուղերում և Մեծամոր քաղաքում խորքային հորերի կառուցում և վերականգնում
4. Ջրամատակարարման գլխամասային կառույցների կառուցում և ջրաչափերի տեղադրում Մեծամոր քաղաքում.
5. Բաղրամյան, Լեռնագոգ, Դալարիկ համայնքներում ջրամատակարարման ցանցի վերականգնում.

Նախատեսվում է իրականացնել նաև խորհրդատվական աշխատանքներ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագիր, որը նախատեսվում է իրականացնել 2005 թվականից սկսած: Ծրագրի նպատակն է՝ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի ինչպես նաև Ախուրյան, Ազատան, և Մարալիկ համայնքների բնակչությանը մաքուր, հիգիենիկ խմելու ջրի անընդմեջ մատակարարումը, որը կհամապատասխանի պահանջարկին և կապահովի տնտեսական արդյունավետությունը, հոսքային ջրերի հեռացման այնպիսի համակարգի կառուցումը, որը վտանգ չի սպառնա բնակչության առողջությանը: Ջրամատակարարման ենթածրագրով նախատեսվում է իրականացնել խորքային հորերի շինարարություն, ջրաչափերի և սարքավորումների ձեռքբերում և մոնտաժում, ջրագծերի վերակառուցում: Հոսքային ջրերի ջրահեռացման ենթածրագրով նախատեսվում է կուտակման կայանների մաքրման, վերակառուցման, էլեկտրամեխանիկական և հիդրավլիկ մեխանիզմների փոփոխման, մաքրման կայանների շինարարական աշխատանքների իրականացում:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագիր, որը նախատեսվում է իրականացնել 2005 թվականից սկսած: Ծրագրի նպատակն է՝ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի ինչպես նաև Լեռնապատ, Դարպաս և Շահումյան գյուղերի բնակչությանը մաքուր, հիգիենիկ խմելու ջրի անընդմեջ մատակարարումը, որը կհամապատասխանի պահանջարկին և կապահովի տնտեսական արդյունավետությունը, հոսքային ջրերի հեռացման այնպիսի համակարգի կառուցումը, որը վտանգ չի սպառնա բնակչության առողջությանը: Ջրամատակարարման ենթածրագրով նախատեսվում է իրականացնել խորքային հորերի շինարարություն, ջրաչափերի և սարքավորումների ձեռքբերում և մոնտաժում, ջրագծերի վերակառուցում: Հոսքային ջրերի ջրահեռացման ենթածրագրով նախատեսվում է կուտակման կայանների մաքրման, վերակառուցման, էլեկտրամեխանիկական և հիդրավլիկ մեխանիզմների փոփոխման, մաքրման կայանների շինարարական աշխատանքների իրականացում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պատվարների անվտանգության ծրագիր, որի նպատակն է՝ բարձրացնել այն պատվարների անվտանգությունը, որոնց վթարի հավանականությունը ամենաբարձրն է, ապահովել պատվարների հուսալի շահագործումը, հիմնականում ոռոգման նպատակով օգտագործվող ջրամբարների պատվարների վերականգնումը և պատվարների

անվտանգության պահպանման միջոցառումների իրականացումը: Այդ նպատակով 2005 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Տավուշի, Շիրակի և Լոռվա մարզերի 7 պատվարների առաջնահերթ վերականգնում.
2. Մարմարիկի վերականգնում և անվտանգության սարքավորումների տեղադրում.
3. Արագածոտնի մարզի 12 ջրամբարների գծով առաջնահերթ միջոցառումների իրականացում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ռոռզման համակարգերի զարգացման ծրագիր, որի նպատակն է՝ կենսունակ ռոռզման ենթակառուցվածքի ստեղծմամբ օժանդակել գյուղական ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Ծրագրի նպատակներից են նաև հանրապետության ռոռզելի հողատարածքների ջրապահովվածության բարելավումը, ռոռզման համակարգերի շահագործման ծախսերի նվազեցումը, ինչպես նաև համակարգում ջրի հաշվառման և կառավարման կատարելագործումը:

2005 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել ռոռզման համակարգերի կառուցվածքների վերականգնման, ռոռզման համակարգերի մեխանիկականից ինքնահոսի անցման շինարարական, ջրօգտագործող ընկերությունների ներտնտեսային ցանցի վերականգնման աշխատանքները: Իրականացվելու են ռոռզման համակարգերի և ներտնտեսային ցանցերի նախագծում, ինչպես նաև կառուցվող համակարգերի վերահսկում, Ջրօգտագործող ընկերությունների կառուցվածքային բարեփոխումների նպատակով նախատեսվում է տեխնիկական աջակցություն, ուսուցում և դրամական կամ այլ միջոցների հատկացումներ շահագործող կազմակերպություններին:

Այդ նպատակով ծրագրի շրջանակներում 2005թ. նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

2. Վայոց ձորի մարզի հողերի ինքնահոս ռոռզման շինարարական աշխատանքներ.
3. Արմավիրի մայր ջրանցքի վերականգնման աշխատանքներ.
4. Արաքս գետի հիդրոբնապահպանական ուսումնասիրություն.
5. Արարատյան հարթավայրի Արմավիրի մարզի աղակալված հողերի մելորատիվ մոնիտորինգի իրականացում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր, որի նպատակն է՝ ջրամատակարարման համակարգի բարելավումը, կառուցվածքային բարեփոխումների միջոցով ջրմուղ-կոյուղու կազմակերպությունների առավել արդյունավետ կառավարումը, ծախսվող էլեկտրաէներգիայի կրճատումը, համակարգի ֆինանսական վիճակի առողջացումն ու մասնավոր ներդրողների համար գրավիչ պայմանների ստեղծումը, ինչպես նաև հետագա ապապետականացման գործընթացի նախապատրաստումը:

Ծրագրի շրջանակներում 2005 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

1. աջակցություն «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին, խմելու ջրի նկատմամբ բնակչության աճող պահանջների բավարարման նպատակով,

2. հետագա ապապետականացման գործընթացի նախապատրաստում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ ծրագիր ջրային տնտեսության ոլորտում, որի շրջանակներում 2005 թվականին նախատեսվում է իրականացնել աշխատանքներ ջրային տնտեսության ոլորտում, մասնավորապես՝ ջրամատակարարման, ոռոգման, կոյուղագծերի համակարգերի և այլ ենթակառուցվածքների վերականգնման աշխատանքներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ջերմամատակարարման և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին աջակցության ծրագիր, որի նպատակն է՝ բարելավել մատչելի, անվտանգ եւ բնապահպանական առումով արդյունավետ ջեռուցման համակարգի գործունեությունը և մեծացնել համատիրությունների դերը բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտում: Որակյալ ջերմամատակարարման համակարգի ստեղծման նպատակով նախատեսվում է նախաձեռնել գործող օբյեկտների փոփոխություններ, որոնք կնպաստեն շուկայական հարաբերությունների վրա հիմնված և մրցակցային պայմաններում իրականացվող ջերմամատակարարմանը, օժանդակել կենսունակ ջերմամատակարարում իրականացնող ընկերությունների ֆինանսական առողջացման և առևտրայնացման ծրագրերի մշակմանը, առաջարկել բնական գազի մատակարարման քաղաքականության և կանոնակարգերի ստեղծում, աջակցել գազամատակարար ընկերությունների կազմակերպական ուժեղացմանը: Ջերմամատակարարման և շենքերի ենթակառուցվածքների բնագավառում նախատեսվում է կաթսաների, սպառված ջերմային էներգիայի չափագրման և ջերմաստիճանը հսկող սարքավորումների, ջերմամեկուսիչ նյութերի տեղադրում շենքերում, տեխնիկական աջակցության ցուցաբերում փորձնական ծրագրերի տեխնիկատնտեսական հիմնավորումների մշակմանը և այլն:

2005 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ ջերմամատակարարման ապահովման կառուցվածքային և տեխնիկական վիճակի բարելավման ուղղությամբ և մի շարք համատիրությունների հետ միասին իրականացնել ջերմամատակարարման ծրագրեր:

2005 թվականին ջրային տնտեսության ոլորտում նախատեսվում է իրականացնել նաև **Ճապոնական սոցիալական զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Համատիրությունների վրա հիմնված Քաղաքային ջրամատակարարման կառավարման դրամաշնորհային ծրագիրը**:

Գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար (առանց նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի), ՀՀ 2005թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 3006.5 մլն դրամ՝ ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 8-ի «ՀՀ կառավարության 2005-2007 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 955-Ն որոշմամբ 2005 թվականին գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի իրականացման համար նախատեսված 2846.5 մլն

դրամի դիմաց (աճը կազմում է 5.62 %) և 2004 թվականի բյուջետային տարվա համար նախատեսված 2189.7 մլն դրամի դիմաց (աճը կազմում է 37.3 %):

Քննարկվող բյուջեի նախագծով հատկացումները օգտագործվելու են հետևյալ ուղղություններով՝

- ա) գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացում;
- բ) բույսերի պաշտպանություն;
- գ) անասնաբուժություն և հակահամաճարակային պայքար;
- դ) անտառների պահպանություն, պաշտպանություն, վերականգնում;
- ե) սերմնաբուծություն;
- զ) անասնաբուծություն;
- է) աջակցություն գյուղատնտեսական տվյալների հավաքագրմանը;
- ը) հիդրոօդերևութաբանական միջոցառումներ;
- թ) Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների համարակալում և հաշվառում;
- ժ) հակակարկտային միջոցառումների իրականացում;
- ի) հակահեղեղային միջոցառումներ:

Հողերի բարելավման աշխատանքների իրականացման ուղղությամբ նախատեսվում է 250.6 մլն դրամ, այդ թվում.

ա) հողերի ագրոքիմիական հետազոտությունների կատարման, բերրիության բարձրացման միջոցառումներ՝ 35 մլն դրամ, 2004 թվականի նախատեսված գումարի և ՄԺԾԾ-ով նախատեսված գումարի չափով (ագրոքիմիական դաշտային հետազոտություններ՝ 174 համայնքների 52.1 հազար հա հողատարածության վրա և 22.2 հազ հողանմուշների նմուշառում);

բ) գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմերի ու ռեժիմների ճշտման աշխատանքների համար՝ 35.0 մլն դրամ ՄԺԾԾ-ով նախատեսված 51.0 մլն դրամի դիմաց: Տարբերությունը պայմանավորված է ՀՀ գյուղատնտեսության նախարարության առաջարկությամբ աշխատանքների ծավալների պակասեցումով;

գ) Արարատյան հարթավայրի ոռոգելի հողերի աղային հանույթի համար՝ 20.0 մլն դրամ, որը համապատասխանում է ՄԺԾԾ-ով նախատեսված չափաքանակին;

դ) բնական կերհանդակների բարելավմանը և ջրաբքիացմանը ուղղվելու է 160.6 մլն դրամ, կամ 74.1 մլն դրամով ավել ՄԺԾԾ-ով հաստատված չափաքանակից, ինչը պայմանավորված է աշխատանքների ծավալների ավելացմամբ՝ ի հաշիվ ՀՀ Գյուղատնտեսության նախարարության առաջարկությամբ ՄԺԾԾ-ով նախատեսված «Արարատյան հարթավայրի ոռոգելի երկրորդային աղակալված հողերի արմատական բարելավում» ծրագրի (369.1 մլն դրամ) իրականացման ժամկետի մեկ տարով հետաձգման;

Միաժամանակ հողերի բարելավման բնագավառում ծախսերի պակասեցումը 2004 թվականի պետական բյուջեով հաստատված ծախսերի նկատմամբ պայմանավորված է նաև նրանով, որ

կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, նորոգման (400.0 մլն դրամ) և գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման (20.0մլն դրամ) աշխատանքները իրականացնող «Մելիորացիա» փակ բաժնետիրական ընկերության՝ պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունները ՀՀ կառավարության սեպտեմբերի 30-ի N 1348-Ն որոշման համաձայն 2005 թվականի հունվարի 1-ից վերապահվում են ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեին:

Ընդամենը բույսերի պաշտպանության գծով բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 272.7 մլն դրամ, ինչը համապատասխանում է 2004 թվականի պետական բյուջեով և ՄԺԾԾ-ով հաստատված չափաքանակին:

Բույսերի պաշտպանության աշխատանքների կատարման համար նախատեսված միջոցների բաշխումը հետևյալն է.

ա) բույսերի պաշտպանության ծառայության իրականացում՝ 42.7 մլն դրամ՝ 2004 թվականի հաստատված և 2005 թվականի ՄԺԾԾ-ով նախատեսված գումարի չափով, (147.4 հազ հա դաշտային հետազոտություն, թունանյութերի 550 հատ լաբորատոր փորձաքննություն);

բ) բույսերի պաշտպանության միջոցառումներ՝ 200.0 մլն դրամ՝ 2004 թվականի հաստատված և 2005 թվականի ՄԺԾԾ-ով նախատեսված չափաքանակներին համապատասխան (մկների դեմ պայքար 144 հազար հա վրա, մորեխների դեմ պայքար՝ 5 հազար հա վրա);

գ) բույսերի կարանտին ծառայության կողմից նախատեսվում է իրականացնել բույսերի կարանտինի կազմակերպման, հիվանդությունների և վնասատուների մուտքը կանխարգելող միջոցառումներ՝ 30 մլն դրամի չափով՝ 2004 թվականի հաստատված և ՄԺԾԾ-ով նախատեսված չափաքանակներին համապատասխան (14000 հա վրա վարակվածության հետազոտություն):

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով անասնաբուժության և հակահամաճարակային միջոցառումների բնագավառում ծախսերը ուղղվելու են.

- պատվաստուկների և հակահամաճարակային միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերմանը՝ 767.0 մլն դրամ (համապատասխանում է 2005 թվականի համար ՄԺԾԾ-ով նախատեսված չափաքանակին), կենդանիների վարակիչ (դաբաղ, սիբիրախտ, խշխշան պալար, տավարի ժանտախտ, ոչխարի ծաղիկ, խոզի ժանտախտ) և ոչ վարակիչ (բրուցելյոզ, տուբերկուլյոզ, պաստերելյոզ, լեյկոզ) հիվանդությունների կանխատեսման և վերացման միջոցառումների համար (2363.1 հազար գլուխ կենդանիների վարակամերժության մակարդակի բարձրացում):

- անասնաբուժական սպասարկման միջոցառումների համար՝ 328.8 մլն դրամ (2005 թվականի ՄԺԾԾ-ով նախատեսված չափաքանակին համապատասխան), պատվաստումներ և ախտորոշում, կենդանիների և մարդու համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պաշտպանության ապահովող միջոցառումների իրականացման համար;

- հանրապետական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոնին նախատեսվում է տրամադրել 50.1 մլն. դրամ, ինչը համապատասխանում է 2005 թվականի ՄԺԾԾ-ով սահմանված չափաքանակին,

որի հաշվին նախատեսվում է կենդանիների արյան շիճուկների մնուշառման և հետազոտման, մանրեաբանական, քիմիկա-թունաբանական ուսումնասիրման, կենդանական ծագում ունեցող մթերքների և հումքի նկատմամբ անասնաբուժասանիտարական հսկողության, անասնաբուժական պետական հսկման ենթակա բեռների փոխադրումների ժամանակ ուղեկցող անասնաբուժական փաստաթղթերի ձևակերպման աշխատանքների իրականացումը;

- անասնաբուժական ոստիկանական ջոկատի ծառայությունների համար նախատեսվում է հատկացնել 14.0 մլն դրամ՝ համաձայն ՀՀ ոստիկանության հետ կնքված պայմանագրի:

Անտառների պահպանության, պաշտպանության և վերարտադրության աշխատանքների նախատեսվում է հատկացնել 400.0 մլն դրամ, որի հաշվին իրականացվելու է անտառաշին պետական ֆոնդի 3600 հազ հա վրա անտառների պահպանություն, անտառպաշտպանական միջոցառումներ՝ 1630 հա վրա և 514 հա վրա անտառվերականգնման աշխատանքներ: Ծախսերի ավելացումը 2004 թվականի պետական բյուջեով հաստատված և 2005 թվականի համար ՄԺԾԾ-ով սահմանված չափաքանակների դիմաց համապատասխանաբար՝ 211.3 մլն դրամով և 100.0 մլն դրամով պայմանավորված է աշխատանքների ծավալների ավելացումով:

Սերմերի որակի ստուգման և սորտափորձարկման աշխատանքների համար նախատեսվել են բյուջետային հատկացումներ 25.0 մլն դրամի չափով՝ 2004 թվականի հաստատված գումարի և 2005 թվականի ՄԺԾԾ-ով նախատեսված չափաքանակի շրջանակներում, ինչը հնարավորություն կտա գյուղացիական տնտեսություններին ու անհատներին ապահովելու բարձրակարգ սերմերով: Նշված գումարների հաշվին իրականացվելու է սելեկցիոն նվաճումների պետական գրանցամատյանի վարում (320-340 սորտ), բույսերի նոր սորտերի պաշտոնական տեղեկատվության հրատարակում (400 օրինակ), բարձր վերարտադրության սերմնադաշտերի ապրոբացիա (1000 հա) սերմերի ծլունակության և աղտոտվածության փորձաքննություն, հսկողություն, ինչպես նաև գյուղատնտեսական մշակաբույսերի նոր սորտի սերմերի արտադրական փորձարկում (150 սորտ), սերտիֆիկացման և ներդրման միջոցառումներ:

Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման միջոցառումների իրականացմանը ուղղվելու է 41.5 մլն դրամ, որը համապատասխանում է 2004 թվականի պետական բյուջեով հաստատված և 2005 թվականի համար ՄԺԾԾ-ով նախատեսված գումարին: Ծրագրով նախատեսվում է մոտ 15.4 հազար կովերի և 3.3 հազար մերունների արհեստական սերմնավորում, 525 հազար չափաքանակին խորը սառեցված սերմնահեղուկի բանկի պահպանում:

Գյուղատնտեսության հետագա զարգացման նպատակով նախատեսվում է աջակցություն գյուղատնտեսական տվյալների հավաքագրմանը 871 գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի անձնագրավորման և գյուղատնտեսության ոլորտի տեղեկատվության հավաքագրման համար՝ 30 մլն դրամի չափով՝ 2004 թվականի պետական բյուջեով և 2005 թվականի համար ՄԺԾԾ-ով նախատեսված չափաքանակի շրջանակներում:

Հիդրոօդերևութաբանական միջոցառումների համար նախատեսվում է 2.2 մլն դրամ՝ 2004 թվականի պետական բյուջեով և 2005 թվականի համար ՄԺԾԾ-ով նախատեսված գումարի չափով՝

ամենօրյա տեղեկագրերի, կլիմայական ամսական տեսությունների և ըստ մարզերի եղանակի կանխատեսումների տրամադրման, տասնօրյակային ագրոօդերևութաբանական տեղեկագրերի տրամադրման նպատակով:

Հատուկ միջոցառումների իրականացման համար նախատեսվում է 0.96 մլն դրամ՝ 2004 թվականի հաստատված և ՄԺԾԾ-ով նախատեսված գումարի շրջանակներում:

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման նպատակով նախատեսվում է հատկացնել 48.6 մլն դրամ, կամ 13.3 մլն դրամով ավել 2004 թվականի ճշտված բյուջեից և 2005 թվականի ՄԺԾԾ-ով նախատեսված չափաքանակից, ինչը բացատրվում է աշխատանքների և ծավալների ավելացումով:

2005 թվականի բյուջեի նախագծով նախատեսվում է իրականացնել 4 նոր ծրագրեր, որոնք ընդգրկված չեն 2005 թվականի ՄԺԾԾ-ում.

-Սահմանային հսկիչ կետերի կառուցման և վերազինման համար նախատեսվում է 195.0 մլն դրամ:

-Հակակարկտային սարքավորումների ձեռքբերման գործընթացում պետության ստանձնած պարտավորությունների կատարման նպատակով Արգենտինական SAPOISA կազմակերպության հետ կնքված պայմանագրի համաձայն նախատեսվում է 80.0 մլն դրամ:

-Ճապոնական կառավարության «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում ձևավորված գործընկերային ֆոնդի հաշվին իրականացվող հակահեղեղային միջոցառումների իրականացմանը ուղղվելու է 246.0 մլն դրամ:

- Ճապոնական կառավարության «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում ձևավորված գործընկերային ֆոնդի հաշվին իրականացվող անտառվերականգնման միջոցառումների իրականացման համար նախատեսվում է 254.0 մլն դրամ:

Գյուղատնտեսության ոլորտի ՀՀ 2005 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը՝ առանց վարկային ծրագրերի, ՀՀ 2003 թվականի բյուջետային տարվա փաստացի, ՀՀ 2004 թվականի համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է N 9 աղյուսակում:

Բացի այդ Գյուղատնտեսության ոլորտում 2005 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ վարկային ծրագրերը.

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագիր, որի նպատակն է՝ աջակցել մասնավոր ֆերմերային տնտեսությունների և ագրովերամշակող ձեռնարկությունների զարգացմանը, ընդլայնել ֆերմերային տնտեսությունների վարկավորման համակարգը, բարձրացնել գյուղատնտեսության ոլորտում հետազոտության, կրթության, տեղեկատվության և խորհրդատվական ծառայությունների արդյունավետությունը: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2005 թվականի հունիսին, որի ընթացքում ծրագրավորվում է շարունակել գյուղատնտեսական հաստատությունների և գիտական թեմատիկ աշխատանքների ֆինանսավորումը:

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ Գյուղատնտեսական տարածքների տնտեսական զարգացման ծրագիր, որը նոր ծրագիր է և նախատեսվում է սկսել 2005 թվականից: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության առավել աղքատ 7 լեռնային մարզերում՝ Տավուշի, Գեղարքունիքի, Լոռիի, Շիրակի, Վայոց ձորի, Արագածոտնի, Սյունիքի մարզերում գյուղատնտեսությանն առնչվող տնտեսական գործունեության կայուն աճին:

Ծրագրի շրջանակներում 2005 թվականին նախատեսվում է.

1. Ստեղծել Գյուղական ֆինանսավորման կառույց
2. Գյուղական ֆինանսավորման կառույցի կողմից նախատրակում անցած բանկերի և այլ իրավասու ֆինանսական կառույցների միջոցով վարկերի տրամադրում
3. Փոքրածավալ ներդրումային դրամաշնորհների տրամադրում
4. Զարգացնել բիզնես ծառայություններ մատակարարող կազմակերպությունների ցանց:

Պետական գույքի կառավարման բնագավառում ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմված են երկու ծրագրերից.

«Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով իրականացվող պետպատվեր՝ 18.4 մլն դրամ, 2004 թվականի բյուջետային տարվա համար նախատեսված 18.4 մլն դրամի դիմաց, ինչը համապատասխանում է «ՀՀ կառավարության 2005-2007 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 17-ի N 985-Ն որոշմամբ 2005 թվականի համար նախատեսված չափաքանակին:

«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով իրականացվող պետական պատվեր՝ 30.0 մլն դրամի չափով՝ ինչը համապատասխանում է ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 17-ի N 985-Ն որոշմամբ 2005 թվականի համար նախատեսված չափաքանակին:

ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի հաշվին նախատեսվող կապիտալ ծախսերը համապատասխանեցվել են ՀՀ կառավարության 17.06.2004թ. N 985-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2005-2007 թվականների պետական միջնաժամկետ ծախսային ծրագրով քաղաքաշինության ոլորտի համար նախատեսված չափաքանակներին:

1. ՀՀ հանրակրթական դպրոցների հիմնանորոգման և բարելավման համալիր ծրագիր` 4,789.265.0 հազար դրամ, որից կրթական օբյեկտների հիմնանորոգման համար` 4,546.265.0 հազար դրամ և կրթական օբյեկտների շինարարության համար` 243.000.0 հազար դրամ:

ՀՀ կառավարության 2002թ. մայիսի 20-ի N 593 որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության 1413 հանրակրթական դպրոցների համալրման, հիմնանորոգման, վերականգնման, ուժեղացման ծրագիրը, որի իրականացման համար պահանջվում է 58.3 մլրդ դրամ: ՀՀ կառավար-

րության 17.06.2004 թ. N 985-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2005-2007 թվականների պետական միջնաժամկետ ծախսային ծրագրում 2005թ. համար «Կրթական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով նախատեսվել է 4,546.265.0 հազար դրամ՝ ուստի հիմնանորոգման համար ՀՀ 2005 թ. բյուջեի նախագիծը կազմվել է նշված գումարի սահմաններում: Ընդ որում նրա մեջ նախատեսվում է ներառել վերջին շրջանում բազմիցս արծարծված, սակայն լուծում չստացած առավել հրատապ ու առաջնահերթ խնդիրները:

Միջին ժամկետ ծախսային ծրագրով նախատեսված գումարի սահմաններում պետք է իրականացվի նաև այն դպրոցների հիմնանորոգման աշխատանքները, որոնց դասասենյակները կամ այլ կառուցվածքները դպրոցների օպտիմալացման ծրագրի արդյունքում վերակառուցման անհրաժեշտություն ունեն: Այդ կապակցությամբ՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ քննարկման արդյունքում կճշտվի այդ դպրոցների ցանկը և կընդգրկվի դպրոցների հիմնանորոգման 2005 թ. ծրագրում:

Դպրոցների շինարարության համար հատկացումները նախատեսվում է քննարկել ՀՀ կառավարության 17.06.2004 թ. N 985-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2005-2007 թվականների պետական միջնաժամկետ ծախսային ծրագրով 2005 թ. շինարարության համար նախատեսված 243,0 մլն. դրամ գումարի շրջանակներում:

Ծրագրի բյուջեն 2005թ. կազմում է 4,789.265.0 հազար դրամ, որից կրթական օբյեկտների հիմնանորոգման համար՝ 4,546.265.0 հազար դրամ և կրթական օբյեկտների շինարարության համար՝ 243.000.0 հազար դրամ:

2. Մշակութային օբյեկտների հիմնանորոգման և բարելավման ծրագիր՝ 100,000.0 հազար դրամ :

Ներկայումս ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից մշակման գործընթացում է գտնվում «ՀՀ մշակութային օբյեկտների հիմնանորոգման և բարելավման համալիր ծրագիրը», որը դեռևս ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ չի հաստատվել: Այնուամենայնիվ հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ ՀՀ կառավարության 17.06.2004 թ. N 985-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2005-2007 թվականների պետական միջնաժամկետ ծախսային ծրագրում 2005թ. համար ՀՀ մշակութային օբյեկտների հիմնանորոգման և բարելավման նպատակով նախատեսվել է 100,0 մլն. դրամ՝ որն էլ հիմք է հանդիսացել այս ծրագրի համար ՀՀ 2005 թ. պետական բյուջեի նախագիծը կազմել նշված գումարի սահմաններում: Հանրապետությունում առկա այս ծրագրին վերաբերող առաջնահերթ խնդիրների մեծ մասը նախատեսվում է քննարկել 2006 և 2007թթ. պետական բյուջեների կազմման գործընթացների շրջանակներում, քանի որ 2005-2007 թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրում 2006 և 2007 թթ. կտրվածքով ծրագրի իրականացման համար նախատեսված է համապատասխանաբար 1074,0 մլն. և 947,0 մլն. դրամ գումար: Դրան կնպաստի նաև ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացվելիք «ՀՀ մշակութային օբյեկտների հիմնանորոգման և բարելավման համալիր ծրագրի» ընդունումը:

Ծրագրի բյուջեն 2005թ. կազմում է 100 000.0 հազար դրամ:

3. Պատմական քաղաքների կառավարման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման տարածաշրջանային ծրագիր. 70,000.0 հազար դրամ:

Գումարի նախատեսման իրավական հիմքերն են՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 14.08.2003թ. N 1030-Ն, 17.06.2004թ. N 985-Ն որոշումները:

ՀՀ կառավարության 17.06.2004 թ. N 985-Ն որոշմամբ հաստատված 2005-2007 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նշված նպատակով նախատեսվել է 70,000.0 հազար դրամ գումար:

Ծրագրի նպատակն է՝ նպաստել պատմական հարուստ ժառանգություն ունեցող համայնքներում կայուն զարգացման ծրագրերի նոր ինտեգրացված մոդելների ձևավորմանը՝ մշակութային և բնական ժառանգության պահպանմանը, հարստացմանը և արդյունավետ կառավարման միջոցով վերականգնման ծրագրերի իրականացմանը, ինստիտուցիոնալ և մասնագիտական կարողությունների բարելավմանը:

Ծրագրի արդյունքում ակնկալվում է խթանել համայնքներում կայուն զարգացման ծրագրերի իրականացմանը, ներկայացնել առաջարկություններ իրավական դաշտի և վարչական գործելակերպերի բարելավման ուղղությամբ, մշակել և իրականացնել վերականգնման ծրագրեր:

Արդյունքի հասնելու համար անհրաժեշտ միջոցառումներն են՝ մշակել պատմական քաղաքների վերականգնման, սոցիալական և տնտեսական կայուն զարգացման քաղաքականություն, աշակցել շահագրգիռ բոլոր կողմերին ուրվագծելու որոշումների կայացման գործընթացներ:

Ծրագրի հաջող իրականացման դեպքում՝ պատմական քաղաքների սոցիալական և տնտեսական զարգացման ծրագրերը մշակելիս հաշվի կառնվեն համայնքների կայուն զարգացմանը, ներդրումային քաղաքականության խրախուսմանը նպատակաուղղված նոր ինտեգրացված մոդելների ձևավորման սկզբունքները:

Ծրագրի բյուջեն 2005 թ. կազմում է՝ 70 000.0 հազար դրամ:

4. Հրազդան գետի ջրահավաք ավազանի գոտու կայուն զարգացման ծրագիր. 60,000.0 հազար դրամ:

Գումարի հատկացման իրավական հիմքերն են՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 14.08.2003թ. N 1030-Ն, 17.06.2004թ. N 985-Ն որոշումները:

ՀՀ կառավարության 17.06.2004 թ. N 985-Ն որոշմամբ հաստատված 2005-2007 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նշված նպատակով նախատեսվել է 60,000.0 հազար դրամ գումար:

Ծրագիրը նպատակաուղղված է Սևանա լճից մինչև հանրապետության հարավային սահմանները ձգվող Հրազդան գետի ավազանի բնական հատկանիշների վերականգնմանը, պաշարների խնայողական օգտագործմանը, գոտու կայուն զարգացման խնդիրների լուծմանը:

Ծրագրի արդյունքում ակնկալվում է էապես նպաստել երկրի տնտեսական, շրջակա միջավայրի, հատկապես Սևանա լճի աղետալի վիճակների բարելավմանը:

Արդյունքի հասնելու համար անհրաժեշտ միջոցառումներն են՝ տարածքի մանրամասն ուսումնասիրությունը, հասարակական օգտագործման կանաչ զանգվածների տարածքների վերականգնումը, բնապահպանական միջոցառումների իրականացումը:

Ծրագրի հաջող իրականացման դեպքում ակնկալվում է Հրազդանի ջրհավաք ավազանում ընդգրկված տարածքների վիճակի բարելավում, ինչն իր հերթին զգալի դրական ազդեցություն կունենա հանրապետության ողջ տարածքի համար:

Ծրագրի բյուջեն 2005թ. կազմում է 60 000.0 հազար դրամ:

5. ՀՀ համայնքների գլխավոր հատակագծերի (ներառյալ գոտիավորման փաստաթղթերի) մշակում. 124,800.0 հազար դրամ:

Գումարի հատկացման իրավական հիմքերն են՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 16.04.2001թ. N 313, 02.05.2003թ. N 609, 02.05.2003թ. N625, 14.08.2003թ. N 1030-Ն և 17.06.2004թ. N 985-Ն որոշումները:

ՀՀ կառավարության 17.06.2004 թ. N 985-Ն որոշմամբ հաստատված 2005-2007 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նշված նպատակով նախատեսվել է 124,800.0 հազար դրամ գումար:

Քաղաքաշինական քաղաքականության ձևավորման և իրականացման առումով մեր երկրում առկա իրավիճակը բնորոշվում է նաև համայնքների գլխավոր հատակագծերի և գոտիավորման փաստաթղթերի մշակման անհրաժեշտությամբ:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության համայնքների գերակշիռ մասի գլխավոր հատակագծերի կազմումը կամ վերանայումը, իսկ գոտիավորման նախագծերի մասով՝ նոր նախագծերի մշակումը, որոնց բացակայության պայմաններում էականորեն բարդանում են քաղաքաշինական գործունեությանն ուղղված գործառնությունների իրականացումը:

Ծրագրի արդյունքում ակնկալվում է Հայաստանի Հանրապետության համայնքների գլխավոր հատակագծերի (ներառյալ գոտիավորման փաստաթղթերի) մշակումը, համայնքներում ներդրումների ներգրավումը, քաղաքաշինական գործունեության իրականացման գործառնությունների պարզեցումը:

Արդյունքի հասնելու համար անհրաժեշտ միջոցառումներն են՝ համայնքներում ներդրումների ներգրավման տեսանկյունից առաջնային է համապատասխան պլանավորման և գոտիավորման փաստաթղթերի մշակումն ու հաստատումը, որպես համայնքի տարածական զարգացման յուրահատուկ «սահմանադրություն»: Դրանց հիման վրա պետք է իրականացվի քաղաքաշինության բնագավառի գործառնությունների կարգավորումն ու հստակեցումը՝ նպատակաուղղված բյուրոկրատական կամայականությունների և կոռուպցիայի դրսևորումների նվազեցմանը: Վերոնշյալ նկատառումները սերտորեն շաղկապված են և պետք է դիտարկվեն նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության բոլոր խավերի համար սոցիալական և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովմանն ուղղված գործողությունների արդյունավետ իրականացմանը՝ մեր երկրում աղքատության նվազեցմանն ուղղված ջանքերի համատեքստում:

Ծրագրի հաջող իրականացման դեպքում ակնկալվում է հանրապետության մի շարք համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակում:

Ծրագրի բյուջեն 2005թ. կազմում է 124 800.0 հազար դրամ:

6. Հակասողանքային միջոցառումներ. 92,000.0 հազար դրամ:

Գումարի հատկացման իրավական հիմքը՝ ՀՀ կառավարության 07.11.2001թ. N 1074 որոշմամբ հաստատված համալիր միջոցառումների ծրագիր:

Ծրագրի նպատակն է՝ ՀՀ տարածքի սողանքային տեղամասերում հետազոտման և միջոցառումների մշակման ու իրականացման գործում համակարգված մոտեցումների ամրագրումը, որի արդյունքում կապահովվի սողանքավտանգ տարածքներում գտնվող բնակավայրերի բնականոն և անվտանգ զարգացումը, հաղորդակցողիների և կենսագործունեության օբյեկտների անխափան և կայուն շահագործումը, դրանով իսկ ապահովելով տնտեսության բնականոն գործառույթ և սողանքների պատճառով հասցվող վնասների նվազեցումը:

Ծրագրի հիմնական ակնկալվող արդյունքներն են՝ առաջնահերթ միջոցառում պահանջող մի շարք սողանքային տարածքներում ռեժիմային դիտարկումների (մոնիտորինգի) կազմակերպումն ու իրականացումը, դրանց հիման վրա արդյունավետ միջոցառումների կազմակերպման (այդ թվում ինժեներապաշտպան) հիմնավորումը և իրականացումը, ինչպես նաև ՀՀ Տավուշի մարզի սողանքային տարածքներում անհապաղ վերաբնակեցման ենթակա վթարային տների բացահայտման նպատակով դրանց տեխնիկական վիճակի հետազոտությունը:

Ծախսային ծրագրի արդյունքներին հասնելու նպատակով, իրականացվում են նախագծահետազոտական աշխատանքներ:

ՀՀ կառավարության 07.11.2001թ. N1074 որոշմամբ հաստատված համալիր միջոցառումների իրականացումը կնպաստի, համապատասխան ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքների հիման վրա նախագծերի կազմմանը և կանխարգելիչ ինժեներապաշտպան միջոցառումների իրականացմանը, ինչպես նաև տարածքների, շենքերի և շինությունների, տարբեր նշանակության կառուցվածքների, ինժեներական հաղորդակցողիների անվտանգ և անխափան շահագործմանը, դրանով նպաստելով արտաժին վտանգավոր երկրաբանական երևույթներից բնակչության պաշտպանությանը և նրա բնականոն կենսագործունեության ապահովմանը:

Առաջարկվող ինժեներապաշտպան միջոցառումների արժեքի և վթարավտանգ գոտիներից վերաբնակեցման ծախսերի համեմատությունից արված տնտեսական վերլուծության հիման վրա կընդունվեն ազգաբնակչության անվտանգության ապահովմանն ուղղված և ինժեներական հաղորդակցողիների ու կենսապահովման օբյեկտների կայուն շահագործման համար առավել արդյունավետ լուծումներ:

Նշված գումարի շրջանակներում նախատեսվում է քննարկել նաև ՀՀ Կոտայքի մարզի Ողջաբերդ գյուղի բնակչության վերաբնակեցման և Քարաթափերի աղեցության գոտիներում գտնվող բնակելի տների բնակիչների վերաբնակեցման խնդիրները:

Ծրագրի բյուջեն 2005թ. կազմում է 92,000.0 հազար դրամ:

Քաղաքաշինության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ նախորդ տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ, արտացոլված է սույն բացատրագրի N 10 աղյուսակում:

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման ոլորտին ՀՀ 2005թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 563,027 մլն. դրամ:

«Փոքր և միջին ձեռնարկությանը պետական աջակցության» ծրագիրը շարունակական է: ՀՀ 2005թ. պետական բյուջեի նախագծով նշված ծրագրի իրականացման համար նախատեսվում է՝ 300.0 մլն. դրամ, այն համապատասխանում է ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 17-ի N 985-Ն որոշմամբ հաստատված ՄԺԾԾ-ով սահմանված չափաքանակին: Նշված ծրագրի համար 2004թ պետական բյուջեով նախատեսված էր 250.0 մլն. դրամ, 50.0 մլն. դրամի ավելացումը պայմանավորված է ՓՄՁ սուբյեկտների աջակցության համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման և ամրապնդման գործընթացների անհրաժեշտությամբ: Մասնավորապես նախատեսվում է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի գործունեության ընդլայնում ՀՀ մարզերում գործող ՀՀ Շիրակի, Տավուշի և Սյունիքի մարզային մասնաճյուղերի ամրապնդում և ՀՀ Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզային նոր մասնաճյուղերի ստեղծում, ինչպես նաև 2004թ. նախատեսված ՀՀ Արագածոտնի, Կոտայքի և Լոռու մարզերում հիմնվող մասնաճյուղերի գործունեությունը և հետագա զարգացման ծախսերը: 2005թ. ծրագրով նախատեսվում է ծրագրային միջոցառումների ավելացման հետ մեկտեղ ընդլայնել ՓՄՁ սուբյեկտներում որակի կառավարման միջազգային ստանդարտների ներդրման, դրանց գործարար տեղեկատվական, խորհրդատվական, ուսուցողական, ինչպես նաև ֆինանսական և ներդրումային աջակցության ցուցաբերման հնարավորությունները: Մասնավորապես, ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական և ներդրումային աջակցության նպատակով սույն ծրագրի շրջանակներում նախատեսվում է շարունակել և ընդլայնել ՓՄՁ սուբյեկտների վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիրը:

«ՀՀ զբոսաշրջիկության զարգացման պետական ծրագիր» շարունակական ծրագիր է՝ ՀՀ 2005թ. պետական բյուջեի նախագծով նշված ծրագրի իրականացման համար նախատեսվում է 20.0 մլն. դրամ պետական աջակցություն:

«Ռադիոակտիվ թափոնների վնասագերծման գծով» ծախսերի ծրագիրը շարունակական է՝ ՀՀ 2005թ. պետական բյուջեի նախագծով նշված ծրագրի իրականացման համար նախատեսվում է՝ 17041.0 հազ. դրամ սուբսիդիա, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 17-ի N 985-Ն որոշմամբ հաստատված ՄԺԾԾ-ով սահմանված չափաքանակին: Ներկայացված ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ապահովելու ռադիոակտիվ թափոնների վնասագերծման աշխատանքների բնականոն ընթացքը:

Հայաստանի Հանրապետության 2005 թվականի տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության պետական ծրագրով ՀՀ 2005թ. պետական բյուջեով նախատեսվում է 156.0 մլն. դրամ, որի շրջանակներում

նախատեսվում է 100.0 մլն.դրամ ընթացիկ ծախսեր, 56,0 մլն.դրամ նավթամթերքի շարժական փորձարկման լաբորատորիայի ստեղծում: Իրականացվող աշխատանքները պայմանավորված է նաև չափման միջոցների ստուգաչափման կիրառման միջոցով՝ չափագիտական կանոնների ու նորմերի պահպանմամբ, խախտումների բացահայտմամբ և դրանց կանխարգելմամբ, ինչպես նաև հաստատված տեսակի թողարկվող չափման միջոցների համապատասխանության որոշմամբ:

ՀՀ 2005թ. պետական բյուջեի նախագծով նշված նպատակի համար Ստանդարտացման ծրագրով նախատեսվում է՝ 28,662,0 հազ.դրամ, որի շրջանակներում կիրականացվեն՝ տեխնիկական կանոնակարգերի մշակում և փորձաքննություն՝ 13950 հազ.դրամ, ազգային ստանդարտների մշակում՝ 5360 հազ.դրամ, տեխնիկական տեսական տեղեկատվության դասակարգման և կողմնորման փաստաթղթերի մշակում՝ 1770 հազ.դրամ, միջպետական և միջազգային ստանդարտացման աշխատանքներ՝ 1728 հազ.դրամ և ստանդարտների ազգային ֆոնդի վարում և տեղեկատվության սպասարկում՝ 5854 հազ.դրամ:

2005թ. Չափագիտական ծրագրով նախատեսվում է՝ 41,324.0 հազ.դրամ նոր ծրագիր է, որի շրջանակներում կիրականացվեն՝ ազգային էտալոնների ստեղծում, ձեռքբերում, կատարելագործում, պահպանում, սպասարկում և բաղադրում՝ 17270 հազ.դրամ, հետազոտական աշխատանքների կատարում՝ 9260 հազ.դրամ, չափագիտության բնագավառում նորմատիվի, իրավական փաստաթղթերի մշակման՝ 2652 հազ.դրամ և միասնական ժամանակի և հաճախականության ապահովման, ստանդարտ նմուշների մշակման աշխատանքների համար՝ 12142 հազ.դրամ:

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման ոլորտի ծախսերի համեմատությունը՝ նախորդ տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ, արտացոլված է սույն բացատրագրի N 11 աղյուսակում:

Բացի այդ 2005 թվականին առևտրի և տնտեսական զարգացման ոլորտում նախատեսվում է շարունակել հետևյալ վարկային ծրագրերի իրականացումը.

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ձեռնարկությունների ինկուբատորի ծրագիր, որի նպատակներն են՝ նորաստեղծ ձեռնարկություններին բիզնեսի զարգացման ծառայությունների տրամադրումը և շարունակական ուսուցումն ու վերապատրաստումը: Մասնավորապես՝

1. անհյուրընկալ բիզնես միջավայրում օտարերկրյա ընկերությունների հետ բիզնես կապերին աջակցելու միջոցով ընկերության ձևավորման հնարավորության ցուցադրումը,
2. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում օտարերկրյա ուղղակի ներդրումների հնարավորության ցուցադրումը,
3. տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների մասնագետների, ուսանողների, ընկերությունների կառավարիչների և աշխատակիցների տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կարողությունների շարունակական զարգացման մեխանիզմների փորձարկումը: Ծրագրի իրականացման նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ հիմնվել է Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը, որն իրենից ներկայացնում է շահույթ չհետապնդող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի բիզնեսի զարգացման ինկուբատոր:

2005 թվականի ընթացքում նախատեսվում է ավարտել կառավարվող աշխատանքային տարածքի շենքի վերանորոգման աշխատանքները, որը վարձակալության կտրվի բոլոր հետաքրքրված հաճախորդներին, բիզնեսի զարգացման ծառայությունների կենտրոնի ստեղծում և ծառայությունների մատուցում, ձեռնարկատերերի համար դրամաշնորհների տրամադրում, հանրապետությունում բիզնեսի միջավայրի ուսումնասիրություն և բարելավման ուղղությունների վերլուծություն:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանման ծրագիր, որի նպատակն է՝ օտարերկրյա ներդրողներին հայաստանյան շուկա ներգրավելու նպատակով ռազմավարության մշակումը, գործարար գործարքների ձևակերպման ռացիոնալիզացման և մասնավոր ու պետական հատվածների հարաբերությունների պարզեցման ուղղությամբ միջոցառումների մշակումը: Ծրագիրը նպատակաուղղված է արտաքին ներդրումների խթանման և արտահանումների զարգացման համար պատասխանատու կառույց համարվող Ջարգացման հայկական գործակալության (ՋՀԳ) հզորացմանը: 2005 թվականի ընթացքում կապահովվի ՋՀԳ-ի հետագա զարգացումը՝ որպես կատալիզատոր տնտեսության ներսում մասնավոր ներդրումների և արտահանման հնարավորությունների զարգացման, որտեղ կան մեծ դժվարություններ արտասահմանյան ուղղակի ներդրումների ներգրավման և արտահանման շուկաների ձեռքբերման հարցում:

ՀՀ էներգետիկայի ոլորտին ՀՀ 2005թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 1824,900.0հազ.դրամ:

Հրազդան ՁԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի պահպանության ծրագրի համար 2005թ բյուջեի նախագծով նախատեսվում է՝ 120,000.0հազ.դրամ, որի շրջանակներում անհրաժեշտ է ապահովել Հրազդան ՁԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի օբյեկտների շենքերի, շինությունների, տեղադրված և պահեստավորված սարքավորումների, տարածքի պահպանումը մինչև Հրազդան ՁԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի շինարարության հարցի լուծումը:

Հայկական ԱԷԿ ՓԲԸ-ում աշխատած միջուկային վառելիքի չոր եղանակով պահպանման պահեստարանի կառուցման համար նախագծով նախատեսված 1,705,8 մլն դրամի շրջանակներում անհրաժեշտ է Հայկական ԱԷԿ-ի տարածքում կառուցել աշխատած վառելիքի չոր եղանակով պահպանման պահեստարան, որը նախատեսված կլինի աշխատած վառելիքի 672 հատ հավաքվածքների հետագա պահպանման համար:

Բացի այդ 2005 թվականին էներգետիկայի ոլորտում նախատեսվում է իրականացանել հետևյալ վարկային ծրագրերը.

ՀՀ էներգետիկայի ոլորտի ծախսերի համեմատությունը՝ նախորդ տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ, արտացոլված է սույն բացատրագրի N 12 աղյուսակում:

Համաշխարհային բանկի և Միջազգային համագործակցության ճապոնական բանկի աջակցությամբ ծրագրավորված է իրականացնել Էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման ծրագիրը, որի նպատակն է՝ Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգերի

վերականգնումը, ֆինանսական կարգապահության ուժեղացումը, ճյուղային հաստատություններում հզորությունների կառուցումը:

Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ նախատեսվում է թվով 8 հատ 220 կվ հզորությամբ ենթակայանների հիմնական սարքավորումներով վերազինում, բարձրավոլտ ենթակայանների համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև խորհրդատվական աշխատանքների իրականացում: 2005 թվականին նախատեսվում ավարտել այդ սարքավորումների տեղադրման ու շահագործման աշխատանքների իրականացումը:

Միջազգային համագործակցության ճապոնական բանկի ֆինանսավորմամբ նախատեսվում է թվով 33 հատ 110 կվ հզորությամբ ենթակայանների հիմնական սարքավորումներով վերազինում, բարձրավոլտ ենթակայանների համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում, բնակչության սոցիալապես անապահով խավերի համար միաֆազ բազմասակագնային հաշվիչների (մինչև 150,000 հատ) և նրանց ստուգման սարքավորումների (մինչև 20 լրակազմ) առաքում, ՀՀ էներգահամակարգի նոր SCADA/Կապի համակարգի իրականացման սարքավորումների առաքում և տեղադրում, ինչպես նաև խորհրդատվական աշխատանքների իրականացում: 2005 թվականին նախատեսվում է իրականացնել այս երեք աշխատանքների կանխավճարների վճարումները՝ պայմանագրերի գումարի 10%-ի չափով, ինչպես նաև միաֆազ բազմասակագնային հաշվիչների և նրանց ստուգման սարքավորումների առաքումը:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրա-էներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման ծրագիրը, որի շրջանակներում 2003 թվականին վերակառուցվել և շահագործման է հանձնվել «Վանաձոր - 2» և «Կամո» ենթակայանները: ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև 1998 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված «1997 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրով տրամադրված 27.5 մլն գերմանական մարկ վարկի մնացորդային գումարով և ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև 2004 թվականի ապրիլի 5-ին կնքված «Կովկասյան նախաձեռնության շրջանակներում ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրով նախատեսվող 4.7 մլն Եվրո վարկային միջոցներով 2005 թվականին նախատեսվում է «Ալավերդի-2» ենթակայանի ամբողջական վերականգնում և վերազինում:

Բնապահպանության ոլորտում 2005 թվականի բյուջեի նախագիծը կազմվել է «ՀՀ կառավարության 2005-2007 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 17-ի N 985-Ն որոշմամբ 2004 թվականին բնապահպանական ծրագրերի իրականացման համար ընդունված չափաքանակների շրջանակներում:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով ոլորտին (առանց նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախատեսվում է հատկացնել 572.8 մլն դրամի (միջնաժամկետ ծախսերի ծրագրով հաստատված 579.8 մլն դրամ և 2004 թվականի հաստատված բյուջեով նախա-

տեսված 530.1 մլն դրամի դիմաց), որից 500.0 մլն դրամ գումարը ուղղվելու է ընթացիկ ծախսերին, իսկ 72.8 մլն դրամը՝ կապիտալ ծախսերին:

Չկան պաշարների համալրման համար նախատեսված է 10.0 մլն դրամ, որը համապատասխանում է միջնաժամկետ ծախսային ծրագրով 2005 թվականի համար նախատեսված չափաքանակին: Ծրագրով իրականացվելու է Հայաստանի հազվագյուտ և անհետացող ձկնատեսակների արհեստական վերարտադրությունը և դրանց մանրաձկների վերադարձը Սևանա լիճ:

Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման նպատակով նախատեսված է 3.6 մլն դրամ, որի հաշվին իրականացվելու է Սևանա լճում սիգի, կողակի, կարասի, իշխանի, խեցգետնի արդյունագործական պաշարների որոշում և պոպուլյացիայի վիճակի և թվաքանակի գնահատում:

«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը նախատեսվում է 4.0 մլն դրամ (համապատասխանում է միջնաժամկետ ծախսային ծրագրով 2005 թվականի համար նախատեսված չափաքանակին), որի հաշվին իրականացվելու է ՀՀ տարածքում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հաշվառման, ստացված արդյունքների վերլուծության և ընդհանրացման, այդ աշխատանքների պետական գրանցման, հանքավայրերի և օգտակար հանածոների պաշարների հաշվառման, երկրաբանական հաշվետվությունների հավաքագրման և պահպանման ապահովումը:

Բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեությունը ապահովելու համար նախատեսվում է 177.8 մլն դրամ (միջնաժամկետ ծախսային ծրագրով 2005 թվականի համար նախատեսված 178.1 մլն դրամի դիմաց), որից՝

«Սևան» և «Գլխիջան» ազգային պարկերի գործունեությունը ապահովելու համար ծրագրավորվող 95.6 մլն դրամ գումարի հաշվին կատարվելու են ազգային պարկերի բնական էկոհամակարգերի, լանդաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, դիտանցի, ինչպես նաև պարկերում բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումը,

Արգելոցապարկային համալիրի, «Խոսրովի անտառ», «Շիկահող» պետական արգելոցների գործունեության ապահովման համար նախատեսված է 82.2 մլն դրամ՝ միջնաժամկետ ծախսային ծրագրով 2005 թվականի համար նախատեսված 80.9 մլն դրամի դիմաց (ծախսերի ավելացումը 1.3 մլն դրամի չափով պայմանավորված է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում իրականացվող աշխատանքների ծավալների ավելացումով): Նշված գումարի հաշվին կատարվելու են արգելոցների խնամքը, բնության հուշարձանների պահպանությունը, բնության ժառանգության գիտական ուսումնասիրությունները, ինչպես նաև տնկարկների պահպանության և պաշտպանության իրականացումը:

«Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարության և գործողությունների ազգային ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 12-ի N 54 արձանագրային որոշման համաձայն բյուջեի նախագծում ընդգրկվել են հետևյալ ծրագրերը.

2. Բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման աշխատանքներին ուղղվող 4.5 մլն դրամի հաշվին կատարվելու են «Կիրանց», «Արփի», «Որոտան» բնական պարկերի, «Ջերմուկ» ազգային պարկի և «Արփի լիճ» արգելավայրի մշակման աշխատանքները, որոնց կատարման արդյունքում կապահովվի բնության հատուկ պահպանվող տարածքների լանդշաֆտային ամբողջական համալիրի կենսաբազմազանության և բնական անկենդան հուշարձանների ապահովումը, կստեղծվի բնապահպանական և բնօգտագործման հարցերը կառավարող և համակարգող միասնական տարածքա-ֆունկցիոնալ մարմին: Նշված բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման աշխատանքների գծով ծախսերի պակասեցումը 1.0 մլն դրամի չափով միջնաժամկետ ծախսային ծրագրով 2005 թվականի համար նախատեսված գումարի նկատմամբ պայմանավորված է 6 առանձին ծրագրերի փոխարեն 1 միասնական ծրագրի նախատեսմամբ:

3. Հայաստանի բնության հուշարձանների հաշվառման, գույքագրման, անձնագրավորման և ցանկի հաստատման ծրագրի մշակման աշխատանքների համար նախատեսվում է 6.2 մլն դրամ միջնաժամկետ ծախսային ծրագրով 2005 թվականի համար նախատեսված 7.0 մլն դրամի դիմաց:

4. Բնության հատուկ պահպանվող տարածքների կադաստրի ստեղծմանը ուղղվելու է 2.7 մլն դրամ, որը համապատասխանում է միջնաժամկետ ծախսային ծրագրով 2005 թվականի համար նախատեսված չափաքանակին:

5. Նախագծով նախատեսվում է 21.1 մլն դրամի չափով տեխնիկական աջակցություն՝ «Շիկահող» և «Խոսրովի անտառ» պետարգելոցների տեխնիկական վերազինման նպատակով, միջնաժամկետ ծախսային ծրագրով 2005 թվականի համար հաստատված 36.2 մլն դրամի դիմաց: Ծախսերի պակասեցումը պայմանավորված է ձեռքբերվող ավտոտրանսպորտային միջոցների և այլ գույքի քանակների նվազեցմամբ, նկատի ունենալով 2004 թվականի պետական բյուջեով նախատեսված տեխնիկական աջակցությունը:

6. «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքի վերանայման, պահպանական գոտու հստակեցման, սահմանների ճշգրտման և քարտեզագրման աշխատանքների համար նախատեսվում է 19.5 մլն դրամ միջնաժամկետ ծախսային ծրագրով 2005 թվականի համար հաստատված 5.4 մլն դրամի դիմաց: Ծախսերի ավելացումը բացատրվում է աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական աշխատանքների, համակարգչային ցանցի սպասարկման և զարգացման միջոցառումների իրականացմանը նախատեսվում է ուղղել 5.9 մլն դրամ (համապատասխանում է միջնաժամկետ ծախսային ծրագրով 2005 թվականի համար նախատեսված չափաքանակին):

«Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը նախատեսվել է 244.1 մլն դրամ, որի հաշվին իրականացվելու է ՀՀ պետական իշխանության մարմիններին, ազգաբնակչությանը, տնտեսության տարբեր ճյուղերին հիդրոոդերևութաբանական փաստացի պայմանների և դրանց սպասվող փոփոխությունների, կլիմայի ներկա և հետագա վիճակի վերաբերյալ տեղեկատվությամբ ապահովում (համապա-

տասխանում է միջնաժամկետ ծախսային ծրագրով 2005 թվականի համար նախատեսված չափաքանակին):

Հանրապետության ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի իրականացման համար «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը նախատեսվում է հատկացնել 37.9 մլն դրամ (համապատասխանում է միջնաժամկետ ծախսային ծրագրով 2005 թվականի համար նախատեսված չափաքանակին); Ծախսերի աճը 21.6 մլն դրամի չափով 2004 թվականի պետական բյուջեով հաստատված ծախսերի նկատմամբ պայմանավորված է ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգի աշխատանքների ծավալների ավելացումով:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծում երկարաբանահետախուզական աշխատանքներին ուղղվում է 20.0 մլն դրամ (համապատասխանում է միջնաժամկետ ծախսային ծրագրով 2005 թվականի համար նախատեսված չափաքանակին), որի հաշվին իրականացվելու են տարածաշրջանային երկրաբանական, երկրաքիմիական, երկրաֆիզիկական, հիդրոերկրաբանական աշխատանքներ:

Լքված հանքավայրերի պաշարների գույքագրմանը ուղղվելու է 3.0 մլն դրամ (2004 թվականի պետական բյուջեով նախատեսված գումարի չափով), որի հաշվին իրականացվելու են Տավուշի մարզի լքված հանքավայրերի պաշարների ուսումնասիրություն և հաշվառում:

Աղտոտման անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումների տեխնոլոգիական և տարածքային նորմավորման ներդրման մեխանիզմի մշակման աշխատանքներին նախատեսվում է 0.9 մլն դրամ:

Բնապահպանության ոլորտի տեխնիկական կանոնակարգերի մշակման աշխատանքներին ուղղվելու է 2.7 մլն դրամ:

Վնասակար նյութերի արտանետման աղբյուրների և քանակների քարտեզագրման աշխատանքներին նախատեսվում է ուղղել 9.0 մլն դրամ, որի հաշվին իրականացվելու է արդյունաբերական ոլորտների գործունեության արդյունքում առաջացած աղտոտման աղբյուրների գույքագրում, դասակարգում, աղտոտման աղբյուրների տվյալների բազայի ստեղծում և արտանետումների աղբյուրների և քանակների քարտեզագրում:

Այս ոլորտում նախագծված 2005 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը՝ 2003 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2004 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է N 13 աղյուսակում (առանց վարկային ծրագրի):

Բացի այդ 2005 թվականին բնապահպանության բնագավառում շարունակվելու է **Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման վարկային ծրագրի իրականացումը**, որի նպատակն է բնական ռեսուրսների պայմանների բարելավումը՝ կառավարման համակարգի բարեփոխումների միջոցով և գյուղական բնակչության աղքատության նվազեցումը Տավուշի և Գեղարքունիքի մարզերի լեռնային

գոտիներում: Տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում ծրագիրը կնպաստի Հարավային Կովկասի այս տարածաշրջանի յուրահատուկ էկոհամակարգի բարելավմանը և հզորացմանը: Ծրագիրը կստեղծի երկարաժամկետ ֆիսկալ օգուտներ՝ որպես մեծացված տեղական եկամուտների և տեղական հարկերից եկամուտների ու սոցիալական պաշտպանության ավելի ցածր ծախսերի արդյունք: Սոցիալական օգուտներից կլինեն, մասնավորապես, տեղական եկամուտների աճը, աշխատատեղերի թվի ավելացումը, անտառների կառավարումից առաջացած եկամուտների աճը:

2005 թվականի ընթացքում Տավուշի և Գեղարքունիքի մարզերում կիրականացվեն կենսազագի արտադրության ցանցի կառուցման, հեռագնա արտավայրերում ջրարբիացման կետերի կառուցման, առկա դաշտամիջյան ճանապարհների վերակառուցման, սողանքների կայունացման, ջրային էռոզիայի կանխարգելման և փոքր դրամաշնորհների տրամադրման աշխատանքներ՝ ծառատնկման, անտառվերականգնման, համայնքային խոտհարքների բարելավման և վերականգնման, մեղվապահության զարգացման և այլ նպատակներով:

Նախատեսվում է նաև «Հայանտառ» ՊՓԲԸ, ինչպես նաև «Սևան» և «Դիլիջան» Ազգային պարկերի կառավարման և կենսաբազմազանության պահպանության ուղղությամբ տեխնիկական և խորհրդատվական աջակցության տրամադրում: Նախատեսվում է Դիլիջանում և Սևանում արժեքավոր կենսաբազմազանություն ունեցող տարածքների ցանկապատում և դարպասների տեղադրում:

Նշված աշխատանքները զուգակցվելու են խորհրդատվական ծառայություններով, կառավարման պլանների մշակմամբ, սեմինարների և քննարկումների կազմակերպմամբ:

Բնապահպանության ոլորտում 2005 թվականին շարունակվելու է նաև **Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման դրամաշնորհային ծրագիրը:**

Տրանսպորտի և կապի ոլորտին 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 12125.4 մլն դրամ (առանց պետական կառավարման ապարատի), ՀՀ 2004թ. հաստատված պետական բյուջեով նախատեսված 5025.6 մլն դրամի դիմաց, ավելացումը պայմանավորված է ավտոճանապարհների, տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման և պահպանման աշխատանքների ծավալների ավելացումով:

2005թ. բյուջեի նախագծով նախատեսված գումարը համապատասխանում է ՀՀ կառավարության 17.07.04թ. N 985-Ն որոշմամբ հաստատված ՄԺԾԾ-ով սահմանված կողմնորոշիչ չափաքանակին:

Այս ոլորտում 2005թ. բյուջեի նախագծում նախատեսված ծախսերի համեմատությունը՝ ՀՀ 2003թ. բյուջետային տարվա փաստացի և ՀՀ 2004թ. բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է Աղյուսակ N 14:

Մասնավորապես, ճանապարհային տնտեսությունում պետական ներդրումները կկազմեն 10869,4 մլն դրամ:

1.Պետական, մարզային և համայնքային նշանակության ավտոճանապարհների պահպանում և շահագործում (5869.4մլն դրամ)

ՀՀ 2005 թ. պետական բյուջեի նախագծում նախատեսվում է 5869.4 մլն դրամ, 2005թ ՄԺԾԾ-ի կողմնորոշիչ չափաքանակին համապատասխան, ՀՀ 2004թ. հաստատված պետական բյուջեով նախատեսված 2853.3 մլն դրամի դիմաց:

Նշված ծրագրով նախատեսվում է իրականացնել միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանության, միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ նորոգման, նշագծման և ճանապարհային նշանների տեղադրման աշխատանքները, ինչպես նաև մի շարք կամուրջների և թունելների շահագործումը: Նախատեսվում է իրականացնել 6551.0 կմ ավտոճանապարհների ձմեռային պահպանություն, որից 3220.5 կմ միջպետական, հանրապետական և 3330.5 կմ տեղական (մարզային) նշանակության ավտոճանապարհների ընթացիկ նորոգում, 5 կամրջի և 3 թունելի շահագործում և պահպանում:

2. Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում (5,000.0 մլն դրամ)

ՀՀ 2005 թ. պետական բյուջեի նախագծում նախատեսվում է 5000.0 մլն դրամ, 2005թ ՄԺԾԾ-ի կողմնորոշիչ չափաքանակին համապատասխան, ՀՀ 2004թ. հաստատված պետական բյուջեով նախատեսված 973.1 մլն դրամի դիմաց:

Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում ծրագիրը նախատեսվում է իրականացնել ՀՀ նախագահի հանձնարարականներով, ՀՀ կառավարության և ՀԲ-ի միջև կնքված Մայրուղիների և Տրանսպորտի վարկային ծրագրերի համաձայնագրերի պայմաններով նախատեսված և գարնանային հեղեղումներից քանդված ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքները: Նախատեսվում է հիմնանորոգել շուրջ 87.06 կմ ավտոճանապարհներ:

3. Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում (559.0 մլն դրամ)

ՀՀ 2005 թ. պետական բյուջեի նախագծում նախատեսվում է 559.0 մլն դրամ, 2005թ ՄԺԾԾ-ի կողմնորոշիչ չափաքանակին համապատասխան, ՀՀ 2004թ. հաստատված պետական բյուջեով նախատեսված 281.6 մլն դրամի դիմաց:

Նշված ծրագրով նախատեսվում է իրականացնել ՀՀ կառավարության 02.07.2001թ. N 591 որոշմամբ հաստատված ՀՀ ճանապարհային վթարավտանգ տեխնիկական վիճակում գտնվող կամրջային կառուցվածքների հիմնանորոգման աշխատանքները, որից 150.0 մլն դրամը նախատեսվում է հատկացնել ավտոճանապարհների վրա գտնվող կամուրջների վերանորոգմանը, իսկ 409.0 մլն դրամը երկաթուղային կամուրջների վերականգնման ու ուժեղացման աշխատանքների իրականացման համար: Աշխատանքների անհրաժեշտությունից և առաջնահերթությունից ելնելով ավտոճանապարհների վրա գտնվող կամուրջների վերանորոգման համար 2005թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 195.8 մլն դրամ:

Տրանսպորտի վարկային ծրագիրն ավարտվել է 2004 թվականի դեկտեմբերի 31-ին, իսկ 2005 թվականին նախատեսվում է կատարել Տրանսպորտի ծրագրի, ինչպես նաև «Հայաստանի Ավտոմոբիլային ճանապարհներ» ՓԲԸ-ի 2004 թվականի գործունեության արդյունքների աուդիտը:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ներկայացված ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի հաշվին նախատեսվող կադաստրի բնագավառի կապիտալի գծով կանխատեսվող ծախսերը համապատասխանում է ՀՀ կառավարության 17.06.2004 թ. N 985-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2005-2007 թվականների պետական միջնաժամկետ ծախսային ծրագրով կադաստրի ոլորտի համար նախատեսված չափաքանակներին:

1. *Կադաստրային քարտեզագրում՝ առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացում՝ 120,000.0 հազար դրամ:*

Ծրագրի իրականացման նպատակը ՀՀ Շիրակի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի համայնքների վարչական սահմաններից դուրս՝ մարզերի վարչական տարածքների կադաստրային քարտեզների ստեղծումն ու հանրապետության 6 մարզերի 25 համայնքներում կադաստրային քարտեզների քարմացման աշխատանքների իրականացումն է:

2. «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ավտոմատացված համակարգում իրականացվող աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքների պետական պատվեր՝ 18,000.0 հազար դրամ:

Իրականացվելու են աշխարհագրական անվանումների հաշվառման գրասենյակային, դաշտային, աշխատանքներ, 929 համայնքների աշխարհագրական անվանումների գրանցման ձևաթղթերի լրացում, 430 համայնքների գրանցված աշխարհագրական անվանումների մուտքագրում, գրանցման մատյանների կազմում և այլն:

Կատարվելու են աշխատանքներ աշխարհագրական անվանումների ավտոմատացված համակարգի ներդրման և նախորդ տարիների հավաքագրված տվյալների մուտքագրման կապակցությամբ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2005թ. ընթացքում կազմել և հրատարակել 1000 օրինակ ՀՀ վարչատարածքային բաժանման տեղեկատու:

3. «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող Հայաստանի ազգային ատլասի ստեղծման աշխատանքների պետական պատվեր՝ 43,000.0 հազար դրամ:

Հ2005թ. ընթացքում ակնկալվում է ավարտել Ատլասի հեղինակային օրինակների ստեղծման, խմբագրման, կազմման և ձևավորման աշխատանքները, հրատարակել Հայաստանի Ազգային ատլասի Ա և Բ հատորները:

4. «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների ստեղծման և օդալուսանկարահանման աշխատանքների իրականացման պետական պատվեր՝ 350,600.0 հազար դրամ:

Իրականացվելու է նոր առաջացած գույքային միավորների հանութագրման աշխատանքներ, որից հետո օդալուսանկարահանված նյութերի դաշտային վերծանման լրացուցիչ աշխատանքներ,

այնուհետև օդալուսանկարահանման նյութերի դաշտային վերծանման և պլանաբարձունքային հիմքի ապահովման, տիեզերանկարահանման նյութերի դաշտային վերծանման և պլանաբարձունքային հիմքի ապահովման, 1: 10000 մասշտաբի տեղագրական քարտեզների մշակման և թվայնացման աշխատանքներ:

5. «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող քարտեզագրված միավորների թվայնացման աշխատանքների պետական պատվեր՝ 27,000.0 հազար դրամ:

Ծրագրի նպատակը ՀՀ Շիրակի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի համայնքների վարչական սահմաններից դուրս՝ մարզի ենթակայության տակ գտնվող տարածքների կադաստրային դաշտային հանութագրման արդյունքում ստացված նյութերի թվայնացումն է:

6. «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գեոդեզիական աշխատանքների իրականացման (WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում նոր գեոդեզիական ցանցի ստեղծման աշխատանքների շարունակություն) պետական պատվեր՝ 133,924.2 հազար դրամ:

7. Զաղաքների տարածքում WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում 2-րդ դասի ցանկի ստեղծում և II,III դասի նիվիլիրացման ցանցի նիվիլիրացում, հավասարակշռում և կատալոգի կազմում՝ 60,275.8 հազար դրամ:

Ծրագրերի իրականացման ընդհանուր նպատակը՝ ՀՀ տարածքում պետական գեոդեզիական պլանային և բարձունքային ցանցի արդիականացումն է:

Նախատեսվում է իրականացնել WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում 2-րդ դասի ցանկի ստեղծման և II,III դասի նիվիլիրացման ցանցի նիվիլիրացման, հավասարակշռման և կատալոգի կազմման աշխատանքներ:

8. «Հողչինմոնիթորինգ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող ՀՀ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի գնահատման աշխատանքների իրականացման գծով պետական պատվեր՝ 70,000.0 հազար դրամ:

Գյուղատնտեսական նշանակության հողերի գնահատման նպատակով իրականացվելու են հողերի որակական հատկանիշների ուսումնասիրության, դրա փոփոխության, բուսականության կազմի ու տեսակի ուսումնասիրության դաշտային, ինչպես նաև լաբորատոր աշխատանքներ:

9. Գույքահարկի և հողի հարկի բազայի ստեղծման նպատակներով անշարժ գույքի՝ այդ թվում հողերի կադաստրային գնահատման աշխատանքների իրականացում՝ 40,000.0 հազար դրամ:

Իրականացվելու է հողերի կադաստրային գնահատման աշխատանքներ հողի հարկի բազայի ստեղծման նպատակով, որի արդյունքները տրամադրվելու են տեղական ինքնակառավարման և հարկային մարմիններին:

10. Գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացում և սեփականության իրավունքի վկայականների տրամադրում՝ 75,000.0 հազար դրամ:

Գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքներն ու սեփականության իրավունքների վկայականների տրամադրումը իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Նախատեսվում է գրանցել շուրջ 480 հազար անշարժ գույք, որից 80 հազարը ընթացիկ գործունեության արդյունքում, իսկ 400 հազարը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման գործընթացի շրջանակներում:

11. Անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ներդրում, զարգացում և տեղեկատվական բանկի սպասարկում՝ 296,100.0:

Իրականացվելու է կադաստրային գործերի էլեկտրոնային արխիվների հանրապետական տեղեկատվական բանկի ստեղծման, գերատեսչական ցանցի սպասարկման, համակարգչային տեխնիկայի, նոր տեխնիկայի, ծրագրային փաթեթների ձեռքբերման և արդիականացման, աշխատակիցների վերապատրաստման, ինչպես նաև ինտերնետի միջավայրում անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման աշխատանքներ:

12. Երկրատեղեկատվական համակարգի նախագծում, ներդրում և սպասարկում՝ 50,000.0 հազար դրամ:

Իրականացվելու են երկրատեղեկատվական համակարգի վարման փորձնական ավտոմատացված համակարգի նախագծման և մշակման, 1:500 մասշտաբի կադաստրային հանույթների թարմացման ռելեֆի տարերի, թեմատիկ շերտերի ստեղծման, ստորգետնյա հաղորդակցուղիների հանութագրման և շահագործող կազմակերպությունների հետ համաձայնեցման, կետերի կոորդինատների և բացարձակ բարձրությունների հաշվարկման, կատալոգի կազմման աշխատանքներ:

13. Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրում՝ 30,000.0 հազար դրամ:

Նախատեսվում է 2005 թ. ընթացքում տրամադրել մոտավորապես 60000 անվճար տեղեկատվություն և ապահովել կադաստրի տեղեկատվության անընդհատությունը:

14. «Հողինմոնիթորինգ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող անշարժ գույքի գնահատման նոր համակարգի ներդրման նպատակով հողի և դրա վրա գտնվող շենքերի և շինությունների և անշարժ գույքի համակարգված դիտարկումների իրականացման պետական պատվեր՝ 55,000.0 հազար դրամ:

Իրականացվելու են անշարժ գույքի համակարգված դիտարկումներ, գնային իրավիճակի վերլուծություններ, որոնց արդյունքները պարբերաբար հրապարակվելու են մամուլում՝ հասարակության լայն շերտերին շուկայի իրավիճակի մասին իրազեկելու նպատակով: Տվյալները տրամադրվելու են նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին:

15. ՀՀ վարչատարածքային միավորների սահմանների նկարագրություն և վարչատարածքային նոր բաժանման կազմակերպում ու իրականացում՝ 110,000.0 հազար դրամ:

Ծրագրի նպատակը հանրապետության ամբողջ տարածքում տեղական ինքնակառավարման իրականացումն է, որի արդյունքում կհստակեցվեն և կտարանջատվեն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները՝ ձևավորելով հողային ռեսուրսների կառավարման ավելի արդյունավետ համակարգ:

16. «Հողինձոնիթորինգ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող ՀՀ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքների սկզբնական հաշվառման տվյալների ստեղծման և թարմացման աշխատանքների պետական պատվեր՝ 20,000.0 հազար դրամ:

Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող բոլոր տեսակի հողերի սկզբնական հաշվառման նպատակով իրականացվելու է առկա հատակագծերի ճշգրտում, սահմանակից հողօգտագործողների հետ վարչական սահմանների համակցում, տվյալների հավաքագրում և ճշգրտում, ամփոփ տվյալների ստեղծում, պարզաբանագրի և հողային հաշվեկշռի կազմում:

Անշարժ գույքի կադաստրի բնագավառի ծախսերի համեմատությունը՝ նախորդ տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ, արտացոլված է սույն բացատրագրի N 15 աղյուսակում:

Պաշտպանության բնագավառի ծախսերը ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են 53,747.4 մլն դրամի չափով, որից ռազմական կարիքների բավարարման համար նախատեսվել է հատկացնել 49,962.1 մլն դրամ:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով պաշտպանության բնագավառի այլ ծախսերը հաշվարկվել են 3,669.0 մլն դրամ, որոնք ՀՀ 2004 թվականի հաստատված պետական բյուջեի ցուցանիշի նկատմամբ աճել են 319.0 մլն դրամով:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով պաշտպանության բնագավառում նախատեսված է նաև այլընտրանքային ծառայության կազմակերպման համար միջոցներ, որի ընդհանուր գումարը կազմում է՝ 77.4 մլն դրամ, որից ՀՀ պաշտպանության նախարարության գծով նախատեսվել է՝ 58.3 մլն դրամ, ՀՀ առողջապահության նախարարության գծով՝ 13.2 մլն դրամ և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գծով՝ 5.9 մլն դրամ:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով պաշտպանության բնագավառում նախատեսված է նաև զորակոչիկներին վարորդական իրավունքի վկայականների տրման և քննությունների ընդունման ծախսեր, որի գումարը կազմում է՝ 38.9 մլն դրամ:

Հասարակական կարգի պահպանություն համակարգերի ծախսերի ֆինանսավորմանը 2005 թվականի պետական բյուջեից նախատեսվում է ուղղել 22.754.5 մլն դրամ: Նշված ծախսերը ներառում

են ոստիկանության, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների և քրեակատարողական համակարգերի ծախսերը: Մասնավորապես՝

ա) Ոստիկանության 2005 թվականի պահպանման ծախսերը նախատեսվել են 11,633.0 մլն դրամի չափով, որից 10,001.0 մլն դրամն ուղղվելու է ընթացիկ ծախսերի, 1,632.0 մլն. դրամը՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորմանը, որը ավել է նախատեսված ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 17-ի «ՀՀ կառավարության 2005-2007 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 985-Ն որոշմամբ 2005 թվականին հասարակական կարգի պահպանման ծրագրերի իրականացման համար նախատեսված չափաքանակից 1,382.0 մլն դրամով:

Գրասենյակային ապրանքների և նյութերի, գույքի ու սարքավորումների, այլ նյութերի և սարքավորումների ձեռքբերման, գործուղումների և ծառայողական ուղևորությունների, տրանսպորտի և կապի ծառայությունների վճարների, վառելիքի և ջեռուցման ծախսերի, ջրմուղ-կոյուղուց օգտվելու վարձերի և ներկայացուցչական ծախսերի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները հաշվարկվել են հիմնականում 2004 թվականի մակարդակով՝ ընթացիկ տարվա գներով և սակագներով:

Նախահաշվի այլ հոդվածներով նախատեսված ծախսերի համար անհրաժեշտ գումարների հաշվարկը կատարվել է հետևյալ կերպ:

Աշխատավարձի ֆոնդը և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումները 2005 թվականին ծրագրավորվել են 4,906.1 մլն դրամի չափով: Հաշվարկը կատարվել է ՀՀ վարչապետի 1999 թվականի ապրիլի 16-ի N 226 և 2000 թվականի նոյեմբերի 16-ի N 762 որոշումներով սահմանված պաշտոնային դրույքաչափերի ու զինծառայողների թվակազմին համապատասխան:

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները հաշվարկվել են 120.0 մլն. դրամի չափով՝ «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Նպաստները, ոստիկանության համակարգից զինծառայողների սահմանված կարգով արձակվելու, ինչպես նաև երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու դեպքում տրվող նպաստները հաշվարկվել են 160.0 մլն դրամի չափով՝ ելնելով արձակվողների կանխատեսվող թվաքանակից և «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներից:

Աննդի ձեռքբերման ծախսերը հաշվարկվել են 1,434.8 մլն դրամի չափով, որից 1,017.0 մլն դրամը՝ համակարգի սպաների և ենթասպաների պարենային բավարարման համար (ՀՀ կառավարության 1998 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ սահմանված նորմատիվին համապատասխան), իսկ 417.8 մլն դրամը՝ ոստիկանության ծառայության համակարգի ներքին զորքերի և այլ հիմնարկների աշխատողների սննդի համար համար:

Այլ ծախսեր հոդվածով նախատեսվել է՝ 954.2 մլն դրամ, որից 558.7 մլն դրամը կազմում են ոստիկանության «Պահպանություն» միավորման պահպանման ծախսերը, որոնք նախորդ տարվա մակարդակից պակաս են նախատեսվել 21.3 մլն դրամով, պահպանելով ՀՀ կառավարության 2004

թվականի հունիսի 17-ի «ՀՀ կառավարության 2005-2007 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 985-Ն որոշմամբ սահմանված մակարդակը:

Ոստիկանության 2005 թվականի կապիտալ ծախսերը նախատեսվել են 1,632.0 մլն դրամի չափով, որն ուղղվելու է համակարգի օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը (1,602.0 մլն դրամ), ինչպես նաև համակարգի աշխատակիցների համար բնակարանների ձեռքբերմանը (30.0 մլն դրամ):

Քաջի այդ ՀՀ անձնագրերի բլանկների տպագրության և պետավտոհամարանիշների ձեռքբերման նպատակով նախատեսված է համապատասխանաբար՝ 133.7 մլն դրամ և 120.7 մլն դրամ հատկացումներ:

բ) Ազգային անվտանգության ապահովման գծով 2005 թվականի պահպանման ծախսերը նախատեսվել են 7009.7 մլն դրամի չափով, որից 6,293.2 մլն դրամն ուղղվելու է ընթացիկ ծախսերի, 716.5 մլն դրամը՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորմանը, որը ավել է ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 17-ի «ՀՀ կառավարության 2005-2007 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 985-Ն որոշմամբ 2005 թվականին անվտանգության ապահովման ծրագրերի իրականացման համար նախատեսված չափաքանակից 304.0 մլն դրամով: Նշված ծախսերն իր մեջ է ներառում նաև «Հատուկ պետական պահպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն ստեղծված ՀՀ պետական պահպանության ծառայության 2005 թվականին նախատեսվելիք ծախսերը՝ 738.4 մլն դրամ:

Գրասենյակային ապրանքների ու նյութերի, գույքի ու սարքավորումների, այլ նյութերի և սարքավորումների ձեռքբերման, գործուղումների և ծառայողական ուղևորությունների, տրանսպորտային և կապի ծառայությունների վճարների, վառելիքի և ջեռուցման ծախսերի, ներկայացուցչական ծախսերի, ինչպես նաև օբյեկտների հիմնանորոգումների ծախսերի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները հաշվարկվել են հիմնականում 2004 թվականի մակարդակով՝ ընթացիկ տարվա գներով և սակագներով: Ջրմուղ-կոյուղուց օգտվելու վարձերի գծով տեղի է ունեցել 2004 թվականի նկատմամբ աճ, նկատի ունենալով 2005 թվականի ապրիլ ամսին տեղի ունեցած սակագների աճը:

Նախահաշվի այլ հոդվածներով նախատեսված ծախսերի համար անհրաժեշտ գումարների հաշվարկը կատարվել է հետևյալ կերպ.

Աշխատավարձի ֆոնդը և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումները 2005 թվականի ծրագրավորվել են 2,432.8 մլն դրամի չափով: Հաշվարկը կատարվել է ՀՀ վարչապետի 1999 թվականի ապրիլի 16-ի N 226 և 2000 թվականի նոյեմբերի 16-ի N 762 որոշումներով սահմանված պաշտոնային դրույքաչափերի ու զինծառայողների թվակազմին համապատասխան:

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները հաշվարկվել են 25.0 մլն դրամի չափով՝ «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Սննդամթերքի ձեռքբերման ծախսերը հաշվարկվել են 958.8 մլն դրամի չափով, որից 487.8 մլն դրամը՝ համակարգի սպաների և ենթասպաների պարենային բավարարման համար, իսկ 471.0 մլն

դրամը՝ ազգային անվտանգության ծառայության համակարգի պարտադիր զինծառայողների սննդի համար:

Այլ ծախսային հոդվածներով (օպերատիվ աշխատանքների իրականացման համար) ծրագրավորվել է 105.2 մլն դրամ:

Ազգային անվտանգության 2005 թվականի կապիտալ ծախսերը նախատեսվել են 716.5 մլն դրամի չափով, որն ուղղվելու է համակարգի օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը (554.0 մլն դրամ), ինչպես նաև կապիտալ ակտիվների ձեռքբերմանը (162.5 մլն դրամ):

գ) Արտակարգ իրավիճակների համակարգի ծախսերը նախատեսվել են 1,720.0 մլն դրամի չափով (որից ստորաբաժանումների պահպանման ծախսերը՝ 1,683.0 մլն դրամ և մթնոլորտային երևույթների ակտիվ ներգործունեության ծառայության գծով 36,966.0 հազար դրամ), որոնք ՀՀ 2004 թվականի հաստատված պետական բյուջեի ցուցանիշի նկատմամբ աճել են համապատասխանաբար՝ 118.4 մլն դրամով և 22,657.0 հազար դրամով՝ կապված Աշտարակի և Թումանյանի ռադիոլոկացիոն դիտարկումների կենտրոնների վերազինման հետ:

դ) Քրեակատարողական համակարգի 2005 թվականի պահպանման ծախսերը նախատեսվել են 2,137.4 մլն դրամի չափով, որը ամբողջությամբ ուղղվելու է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը:

Գրասենյակային ապրանքների և նյութերի ձեռքբերման, գույքի և սարքավորումների, փափուկ գույքի և հանդերձանքի, այլ նյութերի և սարքավորումների, դեղորայքի ու վիրակապային նյութերի, գործուղումների և ծառայողական ուղևորությունների, ինչպես նաև կապի ծառայությունների ծախսերը ծրագրավորվել են հիմնականում 2004 թվականի մակարդակով:

Վարչության պետական հիմնարկների պահպանման նախահաշվի այլ հոդվածներով նախատեսված ծախսերի համար անհրաժեշտ գումարների հաշվարկը կատարվել է հետևյալ կերպ:

Աշխատավարձի ֆոնդը և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումները 2005 թվականին ծրագրավորվել են 481.4 մլն դրամի չափով, որը պահպանվել է 2004 թվականի մակարդակով:

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումները հաշվարկվել են 24.6 մլն դրամի չափով՝ «Պարտադիր սոցիալական ապահովագրական վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Նպաստները. ելնելով «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներից՝ նպաստները ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են 25.0 մլն դրամի չափով, որոնք տրվում են քրեակատարողական համակարգի ծառայողներին առողջության, տարիքի ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու դեպքում:

Սննդի ձեռքբերման ծախսերը հաշվարկվել են 642.4 մլն դրամի չափով, որից 132.4 մլն դրամ՝ համակարգի սպաների և ենթասպաների պարենային բավարարման համար, ՀՀ կառավարության կողմից սահմանված չափաքանակին համապատասխան, իսկ 510.0 մլն դրամ հատուկ կոնտինգենտին՝ վարչության պետական հիմնարկների հատուկ քանակակազմի և սպառման ապրանքների

ընթացիկ տարվա գործող գներից ու սակագներից ելնելով, որը մեկ կալանավորի հաշվով օրական կազմում է 466 դրամ:

Սեփական տրանսպորտի պահպանման ծախսեր. համակարգում հաշվառված է 90 միավոր մարդատար և բեռնատար ավտոմեքենա: Նշված փոխադրամիջոցները վառելի-քով, քսայուղերով, պահեստամասերով և անվադողերով ապահովելու համար նախատեսվել է 80.0 մլն դրամ:

Այլ ծախսեր. կալանավորվածներին և դատապարտյալներին սանիտարահիգիենիկ և կեն-ցաղային պարագաներով ու նյութերով ապահովելու նպատակով նախատեսվել է 24.5 մլն դրամ 2004 թվականի մակարդակով:

ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆՆԵՐԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի պահանջներին համապատասխան համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման դոտացիաների տեսքով տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը հաշվարկվում է հիմք ընդունելով նախորդ բյուջետային տարում ՀՀ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի ոչ պակաս, քան **4 %-ը**: Հաշվի առնելով նշված պահանջը և հիմք ընդունելով նախորդ՝ 2003 թվականի բյուջետային տարվա համախմբված բյուջեի փաստացի եկամուտների գումարի չափը (**343,3 մլրդ դրամ**), ինչպես նաև ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրավորվող բյուջետային մուտքերի ընդհանուր ծավալը 2005 թվականին ՀՀ համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման դոտացիաներ տրամադրելու նպատակով պետական բյուջեի նախագծում նախատեսվում են շուրջ **13,752.0 մլն դրամ** հատկացումներ (ՀՀ 2003 թվականի համախմբված բյուջեի փաստացի եկամուտների **4%-ի** չափով), որը գերազանցում է 2004 թվականի համար նախատեսված և սպասողական տարեկան համապատասխան ցուցանիշները **3,056.0 մլն դրամով** կամ **28,6 %-ով**, իսկ 2003 թվականի փաստացի մակարդակը՝ **4,600.0 մլն դրամով կամ 1,5 անգամ**:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների բաշխումն ըստ առանձին համայնքների նախատեսվում է իրականացնել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի համապատասխան, մասնավորապես.

1. 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող յուրաքանչյուր համայնքի բյուջեին ՀՀ 2005 թվականի պետական բյուջեից առաջարկվում է ֆինանսական համահարթեցման դոտացիայի տեսքով տրամադրել **1.5 մլն դրամ**:

2. Մյուս համայնքներին (բացառությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշենի համայնքին) հասանելիք դոտացիաները հաշվարկել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված «ա» և «բ» գործոններով: Ընդ որում «ա» գործոնով դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվել են ըստ յուրաքանչյուր համայնքի հաշվարկված հողի հարկի և գույքահարկի

2003 թվականի հաշվարկային ընդհանուր գումարները. այն է՝ 2003 թվականին համայնքների բյուջեներ այդ հարկերի հարկատուների կողմից վճարման ենթակա գումարները, որոնք

- պակասեցվել են 2003 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա չմարված ապառքների, տույժերի և տուգանքների, ինչպես նաև 2003 թվականին հաշվարկված տույժերի և տուգանքների գումարների չափով,

- ավելացվել են ֆիզիկական անձանց և կազմակերպություններին «Գույքահարկի մասին», «Գյումրի քաղաքի վերականգնման մասին», «Հողի հարկի մասին» և «Հողի հարկի արտոնությունների մասին» ՀՀ օրենքներով հողի հարկի և գույքահարկի գծով, ինչպես նաև համայնքների ավագանիների որոշումներով (ավագանիներին օրենքով տրված իրավասության սահմաններում) գույքահարկի գծով տրված արտոնությունների գումարների չափով:

Միաժամանակ հարկ է նշել, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն ՀՀ Ազգային Ժողովի ընդունած օրենքներով՝ համայնքների եկամուտների նվազեցումը և ծախսերի ավելացումը պետք է փոխհատուցի պետությունը: Մասնավորապես «Գույքահարկի մասին», «Գյումրի քաղաքի վերականգնման մասին», «Հողի հարկի մասին» և «Հողի հարկի արտոնությունների մասին» ՀՀ օրենքներով ֆիզիկական անձանց և կազմակերպություններին հողի հարկի և գույքահարկի գծով տրված արտոնությունների 2003 թվականի ընդհանուր գումարը (համայնքների 2003 թվականի բյուջեների եկամուտների՝ հողի հարկի և գույքահարկի գծով մուտքերի կորուստը) կազմում է՝ **85,2 մլն դրամ**: Վերը նշված արտոնությունների տրման արդյունքում այդ հարկերի գծով ՀՀ համայնքների բյուջեների 2003 թվականի ֆինանսական կորուստների գումարների փոխհատուցման ծախսերը առաջարկվում է, ինչպես և 2004 թվականին, ներառել ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված՝ համայնքների բյուջեներին հատկացվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարում:

Հարկ է նշել, որ ընթացքի մեջ է ՀՀ հարկային պետական մարմինների կողմից ֆիզիկական անձանց գույքահարկի հաշվարկների ավտոմատացված համակարգի հանձնումը համայնքներին: Այդ կապակցությամբ 2004 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ ֆիզիկական անձանց գույքահարկի հաշվարկները ինքնուրույն ավտոմատացնող համայնքների գծով 2005 թվականի ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվել են այդ համայնքների ղեկավարների կողմից ՀՀ պետական հարկային մարմնին հայտնած ելակետային տվյալները:

Այսպիսով ՀՀ 2005 թվականի պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի ընդհանուր գումարը (**13,752.0 մլն դրամ**) առաջարկվում է բաշխել ինչպես «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված գործոններով, այնպես էլ ուղղել ՀՀ օրենքներով հարկատուներին գույքահարկի և հողի հարկի գծով հարկային արտոնությունների տրամադրման արդյունքում այդ հարկերի գծով ՀՀ համայնքների բյուջեների 2003 թվականի կորուստների (**85,2 մլն դրամ**) փոխհատուցմանը: Միաժամանակ առաջարկվում է ՀՀ օրենքներով հարկատուներին գույքահարկի և հողի հարկի գծով հարկային արտոնությունների տրամադրման արդյունքում այդ հարկերի գծով ՀՀ համայնքների բյուջեներին 2004 թվականի բյուջետային տարվա

արդյունքներով հաշվարկված կորուստների փոխհատուցումը իրականացնել չէ 2006 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին:

Հարկ է նշել նաև, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ չէ Գեղարքունիքի մարզի Արծվաշենի գյուղական համայնքի համապատասխան ցուցանիշները հայտնի պատճառներով չեն կարող կիրառվել ֆինանսական համահարթեցման դոտացիաների բաշխման հաշվարկներում, նշված համայնքի ղեկավարի աշխատակազմի 2005 թվականի պահպանման ծախսերի գծով չէ 2005 թվականի պետական բյուջեի նախագծում առանձին տողով նախատեսվել են շուրջ **3 մլն դրամի** չափով հատկացումներ:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» չէ օրենքով սահմանված կարգով՝ «Արմենիան Թափր Փրոգրամ» ՓԲԸ-ի, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի և «Ազարակի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող համապատասխանաբար չէ Լոռու մարզի Ալավերդի համայնքի և չէ Սյունիքի մարզի Քաջարան ու Ազարակ համայնքների կողմից չէ բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ներկայացված բյուջետային ֆինանսավորման հայտերի հիման վրա՝ հաշվի առնելով նշված ընկերությունների կողմից 2003 թվականի արդյունքներով պետական բյուջե փաստացի վճարված բնապահպանական վճարների գումարները, նշված համայնքների բյուջեներին բնապահպանական սուբսիդիաների տրամադրման նպատակով չէ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են **10.7 մլն դրամ** գումարի չափով հատկացումներ (մասհանումներ), որից Ալավերդի համայնքին՝ **0.2 մլն դրամ**, Քաջարան համայնքին՝ **10.4 մլն դրամ** ու Ազարակ համայնքին՝ **0.1 մլն դրամ**: Այլ համայնքների գծով համանման սուբվենցիաների տրամադրում չէ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով չի նախատեսված, նրանց կողմից համապատասխան բյուջետային ֆինանսավորման հայտերի չներկայացման, ինչպես նաև «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» չէ օրենքով սահմանված ձեռնարկությունների կողմից չէ 2003 թվականի պետական բյուջե բնապահպանական վճարների գծով փաստացի մուտքերի բացակայության պատճառով:

Չէ 2005 թվականին պետական բյուջեից եկամտահարկի և շահութահարկի գծով «Տեղական ինքնակառավարման մասին» չէ օրենքի 57-րդ հոդվածով սահմանված մասհանումների իրականացում չէ համայնքների բյուջեներին չեն նախատեսված՝ հաշվի առնելով համայնքների միջև այդ հարկերի անհամամասնորեն ձևավորումը, պայմանավորված հանրապետությունում տնտեսաարտադրական կարողությունների ու ազգաբնակչության, ըստ համայնքների, տարիներ ի վեր ձևավորվող խիստ անհամաչափ տեղաբաշխման հանգամանքներով: Այսպես հանրապետության մշտական բնակչության շուրջ 40%-ը բնակվում է 55 հազար մարդուց ոչ պակաս բնակչություն ունեցող 10 համայնքներում (որից 8-ը Երևան քաղաքի թաղային համայնքներն են), շուրջ 40%-ը բնակվում է 10 հազար մարդուց ոչ ավելի բնակչություն ունեցող 885 համայնքներում, իսկ մնացած 20%-ը բնակվում է 10 հազար մարդուց ավելի բայց 55 հազար մարդուց պակաս բնակչություն ունեցող 30 համայնքներում: Գրա հետ մեկտեղ 2002 թվականին՝ շահութահարկ վճարող են հանդիսացել և վճարումներ են կատար-

րել հանրապետության 925 համայնքներից 303 համայնքներում և եկամտահարկի գծով՝ 836 համայնքներում գրանցված հարկատուները (հարկային գործակալները), իսկ 2003 թվականին՝ համապատասխանաբար 287 և 862 համայնքներում գրանցված հարկատուները (հարկային գործակալները): Ընդ որում, եկամտահարկի ամբողջ գումարի 87,1%-ը, իսկ շահութահարկի 89,9%-ը բաժին են ընկնում Երևան քաղաքի թաղային համայնքներին, որտեղ բնակվում է հանրապետության մշտական բնակչության 33,9%-ը, այդ թվում Կենտրոն թաղային համայնքի (որտեղ բնակվում է հանրապետության մշտական բնակչության 4%-ը) բաժինն ընկնում է համապատասխանաբար 63,9%-ը և 57,0%-ը: Հետևաբար նշված պայմաններում մասհանումների համակարգը միտված կլինի սակավաթիվ, հիմնականում Երևան քաղաքի, համայնքների ֆինանսական բազայի ամրապնդմանը՝ էլ ավելի մեծացնելով համայնքների միջև առկա ֆինանսական անհավասարության աստիճանը:

Էականորեն կոժվարացնի և անարդյունավետ կղարձնի մասհանումների գործընթացը հարկ վճարողի եկամուտների ձևավորման վայրի վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու անհնարի-նությունը, քանի որ շատ դեպքերում հարկ վճարողի գրանցման վայրը չի համընկնում հարկ վճարողի գործունեության իրականացման վայրերի հետ: Հարկ է նշել, որ դեռևս 1998-1999 թվականներին օրենքի պահանջի համապատասխան համայնքների բյուջեներին կատարվում էին եկամտահարկի գումարների մասհանումներ: Սակայն վերը նշված հիմնախնդիրների առկայությունը ցույց տվեց մասհանումների իրականացման բացարձակ անարդյունավետությունը, որից ելնելով էլ օրենքում կատարվեցին համապատասխան փոփոխություններ, որոնց համաձայն՝ համայնքների բյուջեներին եկամտահարկից մասհանումների կատարումը 2000 թվականից դադարեցվեց:

Հաշվի առնելով վերոնշարադրյալը, ինչպես նաև համայնքների բյուջեներին շահութահարկի ու եկամտահարկի գումարներից մասհանումների գործընթացն ի սկզբանե չվարկաբեկելու նկատառումով, գտնում ենք, որ մասհանումների կատարման հարցին նպատակահարմար է անդրադառնալ վերը նշված հիմնախնդիրների կարգավորման հստակ մեխանիզմների մշակումից հետո:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեով նախատեսվող ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի ծավալը ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսված է **2,301.7 մլն դրամ** (ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի ընդհանուր ծավալի **0.6 %-ը**): Վերը նշված ֆոնդի միջոցների օգտագործումն կիրականացվի «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջների համապատասխան:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են նաև հատկացումներ նյութական ռեսուրսների պետական պահուստի պահպանման և ձևավորման, ինչպես նաև ՀՀ պետական

ռեզերվների գործակալության համակարգի ստորաբաժանումների պահպանման համար, համապատասխանաբար **44.7 մլն դրամի, 3,172.0 մլն դրամի և 73.6 մլն դրամի** չափով:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով գուտ վարկավորման ընդհանուր ծավալը ծրագրավորված է 11.8 մլրդ դրամի չափով: Նշված գումարն իրենից ներկայացնում է ՀՀ պետական բյուջեից տրամադրվելիք բյուջետային վարկերի ընդհանուր գումարի և նախկինում տրամադրված բյուջետային վարկերի մարումներից ստացվելիք մուտքերի ընդհանուր գումարի տարբերությունը:

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեից տրամադրվելիք վարկերի ընդհանուր գումարը նախատեսվում է սահմանել 14.5 մլրդ դրամի չափով: Մասնավորապես,

- Հայաստանի Հանրապետության կողմից ցուցաբերվող արտաքին տնտեսական աջակցության շրջանակներում բյուջետային վարկեր տրամադրելու համար առանձնացվել են 13,636.4 մլն դրամի չափով հատկացումներ՝ դրանք ամբողջությամբ ԼՂՀ-ին բյուջետային վարկի տրամադրմանը ուղղելու նպատակով.

- Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի կողմից իրականացվող գյուղատնտեսական ծառայությունների ծրագրի շրջանակներում տնտեսվարող սուբյեկտներին աջակցություն ցուցաբերելու համար ՀՀ պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միջոցով նախատեսվում տրամադրել 749.0 մլն դրամ բյուջետային վարկեր.

- «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան բռնադատված քաղաքացիներին կամ նրանց առաջին հերթի ժառանգներին բնակարանային շինարարության նպատակով երկարաժամկետ արտոնյալ վարկեր տրամադրելու համար նախատեսվել են 150.0 մլն դրամի չափով հատկացումներ.

Դրա հետ մեկտեղ ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են նաև 2.4 մլրդ դրամի չափով մուտքեր՝ Վրաստանից, Բելոռուսի Հանրապետությունից և «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ-ից՝ նախորդ տարիներին իրենց տրամադրված բյուջետային վարկերի մարումից:

ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2004թ.-ին «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է ապահովել 5,300.0 մլն. դրամ դեֆիցիտի ֆինանսավորում, և կատարել 7,600.0 մլն. դրամ սպասարկման ծախս:

2004թ-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ թողարկվել է 32.50 մլրդ դրամ անվանական արժեքով պարտատոմսեր, որն ամբողջությամբ տեղաբաշխվել է: Պարտատոմսերի տեղաբաշխումից հասույթը կազմել է 32.45 մլրդ դրամ: 2004թ-ի ընթացքում կկատարվի մոտ 39.0 մլրդ դրամի մարում և կտրվի 5.65

մլրդ դրամի սպասարկման ծախս: Տարեվերջին ներքին պետական պարտքի ծավալը անվանական արժեքով կկազմի մոտ 50.0 մլրդ դրամ: Համեմատության համար նշենք, որ 2003թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքի ծավալը անվանական արժեքով կազմել էր 43.13 մլրդ. դրամ: Պարտքի ժամկետայնությունը 2004թ-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 621 օր (2003թ-ի դեկտեմբերի 30-ի դրությամբ նույն ցուցանիշը եղել է 354 օր), միջին կշռված եկամտաբերությունը՝ 9.8% (2003թ-ի տարեվերջին նույն ցուցանիշը եղել է 13.7%):

2004թ-ի համար նախատեսված սպասարկման ծախսերի տնտեսումը պայմանավորված է տարվա ընթացքում կատարված պետական պարտատոմսերի տեղաբաշխման ժամկետայնության աճով (շնորհիվ հիմնականում 5 տարի մարման ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխումների և 7 տարի մարման ժամկետով արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման) և տոկոսադրույքների իջեցմամբ (ընթացիկ տարում թողարկված պարտատոմսերի տեղաբաշխման եկամտաբերությունը կազմել է 7.8%, իսկ 2003թ-ի տարեվերջի դրությամբ համապատասխան ցուցանիշը եղել է 13.5%): Նշենք նաև, որ տարվա սկզբում ըստ եռամսյակների դեֆիցիտի ֆինանսավորման ծրագրված թվերից փաստացիի զգալի շեղում է գրանցվել առաջին եռամսյակում՝ 2.0 մլրդ դրամի փոխարեն -0.3 մլրդ դրամ, որը պայմանավորված է կառավարության համար շուկայում ձևավորված բարենպաստ իրավիճակով (պետական պարտատոմսերի թողարկման ծավալի նկատմամբ պահանջարկի գերազանցում 2.7 անգամ, եկամտաբերությունը իջել է 2-2.5 տոկոսային կետով), երկրորդ և երրորդ եռամսյակում հաջողվեց ապահովել դեֆիցիտի ֆինանսավորման դրական մեծություն, աճողական կարգով ապահովելով տարվա համար նախատեսված 5.3 մլրդ դրամը (դեֆիցիտի ֆինանսավորումը պարտատոմսերի հաշվին 2004թ-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 5.4 մլրդ դրամ), հետևաբար չորրորդ եռամսյակում այս ցուցանիշը գրոյական կլինի: 2004թ-ի չորրորդ եռամսյակում դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կողողինացման շրջանակներում կթողարկվեն նաև 4.5 մլրդ. դրամ ծավալով լրացուցիչ պարտատոմսեր որոնց մարումը կկատարվի դեկտեմբերի 28-30 ընկած ժամանակահատվածում: Սույն պարտատոմսերից հասույթը որպես ավանդ ներդրվելու է ՀՀ կենտրոնական բանկում: 2004թ-ի ընթացքում բոլոր ամիսներին ներքին պարտքի կառավարման ռազմավարական խնդիրների լուծման նպատակով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը իրականացրել է հետզմումներ՝ 9 ամսվա կտրվածքով ավելի քան 1.6 մլրդ. դրամ ծավալով: Դրանով նպատակ էր հետապնդվում ազատվել թանկ պարտքի սպասարկումից (որոնց եկամտաբերությունը բարձր էր ամբողջ ներքին պարտքի եկամտաբերությունից), և բարձր եկամտաբերությամբ պարտատոմսերը փոխարինել ավելի էժան և երկարաժամկետ պարտատոմսերով: Միաժամանակ հետզմման պարբերական բնույթը զգալիորեն նպաստում է պարտատոմսերի իրացվելիության աճին:

2004թ-ի ընթացքում ՀՀ ԿԲ-ը, իր դրամավարկային քաղաքականության ծրագրի իրականացման շրջանակներում պետական պարտատոմսերի շուկայում հանդես եկավ առքի առաջարկով՝ ԿԲ պորտֆելը համալրելով 5.0 մլրդ դրամի պարտատոմսերով: 2004թ-ը հատկանշական է նաև նրանով, որ կառավարությանը հաջողվեց տեղաբաշխել նոր երկարաժամկետ 7 տարի մարման

ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր՝ 1.5 մլրդ. դրամ ընդհանուր ծավալով, որոնց նկատմամբ պահանջարկը եղել է եռակի՝ 4.3 մլրդ. դրամ: Կարևորագույն ձեռքբերում է նաև այն, որ ներքին պարտքի շրջանառող ծավալում միջին ժամկետայնության պարտատոմսերի տեսակարար կշիռը աճեց և տարեվերջին կկազմի մոտ 75%:

2005թ-ին շարունակվելու է պարտքի կառավարման հաստատված ռազմավարության շրջանակներում ներքին պետական պարտքի կառավարման գործընթացը, գլխավոր նպատակը մնում է նույնը՝ ներքին պարտքի էժանացումն ու ժամկետների երկարացումը, պարտքային նոր երկարաժամկետ գործիքների ներդրումը: Այս նպատակի իրագործման շրջանակներում ենթադրվում է բյուջեում նախատեսել 7,300.0 մլն. դրամ սպասարկման ծախս, ապահովելով 6,000.0 մլն. դրամ դեֆիցիտի ֆինանսավորում: 2005թ-ի վերջին ներքին պետական պարտքի ծավալը կկազմի 58.0-60.0 մլրդ. դրամ, միջին ժամկետայնությունը՝ կհասցվի 2.5 տարի, միջին եկամտաբերությունը 2005թ-ի վերջին ընթացիկ տարվա համեմատ հնարավոր է աճի՝ պայմանավորված երկարաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխմամբ և շրջանառությունում դրանց տեսակարար կշռի ավելացմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Արտաքին աղբյուրներից 2004թ. պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված միջոցների ամբողջությամբ ստանալու դեպքում, Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը (ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի վարկային պարտավորություններ և տրամադրված արտաքին երաշխիքներ) 2004 թվականի վերջին կկազմի մոտ 1129 մլն ԱՄՆ դոլար:

2004 թվականի ընթացքում արտաքին պարտավորությունների գծով կստացվի մոտ 110.9 մլն ԱՄՆ դոլար, որից ՀՀ կառավարության պարտավորությունների 82.9 մլն ԱՄՆ դոլար (այդ թվում ՀՀ կառավարության կողմից տրամադրված երաշխիքների գծով՝ 5.5 մլն ԱՄՆ դոլար) և ԿԲ գծով մոտ 28 մլն ԱՄՆ դոլար, և կկատարվի մոտ 88.6 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում (այդ թվում 54.1 մլն ԱՄՆ դոլար ՀՀ կառավարության պարտավորությունների և նրա կողմից տրամադրված երաշխիքների գծով, որից 3.7 մլն ԱՄՆ դոլար Լիմսի հիմնադրամի կողմից տրամադրված անտոկոս վարկի մարում և 31 մլն. ԱՄՆ դոլարը որպես գույք-պարտքի դիմաց բանաձևով ռուսական վարկերի մարում): 2003 թվականի տարեվերջի համեմատ ՀՀ արտաքին պարտքը կաճի մոտ 31.5 մլն ԱՄՆ դոլարով²⁷:

²⁷ Տարեկան կտրվածքով ստացումների և մարումների արդյունքում ստացվող պարտքի հաշվարկային գումարի և տնքստում ներկայացված պարտքի գումարի տարբերությունը պայմանավորված է տարեկան արժույթների արժույթների փոխարժեքների (հիմնականում SDR/ ԱՄՆ դոլար և Եվրո/ԱՄՆ դոլար) տարբերություններով:

31.12.03 դրությամբ 1SDR= 1.48597 USD և 1EURO= 1.263 USD

31.12.04 դրությամբ 1SDR= 1.49 USD և 1EURO= 1.26 USD (կանխատեսում)

ՀՀ արտաքին պարտքի մեջ գամբյուղի մեջ SDR-ով և EURO-ով տրամադրված վարկերը կազմում են ավելի քան 92%:

2004 թվականի ընթացքում արտաքին պետական պարտքի գծով ընդհանուր սպասարկումը կկազմի մոտ 98.3 մլն ԱՄՆ դոլար: Միայն ՀՀ կառավարության գծով (ներառյալ երաշխիքների սպասարկումը) 2004 թվականին այն կկազմի մոտ 62.5 մլն ԱՄՆ դոլար, որից 54.1 մլն ԱՄՆ դոլար՝ մարում և 8.4 մլն ԱՄՆ դոլար՝ տոկոսավճար: ՀՀ կենտրոնական բանկի պարտավորությունների գծով սպասարկումը կկազմի մոտ 35.8 մլն ԱՄՆ դոլար, որից 34.5 մլն ԱՄՆ դոլար՝ մարում և 1.3 մլն ԱՄՆ դոլար՝ տոկոսավճար:

2005 թվականի ընթացքում, ՀՀ ԱՊՊ գծով նախատեսվում է ստանալ մոտ [93.6]² մլն ԱՄՆ դոլարի արտաքին միջոցներ՝ ամբողջությամբ ՀՀ կառավարության պարտավորությունների գծով: 2005 թվականի ընթացքում ԱՊՊ գծով նախատեսվում է սպասարկել (ներառյալ երաշխիքների սպասարկումը) մոտ 61.2 մլն ԱՄՆ դոլար՝ 50.6 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարման գծով և 10.6 մոտ մլն ԱՄՆ դոլար որպես տոկոսավճար, այդ թվում ՀՀ կառավարության պարտավորությունների գծով մոտ 15.884 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում և 9.44³ մլն ԱՄՆ դոլարի տոկոսավճար: Հաշվի առնելով վերը նշվածը, 2005 թվականի վերջին ՀՀ ԱՊՊ կկազմի մոտ 1172 մլն ԱՄՆ դոլար դոլար:

2006-2007 թվականների ընթացքում նախատեսվում է ստանալ համապատասխանաբար [79.8] և [83.7] մլն ԱՄՆ դոլար՝ ամբողջությամբ ՀՀ կառավարության պարտավորությունների գծով, և միաժամանակ իրականացնել 48.6 և 39.8 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում, որից ՀՀ կառավարության պարտավորությունների և տրամադրված արտաքին երաշխիքների գծով 17.1 և 16.8 մլն ԱՄՆ դոլար:

Վերջին տարիներին արձանագրվել է Հայաստանի Հանրապետության ԱՊՊ զամբյուղի արտոնյալության զգալի աճ: Եթե 2003թ. վերջի դրությամբ արտոնյալ պայմաններով տրամադրված վարկերը կազմում էին ՀՀ արտաքին պետական պարտքի զամբյուղի 93%-ը, ապա 2004թ. վերջի դրությամբ այդ ցուցանիշի ակնկալվող մեծությունը կկազմի մոտ 98%-ը: Վերջինս իր հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ վարկային պարտավորությունների միջին կշռված տոկոսադրույքը 2004 թվականին չի գերազանցի 1.5%-ը:

2005-2007 թթ. պարտքը բնութագրող ցուցանիշները կգտնվեն նվազ և միջին պարտքի բեռ ունեցող երկրների ցուցանիշների սահմաններում:

2. 2004-2006թթ. օգտագործումները համաձայն Բյուջետային բյուլի կանխատեսումների

3 Սպասարկման կանխատեսումները կատարվել են 1SDR= 1.49 USD և 1EURO= 1.26 USD, ինչպես նաև Libor-ի միջին տարեկան տոկոսադրույքը մոտ 4%

ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) կողմից ՀՀ պարտադիր սոցիալական ապահովագրության 2005 թվականի բյուջեի նախագիծը կազմելիս նպատակ է դրվել Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսվող բարեփոխումներին և սոցիալական պաշտպանության համակարգի կատարելագործման խնդիրներին զուգահեռ, ապահովել պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների (այսուհետ՝ սոցիալական վճարներ) արդյունավետ հավաքագրումը, պետական սոցիալական ապահովագրության ծրագրերի ժամանակին ֆինանսավորումը:

ՀՀ պարտադիր սոցիալական ապահովագրության 2005 թվականի բյուջեի նախագծի՝

ա) եկամտային մասը հաշվարկվել է՝ «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ գործող օրենսդրության պահանջների հիման վրա,

բ) ծախսային մասը հաշվարկվել է՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների կողմից տրված առաջարկությունների (բազային ցուցանիշներ), ինչպես նաև 2005թ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով հաստատված չափաքանակների հիման վրա:

I Ե Կ Ա Մ ՈՒ Տ Ն Ե Ր

ՀՀ պարտադիր սոցիալական ապահովագրության 2005 թվականի բյուջեի նախագծի եկամտային մասի հաշվարկման համար հիմք է ընդունվել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից առաջարկված Հայաստանի Հանրապետությունում աշխատողների կանխատեսվող միջին ամսական ցուցակային թվաքանակը՝ 452000 մարդ, աշխատանքի վարձատրությանն ուղղվող և դրանց հավասարեցված միջոցների (աշխատավարձի) տարեկան ֆոնդը՝ 275300.0 մլն դրամ, որի աճը 2004 թվականի նկատմամբ կազմում է 60300.0 մլն դրամ կամ 28.1%:

Հաշվի առնելով ապահովագրողների կողմից հայտարարագրված աշխատավարձի ֆոնդի և աշխատողների թվաքանակի, ինչպես նաև սոցիալական վճարների 2002-2003 թթ. տարեկան, կիսամյակային և 2004 թվականի I կիսամյակի համապատասխան փաստացի ցուցանիշները, 2005 թվականին նախատեսվում է հավաքագրել՝

Աղյուսակ 3

(հազար դրամ)

Եկամուտների անվանումը	2004թ. հաստատված բյուջե	2005թ. բյուջեի նախագիծ	2005թ. բյուջեի նախագիծը 2004թ. հաստ. բյուջեի նկատ	
			աճ կամ նվազ.	%
գործատուներից	43.275.120,0	49.772.600,0	6.497.480,0	15.0
մուտքեր ժամկետանց պարտքի մարումից և վարչար. բարելավումից	-	2.700.000,0	2.700.000,0	-
վարձու աշխատողներից	6.410.860,0	10.061.700,0	3.650.840,0	56.9
անհատ ձեռներեցների (ձեռնարկատերերի) եկամուտներից	720.000,0	1.860.600,0	1.140.600,0	158.4
Ընդամենը սոցիալական վճարներ	50.405.980,0	64.394.900,0	13.988.920,0	27.8
տարեվերջի մնացորդ	2.594.020,0	1.000.000,0	-1.594.020,0	38.6
Ընդհանուր սոցիալական վճարներ	53.000.000,0	65.394.900,0	12.394.900,0	23.4

Նախատեսվում է պաշտոնական տրանսֆերտներ ստանալ ՀՀ պետական բյուջեից 19.708.665,9 հազար դրամի չափով, աճը 2004 թվականի հաստատված բյուջեի՝ 15.258.907,7 հազար դրամի նկատմամբ կազմում է 4.449.758,2 հազար դրամ (29.2%) :

Հիմնադրամի եկամտային մասում ՀՀ պետական բյուջեից հատկացվող 19.708.665,9 հազար դրամի չափով պաշտոնական տրանսֆերտները նախատեսված են՝

- սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման -9229563.2 հազ.դրամ,

-շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման - 1463527.8 հազ.դրամ,

-սոցիալական կենսաթոշակներ- 2628937.5

-ՀՀ պետական բյուջեից «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով նախատեսված ապահովագրական ստաժի համար ֆինանսավորում- 953939.0 հազ.դրամ

-երեխայի ծննդյան միանվագ նպաստ- 1207500.0 հազ.դրամ

-գրադվածության պետական ծրագրերի, այդ թվում՝

ա) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և աշխատատեղեր ստեղծելու նպատակով գործազուրկների ֆինանսական աջակցության –50.0 հազ.դրամ,

բ) աշխատաշուկայում խոցելի խմբերին աշխատանքի ընդունելու դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման –74.0 հազ.դրամ,

հղիություն և ծննդաբերության նպաստ-655020.0 հազ.դրամ

ՀՀ օրենքներով և ՀՀ կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակներ, դրամական օժանդակություն և հավելում կենսաթոշակին -134647.0 հազ.դրամ,

- աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման- 45610.0 հազ.դրամ,

- մինչև 2 տարեկան երեխա խնամող և մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց տրվող ամենամսյա նպաստներ-256459.0 հազ.դրամ

- վետերանների պատվովճար-510000.0 հազ.դրամ

- ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում. նշված պատճառներով հաշմանդամ դարձածներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրում –1499462.7 հազ.դրամ:

Այսպիսով, ՀՀ պարտադիր սոցիալական ապահովագրության 2005 թվականի բյուջեի ընդհանուր եկամուտները կկազմեն 85.103.565,9 հազար դրամ (65.394.900,0 + 19.708.665,9), աճը 2004 թվականի հաստատված բյուջեի՝ 68.258.907,7 հազար դրամի, նկատմամբ կկազմի 16.844.658,2 հազար դրամ (24.7%):

II Ծ Ա Խ Ս Ե Ր

ՀՀ պարտադիր սոցիալական ապահովագրության 2005 թվականի բյուջեի ծախսերի հաշվարկման համար հիմք են ընդունվել

ա) հիմնական կենսաթոշակի չափերը՝

~ I – III ամիսների համար (գործող չափը) 3000 դրամ,

~ IV - XII ամիսների համար (նախատեսվող չափը) 4000 դրամ,

բ) ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը՝ 160 դրամ:

Ապահովագրական և սոցիալական կենսաթոշակառուների ընդհանուր թվաքանակը, միջին աշխատանքային ստաժի տևողությունը, ինչպես նաև զբաղվածության, սոցիալական ապահովագրության առանձին պետական ծրագրերի բազային ցուցանիշները:

1. Կենսաթոշակային ապահովագրություն

Ընդհանուր առմամբ հիմնադրամի միջոցների հաշվին իրականացվող կենսաթոշակային ապահովագրության 2005 թվականի ընդհանուր ծախս է նախատեսվել

Աղյուսակ 4

Կենսաթոշակային ապահովագրություն ծախսեր	2004թ. հաստատված բյուջե	2005թ. բյուջեի նախագիծ	(հազար դրամ)	
			2005թ. բյուջեի նախագիծ 2004թ. հաստ. բյուջեի նկատմամբ	
			աճ կամ նվազ.	%
Կենսաթոշակ. ապահովագր. ընդհանուր ծախսերը որից՝	47.922.338,4	61.564.439,1	13.642.100,7	28.5
~ կենսաթոշակներ	45.546.188,8	57.906.494,4	12.360.305,6	27.1
~ թաղման նպաստ	1.714.500,0	1.912.500,0	198.000,0	11.5
~ վճարումների ծառայությունների վարձավճար	661.649,6	837.465,9	175.816,3	26.6
~ տարվա ընթացքում ապահովագր. կենսաթոշակների չափերի ավելացման համար նախատեսված լրացուցիչ գումար	-	1.861.917,8	1.861.917,8	
~ ապահովագր. ստաժում հաշվառված այլ բնույթի գործունեության ժամանակահատվածների ֆինանսավորում (ՀՀ պետ. բյուջեից)	-	953.939,0	953.939,0	

1.1. Կենսաթոշակներ

2005 թվականին նախատեսվում է կենսաթոշակներ վճարել ընդամենը 542614 (2004թ. 542023-ի դիմաց) կենսաթոշակառուների, որից ապահովագրական՝ 487550 (2004թ. 484833-ի դիմաց), սոցիալական՝ 45008 (2004թ. 46197-ի դիմաց), շարքային զինծառայողներ՝ 18132 (2004թ. 19937-ի դիմաց), որից կրկնակի կենսաթոշակ ստացողներ 8076 (2004թ. 8944-ի դիմաց):

Նշված ծրագրերի իրականացման համար, հիմք ընդունելով նախատեսվող բարձրացումները, կատարված հաշվարկներով անհրաժեշտ ֆինանսական միջոցների ընդհանուր ծախսերը կկազմեն՝

Աղյուսակ 5

(հազար դրամ)

Կենսաթոշակների ծախսեր	2004թ. հաստատված բյուջե	2005թ. բյուջեի նախագիծ	2005թ. բյուջեի նախագիծը 2004թ. հաստ. բյուջեի նկատմամբ	
			աճ կամ նվազ.	%
ապահովագրական	45.546.188,8	57.906.494,4	12.360.305,6	27.1
սոցիալական	1.969.056,0	2.393.515,5	424.459,5	21.6
շարքային զինծառայող	2.426.497,0	2.200.947,9	- 225.549,1	10.2

Վերջին երկու ծախսերը փոխհատուցվում են ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին փոխհատուցվում են մակ սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման համար - 9229563.2 հազ.դրամ:

1.2. Թաղման նպաստ

Հաշվարկման համար հիմք է ընդունվել հիմնադրամի տարածքային կենտրոնների կողմից մահացած կենսաթոշակառուների մասին ներկայացված հաշվետվությունները: Ապահովագրական և սոցիալական մեկ կենսաթոշակառուի թաղման նպաստի չափը կազմում է I – III ամիսներին - 75.000 դրամ, IV - XII ամիսներին - 100.000 դրամ (հիմնական կենսաթոշակի գործող չափի՝ I – III ամիսների համար 3000 դրամի, նախատեսվող չափի՝ IV - XII ամիսների համար 4000 դրամի, 25-ապատիկը), իսկ շարքային զին.ծառայողներինը՝ միջին ամսական կենսաթոշակի 15-ապատիկը: Կատարված հաշվարկներով թաղման նպաստի ընդհանուր ծախսերը կկազմեն՝

Աղյուսակ 6

(հազար դրամ)

Թաղման նպաստի ծախսեր	2004թ. հաստատված բյուջե	2005թ. բյուջեի նախագիծ	2005թ. բյուջեի նախագիծը 2004թ. հաստ. բյուջեի նկատմամբ	
			աճ կամ նվազ	%
ապահովագրական	1.714.500,0	1.912.500,0	198.000,0	11.5
սոցիալական	162.900,0	199.125,0	36.225,0	22.2
շարքային զինծառայող	230.112,0	228.566,7	-1.545,3	0.7

Վերջին երկու ծախսերը փոխհատուցվում են ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

1.3 Վճարումների ծառայությունների վարձավճար

Կենսաթոշակների և թաղման նպաստների վճարումների ծառայությունների դիմաց վարձավճարը հաշվարկվել է համաձայն «Հայփոստ» ՊՓԲՀ և «Հայխնայբանկի» հետ կնքված պայմանագրերի, ինչպես նաև հիմնադրամի վճարման ծառայության տվյալների, որի արդյունքում ծախսերը կկազմեն՝

Աղյուսակ 7

(հազար դրամ)

Վճարումների ծառայությունների վարձավճարի ծախսեր	2004թ. հաստատված բյուջե	2005թ. բյուջեի նախագիծ	2005թ. բյուջեի նախագիծը 2004թ. հաստ. բյուջեի նկատմամբ	
			աճ կամ նվազ.	%
ապահովագրական	661.649,6	837.465,9	175.816,3	26.6
սոցիալական	41.371,8	36.297,0	- 5.074,8	12.3
շարքային զինծառայող	37.191,8	34.013,2	- 3.178,6	8.5

Վերջին երկու ծախսերը փոխհատուցվում են ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին։

2. Ջրաղվածության պետական ծրագրերի իրականացման համար միջոցների տրամադրում

Հաշվարկները կատարվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության կողմից տրամադրված բազային ցուցանիշների հիման վրա, նպաստի առաջարկվող չափով (7800 դրամ), որի արդյունքում անհրաժեշտ միջոցների ընդհանուր ծախսերը կկազմեն՝

Աղյուսակ 8

Ջրաղվածության պետական ծրագրերի ծախսեր	2004թ. հաստատված բյուջե	2005թ. բյուջեի նախագիծ	2005թ. բյուջեի նախագիծ 2004թ. հաստ. բյուջեի նկատմամբ	
			աճ	%
	725.461,6	910.506,2	185.044,6	25.5

3. Սոցիալական ապահովագրության առանձին պետական ծրագրեր

Նշված ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ծախսերը կկազմեն՝

Աղյուսակ 9

(հազար դրամ)

Սոցիալական ապահովագր. առանձին պետական ծրագրերի ծախսեր	2004թ. հաստատված բյուջե	2005թ. բյուջեի նախագիծ	2005թ. բյուջեի նախագիծ 2004թ. հաստ. բյուջեի նկատմամբ
---	-------------------------------	---------------------------	--

			աճ կամ նվազ.	%
Ժամանակավոր անշխատունակության նպաստ	919.480,0	1.126.954,7	207.474,7	22.6
աշխատող քաղաքացիների թաղման կապակցությամբ տրվող նպաստ	18.000,0	17.500,0	-500,0	-2.8
հղիության և ծննդաբերության	655.020,0	-	-	-
երեխայի ծննդյան միանվազ նպաստ	1.207.500,0	-	-	-
Ընդամենը	2.800.000,0	1.144.454,7	-1.655.545,3	59.1

Վերջին երկու ծախսերը 2005թվականից փոխհատուցվելու են ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

4. Սոցիալական ապահովագրության միջազգային ասոցիացիայի նախաձեռնած աշխատանքները

Ծախսը հաշվարկվել է ասոցիացիայից ստացված փաստաթղթերի (կնքված պայմանագրերի) հիման վրա՝

Աղյուսակ 10

(հազար դրամ)

Սոցիալական ապահովագրության միջազգային ասոցիացիայի նախաձեռնած աշխատանքները	2004թ. հաստատված բյուջե	2005թ. բյուջեի նախագիծ	2005թ. բյուջեի նախագիծը 2004թ. հաստ. բյուջեի նկատմամբ	
			աճ	%
	5.700,0	6.000,0	300,0	5.3

5. ԱՊՀ երկրների կենսաթոշակային և սոցիալական հիմնադրամների ներկայացուցչությունների ասոցիացիայի նախաձեռնած աշխատանքները

Ծախսը հաշվարկվել է ասոցիացիայից ստացված փաստաթղթերի (կնքված պայմանագրերի) հիման վրա՝

Աղյուսակ 11

(հազար դրամ)

ԱՊՀ երկրների կենսաթոշակային և սոցիալական հիմնադրամների ներկայացուցչությունների ասոցիացիայի նախաձեռնած աշխատանքները	2004թ. հաստատված բյուջե	2005թ. բյուջեի նախագիծ	2005թ. բյուջեի նախագիծը 2004թ. հաստ. բյուջեի նկատմամբ	
			աճ	%
	13.500,0	16.000,0	2.500,0	18.5

6. ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի համակարգի պահպանումն ապահովելու միջոցառում

Հաշվարկները կատարվել են նախորդ տարիների ծախսերի դինամիկայի և գործող նորմատիվների հիման վրա

Աղյուսակ 11

Համակարգի պահպանման և զարգացման ծախսեր	2004թ. հաստատված բյուջե	2005թ. բյուջեի նախագիծ	2005թ. բյուջեի նախագիծը 2004թ. հաստ. բյուջեի նկատմամբ	
			աճ	աճ
	1.533.000,0	1.753.500,0	220.500,0	14.4

(հազար դրամ)

Անհրաժեշտ է նշել որ **2005 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցները կծախսվեն** նաև հետևյալ ուղղություններով՝

-երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարման համար -1207500.0 հազ.դրամ, հղիություն և ծննդաբերության նպաստի վճարման համար -655020.0 հազ.դրամ, ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու և աշխատատեղեր ստեղծելու նպատակով գործազուրկներին ֆինանսական աջակցության համար -50.0 հազ.դրամի չափով, աշխատաշուկայում խոցելի խմբերին աշխատանքի ընդունելու դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցում կտրվի – 74.0 հազ.դրամի չափով, ՀՀ օրենքներով և ՀՀ կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակների, դրամական օժանդակություն և կենսաթոշակին հավելում տալու համար -134647.0 հազ.դրամ, աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման համար- 45610.0 հազ.դրամ, մինչև 2 տարեկան երեխա խնամող և մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց տրվող ամենամսյա նպաստների վճարման համար- 256459.0 հազ.դրամ, վետերանների պատվովճարի վճարման համար -510000.0 հազ.դրամ և ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում. նշված պատճառներով հաշմանդամ դարձածներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրման համար –1499462.7 հազ.դրամ:

Այսպիսով, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի 2005 թվականի բյուջեի ընդհանուր ծախսերը կկազմեն՝ 85.103.565,9 հազար դրամ (65.394.900,0 + 19.708.665,9), աճը 2004 թվականի հաստատված բյուջեի՝ 68.258.907,7 հազար դրամ, նկատմամբ կկազմի 16.844.658,2 հազար դրամ (24.7%):

Հայաստանի Հանրապետության պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի եկամուտների և ծախսերի նախորդ տարվա փաստացի և ընթացիկ տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների համեմատականն արտահայտված է սույն բացատրագրի N 6 աղյուսակում:

